

35-36(638-639)

31.12.2021

Հրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն և գիտարար, իմանալ զբանս հանճարով

ԼՍՐԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

ԱՄԱՆՈՐՅԱ ՆԿԵՐՆԵՐ ԱՊՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՁԵՎՈՎ

Աղբրեջանի ազգայնական տրամադրված լրատվամիջոցները բացահայտ դժգոհում են ռուսական խաղաղապահ գործառնության կողմից Արցախի Հանրապետության տարածքում իրականացվող մարդասիրական նախաձեռնություններից՝ նշելով, թե իբր 2020 թվականի նոյեմբերին նախ համաձայնագրում սնան կետ չկա: Ջարմանալի է, որ այս բնույթի հրապարակումներում նախկին զգուշացումները այլևս չկան, ինչը հրապարակի շուրջ պայմանավորվածության առաջին ամիսներին թերևս նկատելի էր:

Խոսքը վերաբերում է ոչ միայն ԱՀ պաշտպանության բանակի ներկայությունը հանդուրժելուն, որին ազգայնական վանում են «բանդիտական կազմավորումներ», այլև վերջին օրերին Ամանորի կապակցությամբ ռուս խաղաղապահների կողմից արցախցի մանուկներին նվերներ բաժանելուն: Ըստ Caliber.az-ի, օրինակ, նույն բանը կարող են մեծագույն հաջողությամբ կատարել աղբրեջանական բանակի «Յաշմա» հատուկ ջոկատայինները: Եթե սա պարզապես ծաղր է, ապա հարկ է հիշեցնել մեր հարևաններին, թե Պաշտպանության բանակի 18 տարեկան մարտիկներն ինչպես էին դաս տալիս հատուկ պատրաստված «յաշմաներին», երբ վերջիններս սաղարաններ էին իրականացնում դարաբաղա-աղբրեջանական շփման գծում: Իսկ քառասունչորս տարեկան պատերազմի ելքը, Բաքվում դա լավ գիտեն, շատ հարաբերական է, և նրանց ակնհայտորեն հուսահատեցնում է ՊԲ մշտագոյության փաստը, հավելյալ՝ եռակողմ համաձայնեցված խաղաղապահների վստահելի ներկայությունը Արցախում՝ միջազգայնորեն ընդունելի մարդասիրական կանոնների ապահովմամբ:

Ինչից են դժգոհ ազգայնները. գո՞ւցե այն բանի համար, որ նրանց այդպես էլ չհաջողվեց ոչնչացնել Արցախի սուբյեկտայնությունը, թեպետ այդ նպատակով ներգրավել էին մերձավորարևելյան ծագման ահաբեկչական խմբեր՝ էրդոհանյան թուրքիայի ռազմական ակտիվ օժանդակությամբ: Եվրոպայի խորհրդում, սակայն Աղբրեջանի պարզ հասկացրել են ռազմական ուժի կիրառմանը հիմնախնդրի լուծման անհնարիությունը, ինչը նշանակում է թուրք-ազերական և այս տանդեմի նկրտումներին աջակցող ուժերի ծրագրերի տապալում:

Հիմնախնդիրը մնում է չլուծված, և սա համընդունվում է միջնորդ երկրների կողմից, իսկ լուծման փնտրտուքները պետք է զուգակցվեն մարդասիրական տարաբնույթ ծրագրերի իրականացմամբ, որոնց մի բաղադրիչն էլ ամանորյա նվերներ բաժանելն է հակամարտության գոտում ապրող մանուկներին: Աղբրեջանը երեխաների երջանկությունը պատկերացնում է նրանց հրթիռակոծելով ու զնդակոծելով, ինչն արել է 30 տարի շարունակ: Այսուհետև ևս նա հակված է նույնատիպ «նվերներ» մատուցել հայերին, եթե, իհարկե, հեթանոսական անգամ դա նրան արտոնվի: Բայց, ինչպես ասում են, այլ ժամանակներ են հիմա, աշխարհաքաղաքական իրողությունները՝ միանգամայն ուրիշ: Արցախն աստիճանաբար շտկում է կորացած մեջքը՝ դուրս գալով հետպատերազմյան ընկճվածությունից: Հավատանք, որ 2022 թվականին համազգային վերհանումն ապահովելի և սեփական կյանքի ուրվագծելով գալիք աղբրեջանական արշավույթը:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

«ԼՍՐԱՐԱՐ»

Բարձրացնենք սիրով մեր սուրբ գավաթը Հանուն Հայուլթյան, Թող անմար պահի նա իր Հավատը հուր ու Հավիտյան: Ուր լինենք, Հավետ մեր լույս փարոսը տունն է Հայրենի: Մաշտոցի Հզոր լեզուն վառ հույսն է ամեն մի Հայի:

ԱՇ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐ ԼՈՒՍԻՆԵ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻ ԱՄԱՆՈՐՅԱ ՈՒՂԵՐՁԸ



Սիրելի՛ հայրենակիցներ, 2021 թվականը, հիրավի, ծանր ու փորձություններով լի էր նաև կրթամշակութային ու սպորտի համակարգի համար: Հոգու կսկիծով ու մրմուռով մեկիկ-մեկիկ հաշվեցինք ու հաշվառեցինք համակարգի կորուստները: Հուսալքության ու հուսափառության ամենախորքային ծավալումներով շարունակեցինք ու շարունակում ենք գործել բզկտված, օկուպացված, արյամբ ռոզզված հայրենիքում, քնում և արթնանում ենք պատերազմի մղձավանջով: Նախարարության օրակարգային խնդիրներ են շարունակում մնալ տեղահանված ու անաշխատ մնացած ուսուցչության զբաղվածությունը, տեղահանված աշակերտության համար նոր շենքային պայմանների ձեռքբերումը, օկուպացված տարածքների պատմամշակութային ժառանգության պահպանման ու պաշտպանության պայքարը, կրթության որակի շարունակական բարձրացման մարտահրավերներին օրավուր ծիշու դիմակայելը: Այնուհանդերձ, մենք կարողացել ենք պատերազմից հետո արագ ինքնակազմակերպվել ու որոշակի աշխատանքներ տանել տեղահանված աշակերտության և ուսուցչության խնդիրները մեղմելու ուղղությամբ:

Անցնող տարին նշանավորվեց մեկ կարևոր կրթական իրադարձությամբ: Պա «Երկարօրյա դպրոց» բարեփոխող ծրագրի ներդրումն էր, որի աշխարհագրությունը կրճարձակվի շուրջ 48 համայնքներում, և որը կդիտվի տեղահանված ուսուցչության աշխատանքով ապահովելու և մեկ հնարավորություն: Կարևորում են «Դասավանդիչի Հայաստան»-ի հետապատերազմյան համայնքախմբի ծրագրերը, «Արմաթ»-ների տեղադրումը, որոնք շարունակական կլինեն նաև 2022-ին, և մենք կհասնենք տեխնոլոգիական հասարակության ստեղծմանը: Արցախում արդեն առևտրայնացվում է գիտական արդյունքը, իսկ 2022-ին՝ ինտելեկտուալ ու գիտաճանապարհների ստեղծումը, որոնց գործունեությունն ու աշակերտության մասնակցությունը կդառնան կենսակերպ: Հունվարից բացվելիք կիրակնօրյա դպրոցներով մատաղ սերնդին կտողորենք կենդանի և ազդու հոգևորությամբ: Կրթության, գիտության, մշակույթի մշակների բոլորանվեր ուժերի մեկտեղմամբ մենք կարողնակենք գրել մեր՝ Արցախի հայկականության և անկախության պատմությունը, մեր պայքարի ընթացքը...

Կհամայնքվենք ու կմեկտեղենք ազգի ներուժը՝ Արցախը դարձնելով գիտակրթական գրավիչ միջավայր: 2022-ը կլինի կրթական նոր համագործակցությունների, հանրակրթական բարեփոխումների, մասնավորապես, ուսուցչների և մարտահրավերներին օրավուր ծիշու դիմակայելը: Այնուհանդերձ, մենք կարողացել ենք պատերազմից հետո արագ ինքնակազմակերպվել ու որոշակի աշխատանքներ տանել տեղահանված աշակերտության և ուսուցչության խնդիրները մեղմելու ուղղությամբ:

ոչ ոք չի կարող օտարել մեզմից, և որոնք կշարունակեն մնալ մեր հույսի ու հավատի մշտա-հոս աղբյուրը, մեր ինքնության պայքարը: Իսկ քոչվորականության, արյունահեղության, բարբարոսության պարտիզան դատապարտված է ծախողման: Սա չեն ասում որպես արդարության հավատացյալ, պարզապես արյան ծովը չի ցամաքում, այն նոր կյանքեր է մկրտում ու ոգեշնչում նոր արարումների: Մեր վարքականոցը կա ու կլինի աշխատանքը, կրթական, գիտական ու արվեստի արժեքներ ստեղծելը, ինքնությունը պահելը, սպորտային բոլոր սահմանները հատելը: Մեր կերպը ոգին է, որով դարձանք հարատևության խորհրդանիշ: 2022-ը ևս պետք է դառնա վերածննդի ու նվաճումների տարի՝ անառարկելի ու հաստատուն:

Մենք թերևս կշարունակենք քնել ու արթնանալ պատերազմի հետ՝ աչքերում ունենալով նահատակված զինվորների ու ազատամարտիկների անխոս տառապանքը: Նվիրվածությամբ, չարքաշությամբ, տքնաջան աշխատանքով ու գոհաբերությամբ մենք կարող ենք ու բորբոք կպահենք ըղձական գալիքի հույսը: Թող իսպառ կորչեն դասալքությունը, անմիաբանությունը, անհամեստությունը, չարախոսությունը, պատեհապաշտությունը, ջժմանքը, անպատասխանատվությունն ու անհետևողականությունը, և փոխարենը՝ օրը սկսենք ու մարտնչությունը սակավապետությամբ, անանձնական մոլորմանը՝ անախույժությունը, ջժմանքը, անմահների հրամանին: Ու եթե լինելու է ուրախություն կամ հաջողություն, ապա թող դա լինի համընդհանուր ու հավաքական: Շարունակենք լիզել մեր վերքերը, ու կգա հրակարմիր լուսաբացը...

ԱՄԱՆՈՐՅԱ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Երկու տարի է, ինչ խաթարված է մեր կյանքը. համավարակ, պատերազմ, անդառնալի կորուստներ, պատերազմի ծանր հետևանքներ, բազում խնդիրներ, չսպիացող վերքեր: Անցած՝ 2021-ի տարեմուտը լիովին անտեսված էր մեր կողմից հասկանալի պատճառով: Այսօր չես կարող անտեսել մանուկների այն խամրակաշտությունը, ժրջանությունը, որ կապված են Նոր տարվա հետ: Իրոք, տարվա տոներին բոլորի համար ուրիշ խորհուրդ ունի Ամանորը: Տարվա ընթացքում կուտակված հոգսերի ծանրությունը, անցանկալի ու տհաճ իրողությունները, թվում է, թե ամեն Նոր տարվա հետ սերտ ենք մտնել պատմության գիրկը և ապրել նոր ու նորովի կյանքով: Ամբարած հոգեկան բոլոր բեռները փորձում ենք հանձնել անցնող տարուն ու թեթևանալ: Դենց այդ պատճառով էլ այլ է Նոր տարվա առաքելությունը: Հույսով սպասում ենք նրա զարուստին, ու եթե այդ տարին էլ չի արդարացնում իրեն, միևնույն է, հաջորդ նորին ենք սպասում՝ նույն ակնկալիքներով: Ամեն նորի հետ մենք նորանում ենք ու մանկան պարզությամբ հավատում լավին ու բարուն:

Այս պարզ հավատով էլ փորձեցինք ի մի բերել Ասկերանի շրջանի մանկավարժների մտորումները 2022-ի շեմին:

Ռոմելա ԱՎԱՆԵՍՅԱՆ, թոշակառու ուսուցչուհի, գյուղ Պատարա:

- Ըստ էության, մենք բոլորս շատ ենք սիրում Ամանորը: Մեծ թե փոքր, չգիտես ինչու, հավատում ենք, որ տարվա ընթացքում չիրականացած մեր երազանքները կիրականանան Ամանորի գիշերը: Ամանորը... ինչպիսի՞ խամրակաշտությամբ, ի՞նչ հույզերով ու հույսերով դիմավորեցինք 2021 թվականը: Ինչպե՞ս էինք հավատում, որ հրաշագործ Ձմեռ պապը ծիածնագույն երազներ է բերելու... Մի քանի օրից կդիմավորենք 2022 թվականը: Մոլորվել և կորցրել են բոլոր գեղեցիկ հեքիաթներս: Օգնեք, որ նորից գնամ իմ տոնի հետևից, որ գտնեմ հեքիաթներս... Թափվող ճեղքակալի ծյան փաթիլների մեջ չեն կարողանում գտնել ծիածնակալ գույները, տոնական գիշերվա խորհուրդը երևի չզգամ: Ի՞նչ սպասեմ քեզմից, Ամանոր... Հետ են նայում, հետ են գնում, մոլորվում են, շտկվում ու փնտրում այն արև տղաների ոտնահետքերը... ու չեն գտնում: Ես կորցրի դրանք 2020 թվականի այն դաժան թոհուրոհում: Անագորույն էր զարկը թշնամու, Տեր իմ, բավ է մեզ փորձության ենթարկես:

Ամանոր ու Ձմեռ պապ, լսո՞ւմ եք, ես շարունակելու եմ տոկալ, կորցրածը հետ բերելու հանդուգ փորձեր անել, միասնության ու միաբանության կոչ անել իմ ժողովրդին: Այդպես են հրամայում տղաները՝ Ամանուրյան գնդի զինվորները, չիրականացած ու կորսված երազների քաղաք եռաբլուրը: Ի հեճուկս աշխարհի քարացած խղճի՝ շարունակելու եմ հյուսել իմ ամանորյա հեքիաթները, շարունակելու եմ հավատալ, որ այնտեղ՝ վերևում, երկնի կամարում, լույսի և հույսի մոմեր են վառվում: Լսո՞ւմ եք, տղաներ... Արյունով ներկված Արցախ ծաղկելու է, հայերեն են դողալիցելու Ղազանչեցոցի գանգերը, բացելու ենք հայրենական տան դռները: Ձմեռ պապ, հուսախաբ չանես, խնդրում եմ:

Ձմեռ պապ, միաբանիր ազգիս մի խորանի, խաչի շուրջ, ուժ տուր ինձ ասելու:

Շնորհավոր Ամանոր, Արցախ: Շնորհավոր Ամանոր, հերոսածին և արևածին հայրց մայրեր:

Շնորհավոր Ամանոր, եռաբլուր: Իմ անլույս հույսեր, ես ծառանում եմ ընդդեմ մահի...

Շնորհավոր Ամանոր, խիղճը կորցրած աշխարհ:

Տես՝ նաև էջ 2-7

Հովհ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ԹԵՂԵՏԵՎ ԲԱՍՏԸ ՄԵՉ ՇԱՐՎԱՍԵՑ

Թեպետև բախտը մեզ շատ հարվածեց երկար դարերով, ահեղ հարվածով, Թեպետև էպես ցրվեց, տարածեց, Ջրգեց հողեհող, փրճեց ծովեծով, Վկա է սակայն բովանդակ երկիր, Որ մենք կարելիք ապրում ենք կրկին, Եվ ուր հասնում է հայի գիրքն ու գիր, Կենդանի է դեռ հայության ոգին: Եվ թարմ աղմուկով մանկունք մեր մատաղ Առաջ են խաղում լուսավոր տեմչով, Եվ թնդում են դեռ հայի երգն ու տաղ Հարազատ լեզվով, հայրենի շրջանով: Եվ իր փրկական տղերքի տակից Եվնում է ահա հզոր ժողովուրդ, Իր վեհ ճակատին տանջաբեր ու բախտ, Խորունկ հայացքում մեծ կյանքի խորհուրդ: Ո՛վ դուք սրբազան Մասիս, Արագած, Եղ ձեր երկնամուխ գոհար թագերով Եվ որ նրանցից վերև խոյացած Փայլատակում եք լույս-պրակներով: Սահակ ու Մեսրոպ, և շատ պանծալիք, Որ լըցրիք Հայոց աշխարհքն ու սրտեր, Լուսավոր կյանքի սիրով երջանիկ Ու ձրգտում տրվիք-ձրգտել դեպի վեր, Քանի որ դուք կաք, քանի կըմնաք, Հոյակապ այրներ հայության ոգու, Մենք միշտ անասան առաջ տի գնամք, Ինչքան մեր ճաճաբն լինի ահարկու: Եվ տոն կըտոնենք էպես խնդազին, Եվ թող իմանա բովանդակ երկիր՝ Ապրում է անմեռ հայությունը հին, Ապրում են անմահ իրեն գիրքն ու գիր:

ՏԱՐՎԱ ԱՄՓՈՓՈՒՄ

ԿԱՏԱՐՎԱԾԸ` ՀԻՄՔ ՆՈՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ

Դեկտեմբերի 21-ին ԱՅ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը մամլո ասուլիս է հրավիրել, որտեղ ամփոփել է համակարգում 2021թ. կատարված աշխատանքները:

Լ. Ղարախանյանը նշեց, որ 44-օրյա պատերազմից հետո ստեղծված ծանր պայմաններում է համակարգը սկսել իր գործունեությունը և ըստ էության շարունակում է արտակարգ պայմաններում աշխատել: Պատերազմից անմիջապես հետո առաջնահերթը թշնամու կողմից օկուպացված Արցախի տարածքներից տեղահանված աշակերտների կարիքների և 1617 ուսուցիչների հաշվառումն էր այստեղ և 33-ում: Օրակարգ է մտցվել վերջիններիս աշխատանքով ապահովելու խնդիրը: Նախարարը հորդորել է ժամավճարով և համատեղության կարգով աշխատող պետական պաշտոնյաներին ցած դնել իրենց ժամաքանակը` հօգուտ տեղահանված ուսուցիչների: Նրանց մի մասն արժանապատվորեն անսացել է նախարարի կողմից: Այս և այլ տարբերակներով հաջողվել է ԱՅ տարբեր դպրոցներում աշխատանքի տեղավորվել 82 ուսուցիչ և 18 ուսումնասուսանողական աշխատանքի:

սին, ԶԲԸՄ-ին: Աջակցել են ռուսական «Սպեշի կ դոբրու» ֆոնդը, Ռուսաստանի հայ համայնքները և այլն:

Նախարարությունը ձեռք է բերել հեռավար ուսուցման համար շուրջ 3000 գործիք պատերազմի ընթացքում և հետո, որից 800-ից ավելին տրամադրել է «Դասավանդիր, Հայաստան» հիմնադրամը, և որի ներդրած փոփոխությունների վրա հիմնված ուսումնառության ծրագրով երեխաներն իրենց ուսուցիչ առաջնորդների հետ համայնքային զարգացման ծրագրեր են զարգացնում: Ծրագիրը մարտահրավերային է, բայց պատասխանատուները վստահ են, որ բոլոր դժվարությունները կհաղթահարվեն:



խատող: Նմանապես մյուս ոլորտներում թափուր տեղերը հատկացվել են տեղահանված մասնագետներին:

Քաղաքական որոշում էր Հուլիսի և Հաղթության հանրակրթական, արվեստի դպրոցների ու մանկապարտեզների, «Եզնիկ Սոզյան» արհեստագործական ուսումնարանի, հումանիտար քոլեջի, տեխնոլոգիական համալսարանի, Դ. Ղազարյանի անվան երաժշտական մասնագիտացված հանրակրթական դպրոցի վերաբացումը Ստեփանակերտում:

Հաշվառվել և գույքագրվել են կրթագիտական, մշակութային և մարզական կուրսուսները: 112 դպրոց օկուպացված է: Մեր հայրենիքի մեզ մնացած հատվածում մնացել է 108 դպրոց: Մինչև պատերազմն ունեցած 53 մանկապարտեզներից 37-ն է հիմա մեր վերահսկողության տակ գտնվող տարածքներում: Համակարգն ունեցել է անդառնալի կորուստներ. հանրակրթությունից 29 ուսուցիչ և ուսումնասուսանողական աշխատող, մշակութային ոլորտի 3, սպորտի ոլորտի 4 տասնյակի հասնող մարզիկներ դարձել են հավերժի ճանփորդներ: Ունեցել ենք զգալի գույքային կորուստներ. «Արմաթ», քիմիայի, ֆիզիկայի լաբորատորիաներ, մաթեմատիկայի լրակազմեր, գրքեր: Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի շրջաններում և Ստեփանակերտում վերականգնվել են հրթիռակոծված 20 դպրոց, 8 մանկապարտեզ: Բոլորն ապահովվել են անհրաժեշտ գույքով: Մի քանի դպրոցներում դեռ շարունակվում են վերականգնման աշխատանքները:

Այս ամենը 98 տոկոսով արվել է բարեգործական միջոցներով: Նախարարն իր երախտագիտությունը հայտնեց Հայ կրթական հիմնադրությանը, ՀՕՄ-ին, աշխարհի տարբեր անկյուններում Հայ Առաքելական եկեղեցու թեմերին, առավելապես` ԱՄՆ-ի և Գերմանիայի, Ամենայն Հայոց կաթողիկոսին, ԶԲԸՄ-ին: Աջակցել են ռուսական «Սպեշի կ դոբրու» ֆոնդը, Ռուսաստանի հայ համայնքները և այլն:

կազմել, որոնք հերթով ֆինանսավորվում են տարբեր բարերարներից, ու այդ համայնքները զարգանում են:

Լ. Ղարախանյանն առանձնացրեց մի քանի կարևոր իրադարձություններ համակարգում: Դրանցից է ԱրՊՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրումը, ինչը նշանակում է, որ այն գրանցված է բուհերի էլեկտրոնային գրքամատյանում: Ասել է թե` արցախյան բուհը հատել է քաղաքական բոլոր սահմանափակումներն ու արհեստական պատնեշները և դուրս է գալիս միջազգային հարթակ:

Մյուս կարևոր իրադարձությունը «Անտոնիա Արսլան հայ-իտալական կրթահամալիր»-ի միջազգային չափանիշներով կրթական հաստատության հիմնադրումն է, որը մտնում է միջազգային հավատարմագրման փուլ: 200 հազար և ավելի եվրո արժողությամբ գույք և տեխնիկական բազա է մուտքագրվել կրթահամալիր: Հանրահայտ «Վալենտինո» և «Գուչի» ֆիրմաների վարպետները երեք ամիս դասավանդել են կարի արտադրության և դիզայնի մասնագիտության խմբերում: Այստեղ են եկել զինագործներ, պանրի արտադրության մասնագետներ, որոնք Իտալիա վերադառնալով` Մոնթեի և Արցախի դրոշների նկարներով զինիներ են ստեղծել:

Զգալի աշխատանքներ են կատարվել Մարտունու արհեստագործական ուսումնարանում: Ի դեպ, ուսումնարանը թիրախավորվել էր և հրթիռակոծվել թշնամու կողմից: Հրթիռակոծվել էին նաև երկու ավտոբուսները: Բարերարների աջակցությամբ ուսումնարանը ձեռք է բերել երկու ավտոբուս, որոնցով ուսանողներին հարակից գյուղերից բերում են Մարտունի:

Լ. Ղարախանյանը տարվա գլխավոր բարեփոխումն է համարում «Երկարօրյա դպրոց» ծրագրի ներդրումը 14 համայնքներում: 2022-ին երկարօրյա կդառնա 48 դպրոց: Ստեփանակերտում այս ծրագիրը կներդրվի «Անտոնիա Արսլան հայ-իտալական կրթահամալիր»-ում և հ. 9 դպրոցում: Երկու տարվա ընթացքում երկարօրյա կլինեն բոլոր դպրոցները: Նախարարը համոզված է, որ դա կրթական համակարգը մոտիվացնող առարկայական ծրագիր է, տեսանելի բարեփոխում: Նաև համայնքապետներն է ու կնպաստի հանրային արժեքների, խմբային մտածողության ու վարքի ձևավորմանն ու

զարգացմանը: Ծրագիրը մարտահրավերային է, բայց պատասխանատուները վստահ են, որ բոլոր դժվարությունները կհաղթահարվեն:

Ոչ ֆորմալ կրթամշակութային ծրագրերի իրականացման համար կարևոր հանգամանք է «Պոլ էյուարի տուն ֆրանկոֆոնիայի կենտրոն»-ի բացումը, որն ունի բոլոր նպաստավոր պայմանները` դառնալու ոչ միայն մշակույթի և կրթության, այլև նաև այլ ոլորտների գործունեյա անհատականությունների հավաքատեղի:

Տարվա ընթացքում գյուղական դպրոցներում ստեղծվել է 5 «Արմաթ» լաբորատորիա:

Գիտության զարգացմանը զարկ տալու համար հիշարժան է ՀՀ ԳԱԱ 7 ինստիտուտների` Արցախի գիտական կենտրոնի հետ սկիզբ առած համագործակցությունը:

Լ. Ղարախանյանը տարվա կարևոր միջոցառումն է համարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից կազմակերպված «Միջազգային կրոնական ազատություն և

խաղաղություն» գիտաժողովը, որը Արցախի մշակութային ժառանգությունը փրկելու նախաձեռնություն էր, և մասնակցել են աշխարհի տարբեր անկյուններից քրիստոնյա առաջնորդներ, որոնց միջոցով նախարարը ստեղծել է միջազգային կապեր:

Հատկանշելի է նաև Հայաստանի (երրորդ) Հանրապետության և Արցախի Հանրապետության անկախության հռչակման 30-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովը` ՀՀ ԳԱԱ, ԱՅ ԿԳՄՍ նախարարության և ԱՅ ԱԺ համատեղ ջանքերով: Ներկայացվել են բավականին ծանրակշիռ հոդվածներ:

Կրթական համակարգին մեծ աջակցություն է ցուցաբերում «Դասավանդիր Հայաստան» կրթական հիմնադրամը. 29 ուսուցիչ առաջնորդներ դասավանդում են Արցախի 25 համայնքներում: Լ. Ղարախանյանը շնորհակալության խոսք ասաց նրանց հասցեին` «Կրթության բնագոյնը պահող գաղափարական, ազնվազարմ համեստությամբ երիտասարդներին, որոնց ոգեշնչող գործունեությունը պետք է դառնա վարակիչ»:

Լ. Ղարախանյանն անդրադարձավ ԿԳՄՍ բոլոր ոլորտների աշխատանքներին: Աշխատելով արտակարգ պայմաններում` ԿԳՄՍ համակարգն իրականացրել է պլանավորված բոլոր աշխատանքները:

Մեծ ցանկ են կազմում մշակույթի ոլորտում կատարված աշխատանքները: Իսկ ամենաոգևորող մարզական նվաճումներն են: Նախարարը շնորհակալություն հայտնեց գործընկերներին, ոլորտի աշխատողներին` պատերազմից անմիջապես հետո արագորեն ինքնակազմակերպվելու և իրենց պարտականություններին գիտակցաբար մոտենալու համար: Յուրաքանչյուրն իր ոլորտում զինվոր է: Առանձնացրեց ԿԳՄՍ «Լուսարար» պաշտոնաթերթի և «Մշակութային Արցախ» կայքի դերը ու գնահատելով պատասխանատուների տրամաշուն և նվիրված աշխատանքը` պարգևատրեց նրանց:

Նախարարը պատասխանեց նաև լրագրողների հարցերին:

Վերջում բոլորին հորդորեց հեռու մնալ պատեհապաշտություններից. «Մեր համակարգը արժեքային համակարգ է, ու որևէ մեկը չփորձի այն քաղաքականացնել և խանգարել այս ծանր իրավիճակում մեր գործունեությանը»:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Տարվա մարզամշակութային ամփոփ նկարագիրը` տես` էջ 10-11:

ԱՄԱՆՈՐՅԱ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Քրիստինե ՕՂՆՅԱՆ, Ասկերանի էյմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի դասվար:

«Վաղվա առավոտը այսօրվա երեկոյից ավելի իմաստուն է... »:

Պ. Ասալ

- Մարդկանց մտքի օվկիանում լողում են կարևորն ու անկարևորը: Կյանքում ամենակարևորը թռչեցնում են: Պետք է միշտ կարողանալ թռչել, թռչել... հասնել ամպերին, դիպչել արևին և լույս դառնալ հավերժ, միշտ:

Կյանքի արժեքն անընդհատ արարելու, կառուցելու մեջ է, քանզի աշխարհում ավերողներ շատ կան: Անհրաժեշտ է սիրել կյանքը, այլապես անհնար է նրա հետ հաշտ ապրել: Ժպտալ աշխարհին, քանի որ արտասովոր կարող են բոլորը: Կարողանալ երջանիկ ապրել, քանի որ երկրի վրա շատ մարդկանց հաջողվում է պարզապես ապրել: Կյանքն անզուգական դաշնամուր է, որ նվագ է պահանջում: Նվագ ու գույն. ինչքան գեղեցիկ, համահունչ ներդաշնակություն է խոստանում: Չմեռային հրաշք մեղեդին դեռ չի շաղխվել երանգների մեջ: Չմեռն իր ամբողջ գեղեցկությամբ դեռ չի ներկայացել: Նա իր սպիտակ երանգներով ինչպիսի` մեղեդիներ կիյուսեր կյանքի դաշնամուրի վրա: Չյունն իր մաքուր, փափուկ սավանով կծածկեր Արցախիս արյունոտ հողը: Ծերմակ փետրավոր ամպերն ասես կնստեն ցավից տնքացող հողի վրա, կամրքեն վերքերը, բայց, ավա՜ղ, չեն բուժի: Ռոմանցով քամին երեկոյան չի հանդարտվի, իսկ լուսաբացի` Լուսաբացին քամին արևի` թույլ ջերմացնող շողերի հետ նորից կյանք ու միտք կտա: 100 տարի անց աշխարհն այլ կլինի: Ուրիշ ցավերից կիյուսվեն երգերը: Ուրիշ սրտեր կդողան քամու շնչառությունից: Եվ նորից ծյուն կտեղա, ճերմակ երագ կփռի ճամփին, ու մի հաստ վերմակ կիջնի հողին: Ինչ-որ մեկը կբայլի գլխաբաց: Արժե թրջել մարմինը սառը ձյան կաթիլով, պսպղուն երագով` հանուն ծիածանի: Ինչքան գեղեցիկ, հեքիաթային գույներ ապրեցին իմ մտքի ծալքերը` նկարագրելով այդ տեսարանը: Չմեռային մեղմիկ մեղեդին կարծես ապրեցնում է գիշերային սառցե թիթեռնիկներին` հավելվով նրանց: Տարբեր են կյանքի մեղեդիները: Երջանիկ է նա, ով կարողանում է վառ պահել մանկության արևահամ երագը, որտեղ աշխարհը սիրելի է, կյանքը` ընդունելի: Որքան մանկության երագներ իր գիրկը կառնի ծնեքը: Հայրորդների ինչպե՞ս սառած խոսքեր, մտքեր ու երագներն են կան օդում: Գիշերային կախարդական հեքիաթում լսելի է նրանց հրեշտակային ձայնը: Իմ դաշնամուրի ստեղծների վրա այն նոր երանգ ու երգ է դառնում: Երգ` ապրելու, արարելու, սիրելու, պայքարելու, մեր հողը մերը դարձնելու մասին: Սովորեցրեք ապրել առանց անցյալի, որ բեռ-հուշերը չլցնեն սիրող կարտոսի թույնով, ու չհառաչենք երանի տալով: Գեղեցիկը շնչում է երագների թովիչ բույրով: Ցավից ու կարոտից ծնված հեքիաթները մոլորվում են գիշերային խավարի մեջ: Ուստի սկսենք վառել երագների լույսերը, տոնածառի լույսերը, որ Նոր տարին գա անուրջներով, հույսերով, բարությանը ու գեղեցիկով լի: Բոլորս սպասում ենք Ամանորի հրաշքին` երագանք պահելով, որ խաղաղությունն իր հովանու տակ վերցնի Հայոց աշխարհը մեր, որ բոլորի օջախներում շողողան տոնածառի լույսերը մոգական, ու հնչեն երգերը հայկական:

Ամանորը մեզ գույներ է տալիս. սառը երկնքի կապույտը, եղևնու հավերժական կանաչը, տոնածառի բազմապիսի խաղալիքների փայլը, որպեսզի մենք ճերմակ էջին նկարենք մեր երագանքները: Կեսգիշերին կզանգեն զանգերը զի` ավետելով հույս, հավատ ու սեր: Եվ Նոր տարին նոր խնդրությամբ մեր կմտնի այդ գիշեր: Այդժամ Ամանորը կխոստանա, որ կիրականացնի մեր բոլոր իղծերը: Դեռ մանկությունից երագել են փոքրիկ-փոքրիկ արեգակներ ունենալ, որ նվիրեն նրանց, ում աչքերում ջերմության պակաս տեսնեն: Ամանորը ճերմակ էջից սկսած մի նոր կյանք է խորհրդանշում: Ուզում են, շատ են ուզում` Ամանորը լինի հեքիաթային ու անմոռաց, ուզում են, որ տեսնենք Նոր տարվա ամեն մի հրաշք ու հավատանք, որ երագներ կարելի է պահել ոչ միայն աստղ ընկնելիս, այլև կախարդական գիշերվա պայծառ երկնքից թափվող ամեն մի փոքրիկ փաթիլի հետ: Հավատանք ու ժպտանք. չէ` որ ժպտը կփոխի աշխարհը:

ՏՈՆ ՕՐԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԼՈՒՍՎՈՐ ԱՊԱԳԱՅԻ ՆԱՎԱՏՈՎ

Պատմության գիրկն է անցնում հին տարին: Այն շուտով կդառնա հավերժության մաս, կդառնա անցյալ ու հուշ: Ուր դնելով նոր տարվա շեմին՝ ակամայից մտածում ենք, թե ինչ տվեց մեզ իրն տարին, ինչ բեռով է դառնում պատմության մաս, ինչով նշանավորվեց, և ինչ է բերելու նոր տարին:

Մենք ապրեցինք մեր նորանկախ հանրապետության դժվարին ու ծանր տարիներից մեկը՝ դաժան ու կործանարար պատերազմին հաջորդող տարին: Հազարավոր նահատակներ, թշնամու հսկողության տակ անցած տասնյակ բնակավայրեր, տասնյակ-հազարավոր տեղահանված բնակիչներ, կործանված-ավերված բնակելի շենքեր, շինություններ, կաթվածահար եղած տնտեսություն, ու այս բոլորի դեմ՝ մի անվեհեր, քաջասիրտ մի բուռ ժողովուրդ:

Մեկ տարին շատ քիչ ժամանակ է, որպեսզի սպիանան այն արնածոր վերքերը, որ կրում է մեր ժողովուրդը, դեռ ավելին, նահատակ զինվորների մասունքները հայտնաբերելն աղ է լցնում այդ վերքերին: Որքան էլ որ դժվար լինի, մենք պարտավոր ենք, մենք պետք է քաջություն ունենանք և անկոտրում կամք՝ դուրս գալու այդ տևական թմբիկից, ունկնդիր լինենք մեր ապ ու պապերի իմաստուն խոսքին: «Սուզը սուզ է բերում», իսկ ուրախությունը՝ ուրախություն: ժամանակ է բեկում մտցնել մեր խոհերի, մեր մտածումներների մեջ: Նոր տարին պետք է սկսել հենց այդ տրամաբանությամբ ու տրամադրությամբ:

Տոն օրերի նշումը հասարակական կյանքում կարևոր իրողություն է: Ընդհանուր համաժողովրդական տոներից գատ յուրաքանչյուր ժողովուրդ ունի նաև իր առանձին տոն օրերը, որոնք կարող են կապված լինել կարևոր պատմական իրադարձությունների հետ, ինչպես՝ Անկախության տոն, Սահմանադրության օր, Հաղթանակի օր և այլն:

Յուրաքանչյուր տոն օր իր խորհուրդն ունի, հնարավոր է նաև՝ ազգային դիմագիծ ու ավանդույթներ: Այդ տոն օրերին, նախ և առաջ, պետք է հարգանքով մոտենալ, գնահատել և ընդունել դրանց խորհուրդը:

Մեր նորանկախ հանրապետության առաջին օրերին որոշ նորաթուխ քաղաքական գործիչներ հանդես եկան խորհրդային տարիներից ժառանգություն մնացած տոն օրերի դեմ, նույնիսկ շահարկման առարկա դարձան Մարտի 8-ը, Մայիսի 1-ը, Մայիսի 9-ը: Նրանց նույնիսկ հաջողվեց ինչ-որ ժամանակով հրաժարվել այդ տոն օրերից: Փառք տանք, որ գտնվեցին մարդիկ, որոնք պարզաբանեցին և մոլորության մեջ ընկածների գիտակցությանը հասցրին այն, որ վերը նշած տոները միջազգային են, և պարզամտություն կլինի դուրս գալ ազգերն իրար կապող շղթայից: Իսկ Մայիսի 9-ը՝ Հայրենական պատերազմում տարած Հաղթանակի օրը, այդ պատերազմում մեր հարյուրհազարավոր նահատակների հիշատակը հարգելու օր է:

50-ն ամց սերունդը լավ է հիշում, թե ինչ տեսք էին ստանում քաղաքները, անգամ գյուղերը տոն օրերին, ինչպիսի խանդավառությամբ էին մասնակցում տոնական շքերթներին աշխատանքային կուլեկտիվները, ուսանողները, նույնիսկ բարձր դասարանների աշակերտները: Տոնական հանդեսներին հաջորդում էին տարաբնույթ պարզևատրումները՝ նյութական և բարոյական, մշակութային տոնակատարություններ (մեր օրերում միայն երազել կարելի է): Շատ կոլտնտեսություններ տոն օրերին միս, խմիչք կամ այլ մթերքներ էին բաժանում՝ հոգ տանելով տոնական սեղանների ճոխության մասին, բարեխիղճ աշխատողների համար կազմակերպում էին էքսկուրսիաներ ողջ Միության տարածքում, հետո նաև՝

Եվրոպայի սոցիալիստական երկրներ: Եվ սա միայն տոնախմբություն չէր. դա պարզապես գաղափարախոսություն էր, սոցիալիստական հասարակարգի գաղափարախոսություն, որ իր մեջ ներառում էր հարգանք աշխատող մարդու նկատմամբ, հավասարություն նրանց միջև, բարեկամություն ազգերի միջև, քաղաքի և գյուղի միջև տարբերությունների աստիճանական վերացում և այլն:

Նոր տարին իր ելույթով ու բովանդակությամբ տարբերվում է մյուս տոն օրերից: Մենք՝ հայերս, նոր տարին անվանել ենք Նավասարդ, Տարեմուտ, Տարեգլուխ, Ամանոր, Կաղանդ և այլն: Այն հազարամյակների պատմություն ունի: Հեթանոս հայերի մոտ Նոր տարվա տոնակատարությունները, որ կոչվում էին նավասարդյան տոներ (նշվում էին օգոստոս ամսին), տևում էին մեկ շաբաթ և ավելին ու հայտնի էին գանազան մրցույթներով՝ ձիարշավներ, ռազմական տեսարաններ, սուսերամարտեր և այլն: Պատմահայրն իր աշխատության մեջ մեկ անգամ չէ, որ անդրադարձել է նավասարդյան տոն օրերին, նրա նշանակարգին: Հիշենք թեկուզ «Արա Գեղեցիկ և Շամիրամ» ասքը: Շամիրամը հենց այդ օրերին է հանդիպում արքա Արային ու սիրահարվում նրան:

Նոր տարին միաժամանակ ցանկությունների ու երազանքների տոն է՝ ինչ-որ տեղ հասցեագրված երեխաներին: Այդ նրանք են, որ անհամբեր սպասում են Ձմեռ պապին, ակնկալում նրանից կամ իրենց երազանքը, կամ էլ նամակով հայտնած նվերը: Երեխաների համար դա նաև հավատի տոն է, ու այն ներշնչողը դարձյալ Ձմեռ պապն է: Երեխան հավատացած է, որ եթե նվերն առձեռն չի ստացել, այն անպայման կլինի բարձի տակ:

Չգիտեմ՝ այդպե՞ս է, իրոք, թե ինձ է թվում, որ տոն օրերի զգացողությունը միանգամայն այլ կարգավիճակում է: Հասարակությունը տոն օրվա հոգեկան բավարարվածության զգացումով չի ապրում, չի ընկալում այդ օրվա բուն խորհուրդը, էությունը: Տոնական սեղաններից գատ պետք է նաև հոգով զգալ և վայելել ու գիտակցել տոն օրերի անհրաժեշտությունը:

Նոր տարվա շեմին դիմելով մեր հանրությանը՝ կխնդրեի գիտակցումով մոտենալ այն բոլոր խնդիրներին, որ առկա են մեր հանրապետությունում: Մեկ, նույնիսկ մի քանի տարում հնարավոր չէ երկիրը դուրս բերել սոցիալ-տնտեսական ծանր վիճակից: Պատերազմի հասցրած վնասը, դժվար վերահսկվող գնաճը, կորոնավիրուսային համաճարակն իրենց գործ կեցվածքով բացասաբար են անդրադառնում ժողովրդի ինչպես սոցիալական, այնպես էլ բարոյահոգեբանական վիճակի վրա:

Հանրապետությունում ընթացող քաղաքական, տնտեսական, հասարակական զարգացումները պահանջում են ուժերի գերլարում, համախմբվածություն, հանդուրժողականություն առանցքային հարցերի շուրջ: Ազգանպաստ, անկախության ձգտելու մարտավարության մշակումը պետք է դառնա նոր տարում հանրապետության զարգացման միակ ուղին: Ծնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

Լեոն ԱՌԱՔԵԼՅԱՆ Գ. ԵՄԻՉՃԱՆ

Հ. Գ. Ո՛վ գեղեցիկ իմ աշխարհ, Ասա՛, ինչո՞ւ ես սիրելի, Թեև ներկան չի ժպտում, Բայց ապագան մերն է, մեր:

Ի. Ճավճավածի այս տողերը մտաբերեցի, որ կարող էի օգտագործել որպես բնաբան:

ԱՄԱՆՈՐՅԱ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Սուսան ԳԱԼՍՏՅԱՆ, Նորագյուղի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի: «Մանկական Եվրատեսիլի հաջորդ օրը սաներս ինձ աջբալուսանք տվեցին. «Հայաստանը առաջին տեղն է զրավել...»:

- 44-օրյա պատերազմից հետո երբևէ չէի ուրախացել, բայց տեսնելով երեխաների աչքերի փայլը՝ սիրտս ալիքվեց:

Այնքա՛ն եմ ուրախ, որ դուք ուրախացել եք: Թող այս հաղթանակը դառնա մեր եկող հաղթանակների սկիզբը:

Նոր տարվա նախաշեմին ենք, սիրտս աղոթքի բառեր է մրմնջում Հայաստան աշխարհի, կիսաբուռ դարձած Արցախիս, բնօրրանիս, տանս, հավատիս, պատվիս, ապրելուս իմաստի համար...

Թող Աստծո օրհնությունը իջնի իմ Աշխարհին, իմ ժողովրդի վրա: Թող այս տարին մեզ համար հաղթանակների տարի լինի, և այդ ամենը սկսվի յուրաքանչյուր հայի հոգեկերտվածքի փոփոխությամբ. ինչ անում են, իմ հայրենիքի, իմ ժողովրդի, Աստծո համար եմ անում: Թող Աստծո սերն ու հավատը այնուհետ լիաբուռ ըմպի հայը, ուր էլ որ լինի: Թող միանան, մի բռունցք դառնան ճակատագրի հեզմանքով աշխարհի չորս ծագերում սփռված հայերը՝ հասկանալով, որ մենք ուժեղ ենք, երբ միասին ենք, երբ հաշտ-համերաշխ ու միաբան ենք:

Թող այս Նոր տարվա շեմին ժամապահի լոկ բարին. Բարի կամքը մեր սրտերի: Թող անպայման կատարվի: Կյանքը լուսե դրախտ դառնա, Չարը մեզմից հեռանա,

Ամեն դռան, ամեն տան մեջ Լոկ հրճվանքը մանկանա: Խաղաղությունը անսահման Լույս գիրկ դառնա մայրական, Երկրագունդը՝ այս արարման, Մեծ տուն դառնա բարության...

Լուսինե ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչուհի:

- Մի ներքին ձայն անդադրում կռիվ է տալիս մտքիս ու կամքիս հետ, փնտրում ու մեղավոր ճանաչում, ճնշում, խաթարում, երբ փորձում եմ մի պահ կյանքի ուրախ պահեր ապրելու մասին մտածել: Ամանորը տարվա ամենապասված ազգային տոներից մեկն է, որ ավանդական հայկական ընտանիքներում առանձնակի շուքով է տոնվում: Դա ընտանեկան համերաշխության ու սիրո միասնականության խորհրդանիշ-տոն է: Տարեմուտը նորի սկիզբ, բարիք ու հաջողություն խոստացող տոն է. ի վերուստ այդպես է եղել ու այդպես էլ մնում է, ուղղակի մենք այլևս նույնը չենք: Մեր կյանքը երկատվեց՝ պատերազմից առաջ և պատերազմից հետո: Ինչպես վիրավոր թռչուն, մենք ապաքինման փուլում ենք: Մեր շուրջը տեղի ունեցող ակնթարթային զարգացումները, չսպասված իրավիճակների հասունացումը խեղում է ամեն ինչ, և բանականությունն անզոր է ընկալելու այն ամենը, որի մասին երբեք չենք մտածել: Սակայն մահկանացուն անզոր է, չի կարող հրաշքներ գործել ու ետ բերել այն կորուստները, որոնք այսօր այսչափ խոր կսկիծ ու ցավ են պատճառում մեզ: Աստծո կողմից մարդուն տրված մի շնորհ կա՝ գնահատել: Մեր պարտքն է՝ գնահատել այն զոհողությունը, որ մեզ համար արեցին մեր սուրբ նահատակները: Խոնարհություն ու ծանրացած հոգով պիտի տոնենք Ամանորը, պիտի ապրենք ու ապրենք նրանց թողած սերունդներին: Թող այս տարի լռեն բոլոր թեղախոսները, զինվոր սահմանապահ չլինի, ուսուցչի գրիչը բեղուն լինի, շինարարի մուրճը ամուր գարկի, մանկան ճիչերը անպակաս լինեն, և հայի այն տեսակը ծնվի, որի խելքի ու բազկի ուժից աշխարհն էր սարսափում: Թող Սասնա հայը վերածնվի և Մշո պարով հաղթանակներ տոնի: Ազգս հայոց, որ դարեդար խաչապաշտ էր ու խաչ կրող, թող ծաղկի ու շենանա, աշխարհն ապշի ու խոնարհվի Հայք-Հայաստան երկրով հայոց... Թող Նոր տարին լույս և հույս բերի հայրենիքիս հայրենական:

Գայանե ԱՂԱԲԱԲՅԱՆ, Խնամապատի Արթուր Հայրապետյանի անվան միջնակարգ դպրոցի փոխտնօրեն:

- Ամանորի մասին մտորումներս ինձ տանում են սահյանական աշխարհ: Երևի հողին, բնությանը խառնվելու անհագ ցանկությունս է պատճառը, քանզի բնության մեջ է ամեն ինչ մաքրամաքուր և բյուրեղյա:

Բնության ձայնը ականջիս մեջ մտնում է սահյանական բառերով. Երբ որ ծառի վրա էիր, դու տենչում էիր, որ հասնեիր տիեզերք, Հիմա աշուն եկավ, ծառից ընկար ներքև, Ձեռքդ բուռ արել, մի բուռ ձմեռ ես տենչում, տերև:

Այս տողերը մարդկային էության մասին են, սա հայի ճակատագիրն է՝ միշտ լիահույս, միշտ ձգտող, կառուցող ու շինարար, հանուն հայրենիքի՝ ցավադիմացկուն ու փյունիկի պես՝ մոխիրներից հառնող: Ամանորյա մտորումներիս ոսկեզօծ շղթան շառագունել է, նրա յուրաքանչյուր օղակ փափագ է ու հույս: Հույսով հյուսված ամանորյա մտորումների իմ շղթան ուզում եմ մանյակ դարձնել ու կախել յուրաքանչյուր հայի վզից, ուզում եմ գալիք տարին հայի ցավին վերջ դնի, էլ ոչ մեկի սիրտը ցավից չնվկտա, էլ ոչինչ չկորցնենք, ձեռքբերումներ միայն ունենանք:

Հետո մտորումներիս ոսկեփետուր փյունիկը թևածելով հասնում է Հայոց բանակ, գրկում զինվոր որդու: Եվ հպարտության պերճաշուք զգացողությունը պարուրում է ինձ, բայց հաջորդ պահին ես զգում եմ, թե որքան խցված է իմ հպարտությունը: Խոցված է, որովհետև ես հաղթանակած բանակ էի ուզում կտակել որդուս, քաջագործությունների մասին իմ ասքերը այլ վերջաբան ունեին միշտ:

Ես ոչինչ չէի խմայում որդուս ամբողջական ու հզոր հայրենիք ծառանգելու համար, ես ուզում էի, որ նրան միայն երկրի շենացման աշխատանքը մնար, ոչ թե կրակի ճիրաններից երկրի փրկությունը: Հետո մտքերիս շիկացած ընթացքը խախտում է կրտսեր որդուս իղձառատ հարցադրումը:

- Իսկ տոնածառ չէ՞նք զարդարում:

Իսկ տոնածառ կզարդարենք, կկախենք նրա փեշերից մեր հուսառատ իղձերը, մտորումներիս լուսավոր խաղալիքները, և թող պսպղում լույսերը երջանկություն բերեն բոլորիս. չէ՞ որ մենք այդքան էլ շատ բան չենք ուզում...

Եղիցի՛ լույս ամենուր և հերոսական ու հայկական Արցախում:

Լիլիթ ԽԱՉԱՏՐՅԱՆ, Խնամապատի միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցչուհի:

- Նոր տարում ես այլևս ոչ մի մանկական երազանքի հույսեր չեմ փայփայում, քանի որ իրականությունը չափազանց մեծ դառնությամբ մտավ իմ կյանք, որ չհասցրի մարսել ու տեղ թողնել երազանքների համար:

Նոր տարին ինձ համար դարձավ սովորական մի օր: Սրանք իմ ներքին մտորումներն են, ու շրջապատի մարդկանց պետք չէ դրանք պարտադրել: Ես ուրիշ դեր եմ ստանձնել. լինել կենսուրախ, նպատակասլաց, պոզիտիվ, մի քիչ էլ տարօրինակ, որովհետև աշխատում եմ մատաղ սերնդի հետ և պարտավոր եմ նրանց հոգում վառ պահել մեր ազգային արժեքները:

Թող այս Նոր տարին մեր մանուկներին ու Արցախ աշխարհին բերի ամենաթանկը՝ խաղաղությունը, որ բոլոր ընտանիքներում թևածի երջանկությունը:

Փառք ու պատիվ այն բոլոր զոհերին, որոնց կյանքի գնով այսօր մենք կանք:

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՄՏ, 2022

ՀԱՆՂԵՍ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Հաղորդի արվեստի դպրոցի ամանորյա հանդեսը Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում հաղորդեցին՝ մի հարկի տակ մեկտեղվելու և մի առիթ էր: Փոքրերի հետ

տեսնեն և մեծերին փոխանցեն կյանքի գույները բոլոր երանգներով, որ այսուհետ մեր ընտանիքներում սավառնի միայն խաղաղության աղավձին:

ամանորներն անպայման մշելու ենք մեր հիգակում: Իսկ դրա համար մենք պետք է համախմբված մենք Արցախում, հաղորդեցին իրավունք չունի շատ հեռու գնալու, մենք մի օր անպայման վերադառնալու ենք մեր բնօրրան: Հաղորդեցու հզոր կամքի ուժի և ունակությունները բոլորին են հայտնի: Ուրեմն՝ հաղորդեցին կա և կլինի հազարամյակներ հետո էլ, որովհետև հաղորդեցի մանուկն անգամ

ԱՄԱՆՈՐՅԱ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Էլվինա ՄԱՐԳԱՐՅԱՆ, Նախիջևանիկի միջնակարգ դպրոցի փոխտնօրեն:

- Ճանապարհում ենք ևս մեկ տարի՝ 2021-ը, որը չենք կարող բնութագրել որևէ դրական մոտիվ ունեցող արտահայտությամբ՝ պայմանավորված 2020թ. 44-օրյա աղետով: Բայց արցախցին իրավունք չունի վիստվել՝ կասկածի տակ դնելով սեփական ինքնությունը: Այլևս թույլ չտանք կյանքին, հանգամանքներին խել մեզանից այն ամենը, ինչը երջանկացնում և ոգեշնչում է՝ ստիպելով ձգտել նոր հաղթանակների ու նվաճումների:

2022 թվականին ակնկալում են պարուրվել ամբողջական հայրենիք ունենալու անկողնում հավատով:

Շնորհավորում են բոլորիս Ամանորի առթիվ: Թող 2022 թվականի խորհրդանիշը դառնա անկախացած Արցախը՝ խաղաղություն և հանգստություն բերելով անմահ հերոսների շիրիմներին:

Սուսաննա ՄԱՐԿԿՅԱՆ, Նախիջևանիկի միջնակարգ դպրոցի դասվար:

- Եվս մի տարի գլորվում է պատմություն կոչված անդունդը, և մի անգիր գիրք տեղավորվում է հիշողություն կոչված գրադարանում: Ո՞վ գիտի, ժամանակի փոշիներում կորչելու, թե՛ հաճախ գործածվելուց փայլելու: Եվս մեկ տարով հարստանում են: Այո, որքան էլ տարօրինակ է, հարստանում են, որովհետև ևս մի դասագիրք ավարտել են: Շուտով կսկսեն նոր ուսումնասիրել ու իմ կյանքի պատմության նոր էջեր գրել: Նոր տարվա շնին հույս կա, որ նորն ավելի գեղեցիկ, պայծառ, հանգիստ, հուսալի կլինի: Ամեն անգամ հույսերի մեծ հրավառություն է:

Ես անձնական երազանքներ չեն կարողանում պահել. հայ են, չէ՞:

Ես ամեն օր են Աստուծոց երկրիս համար խաղաղություն, բանակիս՝ հզորություն, ժողովրդիս՝ անարյուն հաղթանակներ, երեխաներիս (աշակերտներիս էլ ներառյալ)՝ երջանկություն ու գիտելիքներ ուզում: Դրան հասնելու համար ներդրումներս գուցե քիչ են, բայց հավատս մեծ է, հույսս՝ անսպառ:

Թող Նոր տարում վերջանան հայի անհուսությունը, թերահավատությունը սեփական ուժերի և լավ ապագայի հանդեպ:

Թող Աստված անասիման հավատ պարզիկ հային առ պայծառ ապագա:

Հասմիկ ԱՆՊՅԱՆ, Խրամորթի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի ուսուցչուհի:

- Պատմություն գիրքը գլորեցինք և մեկ տարի: Տարվա խորհրդանիշն էր Ցուլը, որը երբեք չի ներում վիրավորանքն ու չարությունը: Գալիք Նոր տարում սպասում ենք հզոր Վազրին, որը, մտնելով իր իրավունքների մեջ, հուսով են, որ հաղթանակ կերի Հայոց աշխարհին:

Մտորում են անցած 2020-2021 թվականների մասին: 2020-ի աշունը շատ ցավոտ էր ու դաժան: Պատերազմ, որ կարող էր և չլինել, պատերազմ, որ կարող էինք և հաղթել:

Աստուծո բարեհաճությամբ պարզապես պետք է լինենք լավատես ու հավատալի, որ այս Նոր տարին միայն հաջողություններ ու ուրախություններ կերի, և անկախ ամեն ինչից, մարդիկ կկարողանան վերագտնել իրենց ու բարու հանդեպ հույսը չկորցնել: Գիտեն, որ բոլոր հաջողությունների հիմքում ընկած է երկրի խաղաղությունը, ուստի, շնորհավորելով համայն աշխարհի հայությանը և մասնավորապես՝ Արցախ աշխարհի ժողովրդին, մաղթում են առողջություն, կամքի ուժ, ստեղծագործ աշխատանք: Հուսամ, որ հայը կկարողանա շտկել իր մեջքը և նորանոր հերոսապատումներ կերտել:

Իմ հայ ժողովուրդ, իմ փառահեղ ազգ, ուս ուսի տանք և հետ բերենք մեր կորցրած հայրենիքը, որպեսզի հաղթական Քոչարին կրկին հնչի Շուշիի կամարների տակ այս Նոր տարում:

Բարի գալուստ, հզոր ու անկտորուն Վագր:



հավաքվել էին մեծերը միասին՝ պատմության գիրկն ուղարկելու դժվարություններով և փորձություններով անցած 2021 թվականը: Տոնական երեկոյի առաջին ռուպեն հարկավ լուսությամբ հարգանքի տուրքն էր զոհված հերոս տղաների հիշատակին:

Ապա մեկը մյուսի հետևից բեմահարթակ են դուրս գալիս Հաղորդի վերածնված արվեստի դպրոցի բազմաճյուղ խմբակներից մի մասի երեխաները՝ դիդախարներ, երգչախումբ, արտասանողներ՝ իրենց կատարումներով փոխանցելով, որ այսուհետ չզգանք այն ցավը, որ ունեցանք 2020թ. սեպտեմբերի 27-ին, որ 2022-ը լինի խաղաղության, սիրո, համերաշխության տարի, որ իրենք

միշտ ուրիշ տեղ չենք մշելու, հավատում են, որ մենք հետագա



գիտի, որ վաղ թե ուշ վերադառնալու է հայրենի բնօրրան:

Մենք պետք է մեր համախմբվածությամբ ապացուցենք, որ հաղորդեցին նորանոր հաղթանակներ անպայման տոնելու է: Շնորհավորում են բոլորիս Նոր տարին, ապրենք խաղաղությամբ, Աստուծո օրհնությամբ: Թող բոլորիս նվիրական երազանքներն իրականություն դառնան:

Բոլոր դժվարությունների միջով անցնելուց հետո էլ հաղորդեցին լավատեսությամբ է խոսում: Աստված չի կարող չտեսնել դա, և նրա սրտովը նրան չտա:

Ուրեմն՝ բարի գալուստ, 2022:

Անի. լրատվություն

ՇԵՔԻԱԹԱՅԻՆ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ



Սահանամներ՝ Մարտակերտի վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցը մարդաշատ էր այդօր: Ամանորին ընդամաք՝ նախատեսված էր հանդես կազմակերպել, որի նախաձեռնությունն իր վրա էր վերցրել դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի Սոֆյա Պետրոսյանը՝ 2-5-րդ դասարանների ակտիվ աշակերտների մասնակցությամբ: Նախօրոք տեղեկացված լինելով, որ Նոր տարվա շնորհավորանքով ու նվերներով հյուրեր ենք ունենալու, դպրոցի դահլիճն իր գիրկն էր առել նաև Վարդան Մինասյանի անվան և Աղաբեկյանցի հիմնական դպրոցների աշակերտներին:

Դահլիճը եռում էր... Դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ, ծնողներ, աշակերտներ՝ սպասումով լի, որ շուտով կայցելեն հյուրերը: Մի կողմում սիրտները տրոփող հանդեսի անմիջական մասնակից երեխաները՝ ուսուցչուհի Սոֆյա Պետրոսյանի հետ, մյուս կողմում մեծերով թե փոքրերով լեփ-լեցուն աշխույժ դահլիճ՝ սպասողական տրամադրությամբ:

Շուտով բոլորին տեսանելի դարձան այն նվերները, որ պետք է միջոցառումից հետո բաժանվեին երեխաներին: Վարչակազմի ղեկավար Արսեն Ավանեսյանի ներկայությունը ջերմ ու ողջունելի էր: Ռուս խաղաղապահների, «Մերսի» բարեգործական հասարակական կազմակերպությունների ասոցիացիայի և «Հայեր, միացե՛ք» հիմնադրամի ներկայացուցիչների համատեղ գործունեությունը տեսանելի էր:

Սկսվեց հանդեսը դպրոցի տնօրենի՝ միջոցառման բացման, ապա փոքրիկ հաղորդավարների հստակ ու հնչել խոսքերով: Ռուսաց լեզուն թևածում էր բեմ բարձրացած փոքրիկների շուրթերին: Տոնական շքեղություն էր, որ ուղեկցվում էր Ձմեռ պապի փնտրտուքով: Այն մի հետաքրքիր ճամփորդություն էր, որ մերթընդմեջ ընթանում էր իրենց դերերի մեջ մտած Ձյունանուշկիկ և «Բաբը Յագայի» երկխոսությամբ, երեխաների՝ Ձմեռ պապիկին կանչող վանկարկումներով, որը նրանց հասցնում է անգամ աֆրիկյան երկիր՝ սևամորթների մոտ:

Կախարդական ավելով «Բաբը Յագան» նորովի է երևում երեխաներին, շատ ավելի ժամանակակից, որը թեպետ փորձում է խանգարել, բայց երեխաները գտնում են Ձմեռ պապիկին:

Ուրախ երգն ու պարը (պարուսույց՝ Անաստասիա Ավանեսյան) թևածում են բեմում՝ ուսուցչուհու աշխույժ ծայնակցումով, ուղղորդող հայացքով, Ձմեռ պապիկի՝ գալիք Նոր տարվա շնորհավորական խոսքով, դպրոցականի՝ բոլորի անունից ռուս խաղաղապահներին ուղղված երախտագիտությամբ, դահլիճի բուռն ծափահարություններով:

Բեմ բարձրացած հյուրերը իրենց շնորհակալական խոսքերով, ձեռքերի ուրախ թափահարումով հանդեսի մասնակիցների հետ էին: Ուսուցչուհի Սոֆյա Պետրոսյանին նվիրած ծաղկեփնջերը երախտագիտության արտահայտություն էին: Դպրոցի տնօրեն Ռուզաննա Հարությունյանը հանդեսի մասնակիցներին և ուսուցչուհուն շնորհակալություն փոխանցեց՝ հյուրերին և մեզ բոլորիս պարգևած գոհության խոսքերով:

Ե. ԳՈՂՈՍՅԱՆ



Ամանորյա Ստեփանակերտը

ՏԱՐԵՄՈՒՄ

ՏՈՆ, ՈՐ ԳԱԼԻՍ Ե ԳՈՒՆԵՂ ՇԵՔԻԱԹՆԵՐՈՎ

Թող միշտ դողանքի զանգը մանկության,
Եվ հնչի միշտ երգը ցնծության...

Ուրիշ, շատ ուրիշ է մանուկների աշխարհը: Պարզ, միամիտ, անաղարտ, արևային ու ջերմ, անապակ ու թափանցիկ աշխարհ, ուր մարդը մաքրվում է բոլոր ծանր մտքերից, աշխարհի կեղտից ու ժամանակավոր վայելում այդ արևային աշխարհի պարզաձև հրճվածքն ու նրանց ջինջ աչքերի փայլատակունդը: Երանի՜ աշխարհում միշտ տիրել մանկան մաքրություն:

Եվ այսպես, տարեմուտին ամեն օր համդիսություններ են տեղի ունենում ու երջանկության ակնթարթներ պարզում մեր երեխաներին՝ վերադարձնելով նրանց աչքերի արևային շողանքն ու հոգու ցնծությունը: Տոն է ամենուր, խիստ ու ցնծություն, և մանուկների աշխարհում սա յուրահատուկ է նրանով, որ այս օրերին են նրանց հոգում հյուսվում այն հրաշալի ու կախարդական հեքիաթները, որոնց նրանք հավատում ու անհամբեր սպասում են ողջ տարին:

Թե աշխարհում փակ դռներ կան,
թող որ բացվեն այս գիշեր.

Թե կան դատարկ, համր տներ,
մանկան ճիչով թող լցվեն...

Չնչում է Ասկերանի միջնակարգ դպրոցի կազմակերպիչ Մերի Գաբրիելյանի ականջ շոյող ձայնը, և դահլիճում թևածում է մանուկների երգն ու պարը. «Բազում հույսերով, սպասումներով ու ակնկալիքներով պատրաստվում ենք դիմավորել Նոր տարին՝ 2022 թվականը: Նոր տարին նշանակում է նոր սկիզբ, նոր նպատակներ, նոր ձգտումներ: Հավատանք, որ այսուհետ ամեն ինչ լավ է լինելու, և մեզ ուղեկցելու են հաջողություններն ու վերելքները»: Ու Նաբեն հեզում է.

Նոր տարվա շնչով, խաղաղ երկնքով
Եվ ձայնով խղճի, ձայնով բարության,
Սուրբ զգացումիս ոգեղեն կանչով
Տոնում ենք սիս տոնը Նոր տարվա:

Արմինեն ու Մարին այն համոզման են, որ Ամանորը ամենասպասված տոնն է բոլորի համար: Թող 2022-ը հաջողությունների ու ձեռքբերումների տարի լինի, իրականացնան բոլոր երազանքները, և մեկնարկը լինի միայն հաղթանակների համար: Թող գալիք տարին դարձնենք հայինը և հնարավորություն ունենանք ավելի շատ արարելու, ստեղծելու ու շրջապատը ավելի պայծառ ու գունեղ դարձնելու համար: Թող այս Նոր տարին բարօրություն ու խաղաղություն բերի մեր ընտանիքներին Արցախում, Հայաստանում ու Սփյուռքում: Ու հաջորդում է մաթանքների շարանը:

Ուզում ենք, որ 2022 թվականին ոչ ոք չզգա տխրություն ու միայնություն, ոչ մի երազանք չմնա անկատար, Նոր տարին իր հետ միայն լույս բերի ու ցրի խավարը, նոր նվաճումներ, խիստ ու սեր պարզի մեր ժողովրդին, մեզ դարձնի մի կուռ միասնություն, լինենք հանդուրժող ու իրար կարեկից:

Իլունան էլ մաղթում է.
Թող գալիք տարին բերի բարություն,
Թող խաղաղություն բերի աշխարհին,
Թող բոլոր մարդկանց սրտերում իշխի
Հույսի, հավատի ու սիրո զգացում:

Մանուկների համար ամենաերանելի պահը Ձմեռ պապի գալուստն է՝ հեքիաթային երազանքների պաշարը կախարդական պարկում: Բոլորվում են մանուկները Ձմեռ պապի շուրջը՝ պատրաստ իրենց արտասանություններով ու երգերով, որ վերջում Ձմեռ պապին հատուցի իրենց արածի դիմաց: Ու մեկը մեկին դադար չի տալիս. ուզում են փորձել իրենց ուժերը և Ձմեռ պապից շուտ ստանալ նվերը: Ձմեռ պապին էլ ժլատ չէ, առատորեն վարձահատույց էր լինում բոլորին մեկ առ մեկ: Իսկ Կանաչ հերոսուհին այս ամենից ցնծում էր.

Չիշում է կանաչ իր ընկերներին...

Չիշում է սուսափն ամեն մի ծառի,
Խարույկն է հիշում անտառապահի:
Չիշում է բոլորն ու չի ափսոսում,
Որ էլ անտառի երգը չի լսում:
Ինչո՞ւ ափսոսա, երբ իր քեռին
Գարուն է բերել երեխաներին,
Գարուն է բերել այս ձմռան օրով
Եվ տուն է մտել կանաչ շորերով:
Ե՞րբ է նա այսպես զուգվել, գարդարվել
Եվ մարդկանց այսքան հրճվանք պատճառել:

Չնչում է երգը, զանգերը դողանջում են,
Նոր տարին մանուկների խիստ ու ծիծաղով
գալիս է ասելու, որ այլևս աշխարհի ոչ մի
անկյունում անտուն ու խեղճ երեխա չլինի,



մայրերը չսզան իրենց կորուստների համար,
որ վերջապես վերանան մահ սփռող ուժերը,
և կյանքը ծաղկի ամենուր հրաշք-մանուկների
ճիչ-ճուլոյունով:

Պար են բռնել հանդեսի մասնակիցները
ու փորձում են իրենց ուրախությունն ու հրճվածքը
կիսել միմյանց հետ:

Արագ կանցնեն, կչքանան
Անուրջները այս բարի,
Սակայն մանկան վառ սրտի մեջ
Նրանք երբեք չեն մարի:

Շրջան կազմենք, պար բռնենք,
Երգենք, ծափ տանք ու թռչենք,
Որ բոյ քաշենք, մեծանանք,
Այսպես փոքրիկ չմնանք:

Ձմեռ պապն էլ հպարտ է իր թռչուններով,
ուրախ նրա համար, որ իր գալուստով հաճե-
լի ակնթարթներ նվիրեց
նրանց: Նա լավ գիտի, թե
ինչ է նշանակում և ինչ ար-
ժեք ունի ուրախությունը Ար-
ցախի երեխաների համար:
Եվ այդ պատճառով էլ շատ
գոհ էր, որ իր առաքելությունը
բարով կատարեց: Հրա-
ժեշտի պահին էլ հույս
հայտնեց, որ այդ ուրախ
տրամադրությունը մեր երե-
խաներին ու Արցախի աշ-
խարհին կուղեկցի ամբողջ
տարվա ընթացքում: Թող
Նոր տարին նոր ձեռքբե-
րումներով պսակի յուրա-
քանչյուրիս ջանքերը: Ամա-
նորի թարմ շունչը մտնի մեր
ընտանիքները,
որտեղ հանուն զավակների
հարգել գիտեն
ու մեծարել, որտեղ գիտեն
նվիրվել ու պա-
հանջել, որտեղ կարողանում են
սահման ու
Հայրենիք պաշտպանել,
որտեղ գիտեն ազն-
վորեն սիրել ու փայտաբեր
ընտանեկան սր-
բությունները:

Թող խաղաղ լինի աշխարհը
ամբողջ,
Ու թող խաղաղվեն սրտերը
խռով,
Թող ապրի մարդը
կամքով աներեր,
Ուրախությունը տիրի
ամեն տեղ:

Ու սկիզբ է առնում շնորհավորանքների
շղթան: Բոլորի շուրթին ամենասուրբ բառն է՝
խաղաղություն, որ օդ ու ջրի պես
այսօր անհրաժեշտ է մեր
ժողովրդին, որ աշխարհի
բոլոր բարիքներից
առավել դրա կարիքն
ենք զգում:

Ստեղծում էր հրաժեշտի պահը,
սակայն երեխաները
չէին ուզում բաժանվել Ձմեռ

պապից. չէ՞ որ միշտ նա է բերում
կախարդական բանալին: Հավաքվել էին
նրա շուրջը, հետաքրքրությամբ դիտում էին
նրա ճերմակ մորուսը, նվերներով լի
պարկը ու փորձում ինչ-որ
գուշակություններ անել:

Անզուգական այս տոնը մեր
մանուկների ցնծությունների ու
հետաքրքրությունների աղբյուրն է,
հետաքրքիր ակնթարթներ, որ
ամուր դաջվում են նրանց
հիշողություններում: Մենք էլ
փորձենք մանուկների հետ
երազանքներ փայտաբեր ու
ապրել վառ հույսերով՝ գոնե մի
պահ կտրվելու այն իրականու-
թյունից, որի ճիրաններում
հայտնվել ենք ազգովի: Թող
ամպամած հորիզոններում
ճառագի արշալույսի կարմիրը:

Պետք է նշել, որ այս տոնական
օրերին Արցախի երեխաներին ուրա-
խություն են պարզում ոչ միայն
հիմնարկ-ծեռնարկությունները,
այլև բարի, մարդասեր բարեգործ
անհատներ ու նաև Արցախում
տեղակայված ռուս խաղաղապահները,
որոնք, շրջելով մեր բոլոր
բնակավայրերը, երջանիկ
պահեր են նվիրում երեխաներին:

Ասկերանի միջնակարգ դպրոցում
կազմակերպված այս համդեսի նա-
խօրյակին ռուս խաղաղապահները
այցելել էին դպրոց, ամանորյա
նվերներ բաժանել 2 տարեկանից
մինչև 11 տարեկան (5-րդ
դասարան) երեխաներին:
Ռուս խաղաղապահների մար-
դասիրական այս քայլը բարձր են
գնահատել դպրոցում և արժանին
մատուցել նրանց. դպրոցի
մանկավարժական և աշա-
կերտական կուլեկտիվները
ողջունել են նրանց ամանորյա
տոնի առթիվ, որը, իրոք,
կախարդական էր և՛ երեխաների,
և՛ մեծերի համար, հայտնել
իրենց երախտագիտու-
թյունը Արցախի խաղաղ կյանքի
պահպաններին, որոնք մանկավարժների
հետ մեկտեղ ոգևորում են
երեխաներին ամանորյա
նվերներով: Դպրոցի երեխաներն
էլ իրենց հերթին էին նախապատրաստվել
այդ համդեսին իրենց տոնական
ելույթներով: Թող Նոր տարին
լինի բարու, երջանկության,
սիրո, խաղաղության, հաջողությունների,
հրաշքների, միասնության,
բարգավաճման ու նոր ձեռք-
բերումների տարի: Թող այն
գոնե ակնթարթներով մեզ
վանի տխրությունն ու ծանր
ապրումները: Գտնվելով իրենց
հարազատ-



ներից որոշակի հեռավորության վրա՝
խաղաղապահները իրականացնում են
շատ կարևոր առաքելություն, որի
համար էլ շնորհակալություն հայտնեցին
նրանց:

Տոնական միջոցառումները
մեկնարկել են, բայց դեռ չեն ավարտվել:
Թող ամենուր թևածեն մեր
մանուկների՝ ժպիտով լի աչքե-
րը, ուրախ տրամադրությունը,
անհոգ մանկությունը:

Թող բարի մարդկանցով լցվի
աշխարհը, ու չարը իսպառ
վերանա կյանքից. Թե կան
սրտեր՝ չար նախանձով,
դառնան բարի ու ներող,
Եվ ուրիշի ուրախ կյանքով
խանդավառվեն այս գիշեր...
Շնորհավոր Ամանոր և Սուրբ
Ծնունդ: Գալուստը բարի,
հզոր Կագր:

Ս. ՄԵԼԵՈՒՅԱՆ

ԱՄԱՆՈՐՅԱ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Արեն ՍԱՐՈՒՄՆԱՆ, Նախիջևանիկի միջ-
նակարգ դպրոցի պատմության ուսուցիչ.

- Հայ ժողովուրդը և հատկապես՝ արցա-
խահայությունը, այսօր ապրում է իր պատմու-
թյան ամենաճակատագրական ժամանա-
կաշրջանը, որովհետև ներկայիս զարգացում-
ներից է կախված Հայաստանի ինչպիսին լի-
նելը: Այս ժամանակաշրջանը կարող է դառ-
նալ ոչ միայն հայ ժողովրդի, այլև ամբողջ
տարածաշրջանի ժողովուրդների պատմու-
թյան մի նոր դարաշրջանի սկիզբ, և մեզ
կախված է կախված, թե ինչպիսին է լինելու
այդ սկիզբը: Մենք պետք է գործենք շատ
ճկուն, նպատակասլաց ու հետևողական
ինչպես արտաքին բնագավառում, այնպես
էլ ներքին կյանքում, մեր ամենօրյա
աշխատանքում:

Այս նոր՝ 2022-ի ընթացքում մեզ
կարևոր պետք է լինի իսկական քաղաքա-
ցի, պետության և հասարակության լիարժեք
անդամ: Այդ հասարակական պահվածքը
կամ ինքնագրաստությունը ես պատկերացնում
եմ պահանջատեր լինելու մեջ առաջին
համայնքային կյանքում, առանձին
հիմնարկների ու բնագավառների
պատասխանատու պաշտոնյաների կողմից
իրենց պարտականությունների կատարման
առումով: Այս գործընթացը պետք է տեղի
ունենա մեկ կարգախոսով՝ «Ես»-ի
ստորադասումը հզոր «Մենք»-ին,
այսինքն՝ պետք է բացառվի մեկ
մարդու կամ անհատական շահը
հասարակության կամ պետական
շահի նկատմամբ գերիշխող լինելը:
Ես լավատես եմ հայ ժողովրդի
ներուժի, դժվար պահերին ինքնակազմակերպվելու
կարողության հանդեպ և ցանկանում եմ,
որ 2022 թվականը դառնա մի նոր
Ջարթոնքի սկիզբ, որ բոլորս լինենք
առողջ, երջանիկ և հայրենասեր,
հարգենք մեր թվացյալ խաղաղության
համար մինչև հիմա իրենց կյանքը
նվիրած գոհվածների հիշատակը
և վիրավորների, նրանց ընտանիքների
նկատմամբ դրսևորենք հոգատարություն:

Թող Հայոց աշխարհը վերջապես
խաղաղություն կերտի և իր արժանի
տեղը զբաղեցնի համայն աշխարհում:

Արևիկ ԲԱԼԱՅԱՆ, Խրամորթի միջնակարգ
դպրոցի դասվար.

- Արցախը նորովի կառուցելու տրամաբա-
նությամբ ենք ուզում սկսել նոր՝ 2022 թվակա-
նը: Այն մեզ համար պիտի դառնա սիրո ու հա-
մերաշխության, հույսի ու լավագույն սպա-
սումների տարի:

Պատմության գիրքը նետենք այն
բոլոր դժվարությունները, աղետներն ու
արհավիրքները, որ ունեցանք մոտիկ
անցյալում և հույսով ակնկալենք, որ
նախորդ տարիներին չհրականացած
մեր բոլոր իղձերն ու ցանկություններն
Ամանորը իրողություն դարձնի:

Սահմանափակ հայրենի Խրամորթ
գյուղի երեխաներն այսուհետ ոչ մի
պայթյուն թող չլսեն, և նրանց
մանկական աչքերում թող փայլի
երջանկությունը: Թող այլևս ստիպված
չլինենք ևս մի անգամ տեղահանվելու
ու ապրելու կարոտի ծանր զգացումներով:

Արցախ աշխարհիս մաղթում են
խաղաղություն, բարեկեցություն,
անսահման հավատալի հանդեպ:

Միանաք բոլոր բարենախառններին ու
հավատով սպասենք մեր գեղատեսիլ
հայրենիքի վերածնունդին:

Թող ամենահզոր Կագրը անազատության
ճիրաններից փրկի մեր կորուսյալ
հայրենիքը և ապացուցի աշխարհին,
որ քնած թե արթուն, նա
միշտ զգուշավոր է և հրաշքներ
կարող է գործել:

Թող վիստ հոգիներում առկայծի
լույսը, ու հաղթի բարին:
Շնորհավոր Ամանոր և Սուրբ
Ծնունդ...

Ներկայացրեց
Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆԸ

ԴԻՄԱՆԿԱՐ

ՄԵԾԱԳՈՒՅՆ ԿՈՉՈՒՄԸ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺ



Կրթական համակարգի առանձնահատկությունը, լինելով սերունդների կրթության և դաստիարակության խթանիչ ուժ, նոր մարդու ձևավորումն է:

Աշխարհը կրթվել և կրթվում է մանկավարժների շնորհիվ: Սա համեստ մասնագիտություն է, նվիրյալի գործ, որի գործունեության հաջողությունը կախված է մեծ ջանքերից ու նվիրաբերումից, բնատուր օժտվածությունից, զի ամեն գիտուն մարդ չէ, որ մանկավարժ է: Եթե անհատը կարողանում է դրսևորել իր անձնային որակները տվյալ ոլորտում, ուրեմն նա կայացած է: Տարիների ընթացքում ձեռք բերած փորձի շնորհիվ դառնում է փորձառու և կոփված մասնագետ: Ճիշտ է ասված, որ մանկավարժությունը կոչում է: Դա երեխային հասկանալու, նրան շտկելու և առաջ մղելու, ամեն առաջադիմությունն արձատարելու, խրախուսելու և հաջողությունների հասցնելու ոչ միայն մասնագիտություն է, այլև նվիրում ու կոչում, որով պիտի օժտված լինես:

Ես այս տողերը գրում եմ ուրբիս կտրվածքի պատճառով առժամանակ անկողնում գամված վիճակում և ժամանակ ունեն խորհելու անցածի և անելիքների մասին: Մտքիս հայացքով անցնում են մեր դպրոցի՝ Շուշիի Խ. Աբովյանի անվան կրթօջախի բոլոր տնօրեններն ու ակնառու մանկավարժները՝ Շահեն Յարիյան, Նազիկ Նալբանդյան, Յանիկ Միրզոյան, Էլլադա Սարգսյան, Արզենտինա Յարյապետյան, Լիդա Մկրտչյան, Էմմա Աբրահամյան, Հասմիկ Ավանեսյան, Գոհար Սարգսյան, Սահյա Յարյապետյան:

Այսօր հնամայն ու նոր ավանդույթները հետևող հինավուրց կրթօջախը ղեկավարում է Լիանա Յարյապետյանը, որի մասին հատուկ կարելի է ասել՝ ժամանակակից դպրոցի պահանջներին համապատասխանող տնօրեն: Սկսած 2015թ. փետրվարից՝ Լ. Յարյապետյանը դպրոցի տնօրենն է: Նրան հաջողվել է պահել կուռ կոլեկտիվի դրվածքը և այդ հենքի վրա իրագործել նոր մարտահրավերներ: Նրբանկատ է, խստահայաց, և ոչ մի հարց բարձրորդի չի մնում: Սիրում է հստակություն և կարգ ու կանոն: Մանկավարժի աշխատանքը չափվում է արդյունքներով: Ախր եռուզեռով լի էր մեր դպրոցը: Քանի՞ քանի բաց դասեր, անկրկնելի միջոցառումներ են կազմակերպվել այս գեղեցիկ, այս լավագույն կրթօջախում: Սակայն ամեն ինչ մնաց այնտեղ՝ բարձունքի քաղաք Շուշիում... Դրանք հուշեր են, քանի մասունքներ, որ չպիտի մոռացության մատնվեն: Երբ նոր էր նշանակվել տնօրեն, ասում էր, որ պետք է առաջ մղենք մասին տնօրեն Նազիկ Նալբանդյանի ավանդները: Գնալով այնտեղ էր նախապես հարցազրույցում և հասնում դրանց իրագործմանը: Մի անգամ մի դասարանի երկու աշակերտ ուշացել էին դասից: Տնօրենը Կարեն Ավագիմյանն էր, սաստեց այդ աշակերտներին՝ շեշտելով՝ համարձակվում եք ուշանալ, այն էլ Մուրադովնայի դասից: Մի քանի ամսվա ուսուցչուհի էր, երբ ծաղիկներով ողողվում էր նրա աշխատասեղանը: Շատ էի աշակերտների շուրթերից լսում՝ Լիանա Մուրադովնա: Մի անգամ նրան հարցրի՞ ո՞րն է Ձեր մոտիվացիան, հաջողության գաղտնիքը: Նա բազմաճանակ ժպտաց: Գաղտնիք չէ, այլ ակներև, որ նրա հաջողության բանալին արդար խստապահանջությունն է և հետևողականությունը: Ամենաարդար գնահատականը տալիս է աշակերտը, որը գնահատում է լավ մանկավարժին:

Դեռ երիտասարդ տարիներին նա արժանացել է «Ավագույն երիտասարդ ուսուցիչ» մրցանակին:

Չեչտ չի եղել և Լ. Յարյապետյանի համար: Դեռևս 6-րդ դասարանի աշակերտ էր, երբ սկսվեցին տուժալիքային ջարդերը: Ընտանիքը տեղափոխվեց Արցախ՝ Շուշի, որտեղ և սովորել է նույն դպրոցում, ապա և ավարտել ԱրՊՀ ռուսաց լեզվի բաժինը: Քսաներեք տարի իր մանկավարժական գործունեությունն է ծավալել՝

արժանանալով բազմաթիվ պատվոգրերի: Ամենամեծ մրցանակն այն սերն է, որ վայելում է արդեն փորձառության ճանապարհ անցած մանկավարժը, որից սովորելու շատ բան ունի կոլեկտիվը, քանզի մանկավարժի կոչումը նրա մոտ բնատուր է, նա կարող է կարգալ աշակերտի հոգին: Երկրորդ տարին է՝ Շուշիի Խ. Աբովյանի անվան կրթօջախը, ինչպես որ Շուշիի մյուս ուսումնական հաստատությունները, վերաբացվել է Ստեփանակերտում: 2021թ. հունվարից մենք տեղակայվել ենք մայրաքաղաքի հ. 2 դպրոցում: Աշխատում ենք երկրորդ հերթ, բայց չենք թերսնում ոչ մի հարցում: Դպրոց է հաճախում շուրջ 300 աշակերտ: Շուշիի աշակերտները նախընտրեցին իրենց ուսուցիչներին, որոնք ծնողի պես են վերաբերվում իրենց սաների հետ: Ինչպես միշտ, դպրոցի տնօրենն ամենադժվար աշակերտների լավագույն դաստիարակն է: Նրանից ակնածում են սաները, զգաստանում, պատի տակով շարվում, լրջանում: Այդպես տեսել են Բահատուր Դավթյանի օրոք, երբ սովորում էի Ստեփանակերտի հ. 1 դպրոցում: Լինելով կրկնակի տեղահանված՝ Լ. Յարյապետյանը չկորցրեց հոգու արիությունը:

Կարճ ժամանակահատվածում Լ. Յարյապետյանի գլխավորությամբ և պետական հոգածությամբ կազմակերպվեց դպրոցի ուսումնական գործընթացը, որից անմասն չէր դպրոցի ոչ մի մանկավարժ: Մանկավարժական կոլեկտիվի ճնշող մեծամասնությունը, բռնի տեղահանման բոլոր դառնությունները հաղթահարելով, համախմբված իր տնօրինության շրջանում վեհ գործը: Իսկ ես թեկուզ հիվանդ, բայց վաղվա օրվա հանդեպ հավատով լցված, մտաբերում եմ, որ այս տարի սեպտեմբերի 13-ին լրացել է մեր հարգարժան տնօրենի 45-ամյակը, տնօրեն, որ լի է զավաճածությամբ ու լավատեսությամբ, առաջիկա լավ օրերի հույսով և մանկավարժական բուռն գործունեությամբ: Նրա մասին վստահաբար կարելի է ասել՝ օժտված է մանկավարժական տաղանդով և զովելի ուսուցչուհի է, որի համար ինքն այս ուստարում Ուսուցչի օրվա առթիվ պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով:

Վ. ՅԱԿՈՒՅԱՆ

ՏԱՐԵՄՈՒՄԻ ԶՐՈՒՅՑ ԶԱՐԱՉԱՏ ԵՐԿՐԻՍ ՇԵՏ

Իմ հին ու նոր, իմ մշտանմա երկիր, տխուր ես, գիտենք, զավակներդ են խոշտանգվել, խարխուլվել է խամսայական մեղքությունների հաստատությունը, Շուշին ու Յարյապետյան դավադիր ծիրաններում են հայտնվել, ու դու վիրավոր մռնչում ես, իմ պապենական երկիր Արցախ:

30 տարվա անկախության ընթացքում բարձրացար, զորացար: Խոյացավ քո ոգեղեն ամրոցը՝ ծիծողուն, փթթուն, բարգավաճ: Ստեղծեցիր օրինյալ լիություն, ուր ամեն մի ընտանիք գտել էր իր հույսի դուռը:

Երեք տասնամյակ քեզդ փռած՝ հովանի էիր լինում քո տիրույթներին, որոնք Արաբսի հովիտներից հասնում էին Օմարի բարձունքները և անդին տարածվում: Ամեն մուտք գործողի սիրով հայտնում էիր. «Ազատ Արցախը ողջունում է ձեզ»:

Հասցրիր անել այն, ինչքան կարող էիր, ու ժպիտը թևածում էր երկրում, պապենական երկրում: Սակայն անհեղ ու անհավասար կռիվ եղավ տարածաշրջանի թուրքական միավորումների ու քեզ հետ: Հայոց լեռնաշխարհը ներքաշվեց դաժան պատերազմի մեջ: Մահաբեր կրակ էր թափվում երկնքից, իսկ գինվորդ անպաշտպան էր ընդդեմ ամենակուլ ոսոխի: Մարտադաշտ եղավ լայնքն ու երկայնքդ, խորքդ ու բարձունքդ: Ընկան զավակներդ, կորագցին հայրենապաշտպան բերդերդ, բայց կանգուն ես՝ վիրավոր, արնաքամ: Կանգուն ես, կաս, կլինես...:

Մեծ թուրանի երախը պիտի փակել: Ինչքան դիմակայել ես, այնքան դիմանալու ես դարեդար, զի այստեղ ապրող հայ մարդը ազատական է, շինական, սթափ, արարող ու պաշտպան:

Նորից բահն ուսին՝ շենացնում է հողդ երկրի մարդը: Անեղ պատերազմի ավարտից հետո երկրիդ մարդկանց մեծ մասը հետ եկավ: Ամենուր երդիկներից ծուխն է ծխանում, ու հայ մանուկը խաղում է քո հանդ ու ջրում: Տերյանն ասում էր՝ «Արյունոտ ուղի, երանի՛ նրան, ով հայրենական տուն ունի հիմա»:

Երանի՛, բայց 40 000 զրկված է իր հայրենի տնից: Այս խոր ցավն է մեզ կիզում: Այս ու այն կողմ ընկած՝ հազիվ են մի անկյուն գտել կամ դեռ դեգերում են... Արցախցին ապրի հյուրանոցում կամ վարձով տա՛մ, որն անգամ դժվար է գտնել: Ի վերջո, միակ ելքը այս վիճակից դուրս գալն է, հնարավորություններ ստեղծելը:

1992թ. հաղթական պատերազմից հետո մեզ ճնշող սովը հաղթահարեցինք, այս պատերազմում կորցրած մեր տարածքները պիտի հետ բերենք և որոշակի կարգավիճակի հասնենք: Այսպես ապրել չի լինի: Մեր լի օջախները թշնամին խլեց, թալանեց, ավերեց: Մեր կյանքի պատմությունը ջնջվեց հաղթական ու վերստին թշնամու ձեռքն անցած Շուշիում, հնավանդ Յարյապետյան մեր մեղքական ապարանքների մնացյալ քարերը սասանվեցին, ու դժոխակ վիճակ ստեղծվեց մեր ազատատենչ Արցախում: Բայց Արցախը կա, մնում է, նրա տակ բաբախում է 100 000-ից ավելի հայ մարդու սիրտ, որ ցավում է, սիրում ու մտորում արցախավարի:

Մոտենում է 2022 թվականը: Եվ մի Աստծո տարի իր դռներն է բացում մեր առջև: Բարենաղթանքի խոսքերը կիսաավաճ են մեզ, օրհներգեր կինչեն, ու Արցախը կշարունակի կայուն մնալ իր դիրքում:

Բացում են Վիտյա Յարամիչյանի՝ տարվա ամենաշքեղ գրառումը և կարդում. «Արցախն այն երկրամասն է, որ հայրուրանյակներ մնացել է հայ, դիմացել է պարսկական, ռուսական, ադրբեջանական ու ծաղունների՝ ի տարբերություն Նախիջևանի, Խորհրդային հսկա կայսրություն է փլուզվել և այժմ էլ դարձել է համաշխարհային գործոն: Կուլ չեք տա, կխեղդվեք»:

Սա արցախցու կամքի արտահայտությունն է: Ծնորհավոր լինի քո հարատևության այս Նոր տարին, իմ բարի կամքի երկիր Արցախ:

Վարդիթեր ՅԱԿՈՒՅԱՆ

Շուշիի Խ. Աբովյանի անվան միջն. դպրոցի ուսուցչուհի

ՆՈՐ ՏԱՐԻՆ ԹՈՂ ՄԵՐ ԱՉԳԻ ՀԱՄԱՐ ԲԱՐԵԲԵՐ ԼԻՆԻ...

Շուշիում մեզ է ու մշուշ է հիմա, Դիզակ-Յարյապետյան՝ մոլորակներ:

Բայց մառախուղն այդ ետ կքաշվի, ու նորից մեր առջև վեր կհաննի մեր թագ ու պսակ Շուշին, մեր Յարյապետյան իր գյուղ-ավաններով:

Դարձյալ ու նորից տենչում ենք գրկել ձեզ, մեր գյուղ ու ավաններ, Քաշաթաղ և Քարվաճառ...

Տարեմուտի այս գիշեր ու Սուրբ Ծնունդին կամենում ենք, որ Երևանում ու Ռուսաստան-Ամերիկաներում դեգերած և ցավալիորեն բույն որոնող մեր քույր-եղբայրները տուն դառնան, որպեսզի Արցախ-Ղարաբաղը մերը մնա: Իսկ ի՞նչ է պետք դրա համար: Պետք է կաղնի ծառի պես արմատները մեր հողում խոր խրած՝ ապրենք հրաշք մեր երկրում: Որ հողվորը պիտի բռնի գութանի մաճը, որ «օղը, թորը և պեհին կորը» միշտ ամուր լինեն նրա ձեռքում, և աշխատասիրությամբ ու կամքի ուժով հաղթահարի դժվարություններն ամեն ու հաղթանակներ կռի, որ ընտանիքներում շատ բալեք ծնվեն, աճեն-բազմանան, ու դրանով մեր երկրի վերածնունդը լինի:

Եվ հարատևելու իմաստը ավելի խոր հասկանալու: Ռազմավարության և մարտավարության գաղտնիքներին լավ տիրապետելու:

Մեր գոյատևման եռությունը ու երաշխիքը ավելի լավ և

խոր յուրացնենք:

Եվ թող որ էնժամ թունանյանական Լոռիից բերած հազար ողջույններ սփռելով շուրջը մեր՝ գոչենք ու զրնգացնենք աշխարհով մեկ. «Իմ նոր հայրենիք, հզոր հայրենիք...»:

Որ Իսահակյանը «մեր պատմիչների և գուսանների» ուղեկցումով իր խոսքն ասի: Բակուցի Յագրոն բարձր ու զիլ հնչեցնի ծիրանի փողը... Ու Չարենցն իր բարձր կոչ-կանչով գոչի՝ հազարաձայն. «Մենք այլևս ամբողջներ չենք խելագարված, այլ հավաքական հզոր ուժ»:

Ու հայոց գեղեցկուհիները և քաջ տղաները խրոխտ շուրջպարով իրենց երգ-ասքը հյուսեն Արագածից մինչև Ամարաս:

Մեր բազմահազար սուրբ նահատակների արյունով մնացած մեր այս շա՛տ փոքրացած հողակտորում թող որ հետայսու խաղաղությունը տիրի-թևածի, իսկ մանուկների գլխավերև լինի անխռով ու անամպ երկինք:

Եվ թող որ այս Նոր տարուն և Սուրբ Ծնունդին համոզվենք նորից ու կրկին, որ՝ Քրիստոս հարկավ ծնավ և հայտնեցավ, որ իր Սուրբ Լույսը տարածի աշխարհներում ամեն՝ հեռու և մոտիկ:

Նորա ԳՐԻԳՈՐՅԱՆ

Թող միշտ դողանցի զանազ մանկության...



ԱՄՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչներից է հանրակրթական առարկաներից կազմակերպվող ամենամյա օլիմպիադան, որը որոշակիորեն բացահայտում է կրթօջախների սովորողների գիտելիքների մակարդակը և այդ ուսումնական գործընթացը կազմակերպող մասնակարծների աշխատանքի արդյունքը:

Հանրակրթական առարկաների համադեպ հասուն կարողություններ ունեցող և առանձին հետաքրքրություն ցուցաբերած սովորողների վերահանման, ինչպես նաև գիտության հիմունքների ուսումնասիրման նկատմամբ սովորողների շրջանում հետաքրքրություն առաջացնելու նպատակով ԱՀ ԿԳՄՍ նախարարի 2021թ. դեկտեմբերի 2-ի հ. 655/Մ հրամանի համաձայն հանրակրթական դպրոցներում մինչև դեկտեմբերի 10-ը անց են կացվել օլիմպիադայի դպրոցական՝ առաջին փուլը, իսկ մինչև դեկտեմբերի 30-ը երկրորդ՝ շրջանային փուլը:

Ասկերանի շրջկարգակազմի կրթության բաժնի ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ շրջանային փուլի օլիմպիադայի՝ հայտ ներկայացրած մասնակիցների թիվը կազմել է 277: Մասնակցության առու-

րանի մ/դ, մյուսներինը ցածր է:

10-րդ դասարանից մասնակցել է երկու աշակերտ, արդյունք չկա, 11-րդ դասարանից մեկ աշակերտ՝ բացասական արդյունքով, 12-րդ դասարանից՝ չորս աշակերտ: Մեկ հոգի Մարիամ Ալեքսանյանը (Նորագյուղի մ/դ), վաստակել է 12 միավոր:

Հայոց լեզու առարկայից հայտ ներկայացրած 29 հոգուց մասնակցել է 28 աշակերտ: 7-րդ և 8-րդ դասարաններից մասնակից աշակերտ չկա: 9-րդ դասարանի բարձր միավորը կազմել է 15,6 (Ավանեսյան Արմինե, Պատարայի մ/դ), 2-րդ արդյունքը՝ 14,4 միավոր (Հայրապետյան Անգելինա, Շոշի մ/դ), 3-րդը՝ 13,3 (Ավանեսյան Լիա, Աստղաշենի մ/դ):

10-րդ դասարանի երեք մասնակիցներից առավելագույն՝ 15,1 միավորը վաստակել է Անետա Խաչատրյանը (Խնածախի մ/դ): 11-րդ դասարանից 10 մասնակիցների թվում առաջատար է Հրանտ Մուսյանը (13 միավոր, Խնածախի մ/դ): 12-րդ դասարանում գրանցվել են հետևյալ արդյունքները. 17,25 (Հայրապետյան Լուսինե, Նորագյուղի մ/դ), 17,15 (Գալստյան Ռաբասանա, Խրամորթի մ/դ), 16,4 միավորով երկու հոգի (Սամվելյան Մայրանուշ, Պա-



մով ըստ առարկաների պատկերն այսպիսին է. մաթեմատիկա՝ 66 հայտավորված, 61 մասնակից, հայոց լեզու՝ 29/28, ռուսաց լեզու՝ 32/29, պատմություն՝ 15/13, հայ գրականություն՝ 5/5, աշխարհագրություն՝ 23/23, անգլերեն՝ 18/15, քիմիա՝ 4/4, ֆիզիկա՝ 5/4, կենսաբանություն՝ 9/9, Հայոց եկեղեցու պատմություն՝ 11/11, ՆԶՊ՝ 10/9 մասնակից:

Մաթեմատիկա առարկայից առաջին բարձր արդյունքը գրանցել է Այգեստանի մ/դ 6-րդ դասարանի աշակերտ Աշոտ Միրզոյանը (16 միավոր), երկրորդը՝ Իվանյանի մ/դ 6-րդ դասարանի աշակերտուհի Մարիամ Գաբրիելյանը (14 միավոր), երրորդը՝ Խաչենի մ/դ 8-րդ դասարանի աշակերտուհի Անայա Ստեփանյանը (13 միավոր):

Ըստ դասարանների պատկերն այսպիսին է. 5-րդ դասարանի ամենաբարձր միավորը կազմել է 12 (Արզումանյան Մանվել, Ասկերանի մ/դ), երկրորդ արդյունքը՝ 10 միավոր (Աղաբաբյան Գոռ, Ասկերանի մ/դ և Ղազարյան Արարատ, Աստղաշենի մ/դ): 6-րդ դասարանում համապատասխանաբար 16, 14, 12 միավորներ են վաստակել Աշոտ Միրզոյանը (Այգեստանի մ/դ), Մարիամ Գաբրիելյանը (Իվանյանի մ/դ), Սանասար Սարգսյանը (Նախիջևանի մ/դ):

7-րդ դասարանում բարձր միավորը կազմել է 10 (Բաբայան Աշոտ (Խնապատի մ/դ) և Աղաջանյան Գոռ (Հովսեփավանի հ/դ)):

8-րդ դասարանից աշակերտների մասնակցությունը քիչ է եղել (7 հայտ, 6 մասնակից), և արդյունքներն էլ ըստ հաջորդականության կազմել են՝ 13 միավոր (Անայա Ստեփանյան, Խաչենի մ/դ), 10 միավոր (Լիա Գրիգորյան, Հովսեփավանի հ/դ):

9-րդ դասարանից և մասնակցել է 6 աշակերտ, և բարձր արդյունքը կազմել է 10 միավոր (1 հոգի՝ Ավարդյան Արեն, Ասկե-

տարայի մ/դ, Մարտիրոսյան Լիլիթ, Նորագյուղի մ/դ):

Հայ գրականությունից մասնակցել է 5 աշակերտ (9, 10 և 11-րդ դասարաններ), և հուսադրող արդյունք չկա: 12 միավոր է վաստակել Ասկերանի մ/դ աշակերտուհի Սոնա Ղահրամանյանը (10-րդ դասարան):

Պատմություն առարկայից 13 մասնակիցների առաջին երեք արդյունքները կազմում են՝ 12,7 միավոր (Բարսեղյան Էլինա, 9-րդ դասարան, Նորագյուղի մ/դ), 11,25 (Տեր-Հարությունյան Դիանա, 12-րդ դասարան, Ասկերանի մ/դ), 10,25 (Բախչիյան Կարինե, 8-րդ դասարան, Ասկերանի մ/դ):

Ռուսաց լեզվի օլիմպիադայի արդյունքները համեմատաբար զոհացնող են: Ամենաբարձր՝ 35,35 միավորը վաստակել է Ասկերանի մ/դ 12-րդ դասարանի աշակերտուհի Դիանա Տեր-Հարությունյանը, երկրորդ արդյունքը՝ 32,45 միավոր, Իվանյանի մ/դ 12-րդ դասարանի աշակերտուհի Վիկտորյա Մինասյանը: Նրան հաջորդում է Ասկերանի մ/դ 12-րդ դասարանի աշակերտ Արթուր Գաբրիելյանը՝ 30,45 միավորով: 11-րդ դասարանի բարձր միավորը կազմել է 25,8 (Մելքունյան Ռուզաննա, Ասկերանի մ/դ): 24,4 միավորով նրան հետևում է Խնածախի մ/դ աշակերտուհի Վերոնիկա Աղաջանյանը: 10-րդ դասարանի երկու աշակերտուհիներ՝ Անետա Խաչատրյանը (Խնածախի մ/դ) և Էլլա Մինասյանը (Իվանյանի մ/դ), ունեն 24,35-ական միավոր: Նրանց հաջորդում է Ալյոնա Գաբրիելյանը (Նախիջևանի մ/դ)՝ 22,85 միավորով: 9-րդ դասարանից Իվանյանի մ/դ աշակերտ Վալերի Պողոսյանը 28,25 միավորով առաջատարն է, երկրորդ տեղը՝ 24,8 միավորով, զբաղեցնում է Նորագյուղի մ/դ աշակերտուհի Դիանա Գրիգորյանը, երրորդ տեղը՝ 24,75 միավորով՝ Յուրի Հայրապետյանը (Խնապատի մ/դ):

Քիմիա և ֆիզիկա առարկաներից ընդհանրապես արդյունք չի գրանցվել, ինչը շատ մտահոգիչ է:

Աշխարհագրության 23 մասնակիցներից մեկ աշակերտ՝ Սանասար Սարգսյանը (Նախիջևանի մ/դ, 6-րդ դասարան), վաստակել է 17,3 միավոր, 2 հոգի՝ 15-ական միավոր (Խաչատրյան Լյուդմիլա, 12-րդ դասարան, Պատարայի մ/դ, Դանիելյան Էրիկ, 12-րդ դասարան, Նորագյուղի մ/դ): Երրորդ՝ 14 միավոր արդյունքը գրանցել է Ասկերանի մ/դ 9-րդ դասարանի աշակերտ Մաքսիմ Թևոսյանը:

Կենսաբանության օլիմպիադային մասնակցել է 9 աշակերտ, որից 18 միավոր է վաստակել Ասկերանի մ/դ 12-րդ դասարանի աշակերտուհի Լիլի Գրիգորյանը, 14 միավոր՝ Նորագյուղի մ/դ, 12-րդ դասարանի աշակերտ Էրիկ Դանիելյանը: 12,5-ական միավորով 3-րդ տեղը կիսում են Էլեն Ղահրամանյանը (9-րդ դասարան, Նորագյուղի մ/դ) և Նանա Գալստյանը (10-րդ դասարան, Նորագյուղի մ/դ):

Անգլերենից սովորողները ցուցաբերել են այսպիսի արդյունք. հայտ ներկայացրած 18 աշակերտից շրջանային փուլին մասնակցել է 15-ը: 18,4 միավորով ցուցակը գլխավորում է Նորագյուղի մ/դ 9-րդ դասարանի աշակերտուհի Էլեն Ղահրամանյանը, 2-րդ տեղում է Ավետանա Շահրամանյանը (9-րդ դասարան, Ասկերանի մ/դ)՝ 17,6 միավորով, 3-րդ հորիզոնականը զբաղեցնում են Մոնիկա Արզումանյանը (9-րդ դասարան, Ասկերանի մ/դ) և Անի Շահրամանյանը (12-րդ դասարան, Ասկերանի մ/դ)՝ 16,4 միավորով:

Բարձր միավորներ չեն գրանցվել հայոց եկեղեցու պատմություն առարկայից. 10,5 միավոր՝ Նատելլա Հայրապետյան (11-րդ դասարան, Խնապատի մ/դ), 10,25՝ Նանար Հարությունյան (9-րդ դասարան, Խնապատի մ/դ), 9,5՝ Հրայր Բաղդասարյան (7-րդ դասարան, Խրամորթի մ/դ):

ՆԶՊ առարկայից բարձր արդյունք է գրանցել միայն Խնածախի մ/դ 9-րդ դասարանի աշակերտուհի Թամարա Սարգսյանը՝ 17,2 միավոր:

Առարկայական օլիմպիադայի շրջանային փուլի վերոնշյալ վերլուծությունը փաստում է, որ հանրակրթական դպրոցների ուսուցիչները ղեկն շատ անելիքներ ունեն: Անհրաժեշտ է, որ ամեն ուսուցիչ լրջորեն խորհի այս իրողության շուրջ և ուղիներ փնտրի սովորողների շրջանում իր առարկան ավելի հետաքրքիր ու գրավիչ դարձնելու համար: Ամենակարևոր հանգամանքը թերևս պետք է համարել ուսուցիչների պատասխանատվության բարձրացման միտված հետևյալ պայմանները.

ա) սովորողների հետ աշխատել ոչ թե առարկայական օլիմպիադայի նախօրյակին, այլ ուսումնական տարվա ընթացքում.

բ) աշխատել ժամանակին կողմնորոշել սովորողներին առարկան ճիշտ ընտրելու գործում.

գ) մասնակցության համար լրջորեն զբաղվել աշակերտի հետ. ապահովել ոչ միայն նրա մասնակցությունը, այլև ցանկալի արդյունքը.

դ) անընդհատ կապված լինել գիտության նոր նվաճումների հետ և դրանք արժանավայել մատուցել սովորողին՝ չափանիշ ունենալով այն հանգամանքը, որ նորը միշտ հետաքրքրում է սովորողին.

ե) դուրս գալ դասագրքի սահմաններից և լրացուցիչ հետաքրքիր աղբյուրներ օգտագործել՝ դրանով իսկ հետաքրքրություն սերմանելով առարկայի հանդեպ:

ԿԳՄՍ նախարարությունը 2021-2022 ուստարվա ԱՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցելու համար Ասկերանի շրջանին հասկացրել է 50 տեղ:

Հաջողություն մաղթենք բոլոր մասնակիցներին:

Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՄՈՒ ԿԱՆՈՒՆԵՔ ՄԵՐ ՍՈՒՐԲ ՇՈՂԻՆ

Պատմության գիրկն է անցնում մեր ժողովրդի համար ևս մի դժվար՝ 2021 թվականը, և մեր դռներն է բախում 2022-ը: Հուսանք, որ այս նոր տարում նոր դառնություններ չենք տեսնի, մեզ համար մի լույս կծագի, և ամենազխապարզ՝ նոր տարին կլինի Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման տարի:

Անցած երկու տարիների ընթացքում կրել ենք անդամալի կորուստներ, տվել ենք սուրբ հողեր: Խոր վիշտ ապրող մեր ժողովուրդը չգիտի՝ ինչպես դիմավորի Նոր տարին, մանավանդ տեղահանված արցախցին, որը չունի սեփական օթևան:

Հիշում եմ՝ մինչև պատերազմը ի՞նչ մեծ շուքով էինք մշտնապես Նոր տարին: Դպրոցի բակում դրված տոնածառի շուրջ երգում, պարում էին մեր աշակերտները, և այդ հանդեսը նայելու էին գալիս նրանց ծնողները: Ասել է թե՛ ողջ գյուղն էր ներկա հանդեսին և ուրախանում էր երեխաների հետ: Հիմա մեր՝ Թաղավարի միջնակարգ դպրոցը սուգով է դիմավորում Նոր տարին, քանի որ իր դուռը բացող չի լինի. բարբարոսն արել է իր սև գործը: Նույն վիճակն է նաև մյուս գյուղերում ու քաղաքներում, որոնք ընկել են թշնամու ձեռքը:

Հիմա մենք պետք է ուժեղ լինենք և չիուսահատվենք, պիտի մինչև վերջ պայքարենք, պետք է ամուր կանգնենք մեր սուրբ հողին, չլքենք Արցախը և աշխարհին ապացուցենք, որ այն հայկական է ու հային էլ կանա:

Ես հուսով եմ, որ մենք կհաղթենք, քաղաքակիրթ աշխարհը կճանաչի մեր անկախությունը, և ամեն բռնատեղահանված հայ կվերադառնա իր օջախը:

Միրելի՛ արցախցիներ, եկեք այս Նոր տարին դիմավորենք գալիքի նկատմամբ մեծ հույսերով և մեր աղոթքներով խնդրենք Աստծուն՝ լինել մեր կողքին. չէ՞ որ ասում են՝ Աստված էլ է դարաբարոցի:

Շնորհավոր ձեր Նոր տարին, սիրելի՛ հայրենակիցներ:

ՍՊՈՋԵ ԱՌ ԱՍՏՎԱԾ

Օ՛, Տեր Աստված, դու ուժեղ ես: Ամեն անգամ արթնանալիս ես նայում եմ դեպի երկինք ու աղոթում: Հավատում եմ ես քո ուժին, Որ կփրկես մեր Արցախի ժողովրդին Ստոր ազգի նենգ ճանկերից: Ուզում եմ, որ մեզ վախեցնեն Իրենց հիմար կրակոցներով, Որ մենք թողնենք մեր հողերը, Բայց դա երբեք չի լինելու: Թող իմանան, որ արցախցին Պի՛նդ է կանգնած իր մայր հողին. Էլ չենք թողնի, որ այդ ստոր ազգը Նորից տիրի մեր սուրբ հողին: Դեռ ավելին, նրանց ձեռքից Պիտի խլենք մեր Հարություն ու մեր Շուշին: Հավատում եմ մեր Արցախի ապագային, Լույսի շողեր կսփռվեն մեր դաշտերին, Մեր սարերին, քաղաքներին ու գյուղերին: Այս մի տարվա տառապանքը երագի պես կանցնի-գնա, Ու մենք կապրենք մեր տներում՝ Խաղաղ ու ջինջ երկնքի տակ:

Սեդա ԲԱՂԱՍՅԱՆ
Թոշակառու. տեղահանված ուսուցչուհի,
գ. Թաղավար

ՈՒՋԵՆՔ ԹԵ ԶՈՒՋԵՆՔ, ԱՄԱՆՈՐ Է

Արցախս թունամյանական վարդն է, նույն գեղեցկությունն ունի, բույրն է կորել: Խնկարկուն է մեր մտայնության գերիշխողը: Խնկարկուն առ մեր նահատակ հերոս սաների, մեր կորուսյալ հայրենիքի, մեր անկատար երազանքների:

Իսկ Ամանորը, եթե ուզում է, թող բարով գա: Քար աշխարհի սիրտը գուցե փափկի դժվարությամբ:

Արցախցու սիրտը Աստված փափուկ է ստեղծել, լցրել բարությամբ՝ հանդեպ քար աշխարհի ու մարդկության:


Այս Ամանորը մեզ համար դարձնենք վերածննդի տարի ու քար քարի վրա դնելու տարի: Իսկ մեր փոքրիկներին ուրախացնենք հնարավոր միջոցներով:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

Մարիամ ՊՈՂՈՍՅԱՆ
Մարտիկների շրջ. Շահմասուրի հիմն.
դպրոցի հ. լեզու եւ գրակ. ուսուցչուհի

ԳՐԱԴԱՐԱԿ

«ՄԵՐ ԴԱՃԱՆ ԱՆՑՅԱԿԻ ՔԱՐԵՐԸ ՊԵՏՔ Է ԴԱՐԱՔԱՂ-ԱՐԾԱԽԻ ԱՊԱԳԱՆ ՏԱՆՈՂ ԱՄՏԻՃԱՆՆԵՐԸ ԼԻՆԵՆ»



Նագետների համար կարող է լուրջ ուղեցույց հանդիսանալ:

Թե ինչպես է ծնվել գիրքը, ներկայացրեց ինքը հեղինակը՝ պատմելով և մեջբերումներ անելով նրանից: Նախաբանում գրում է. «Երբ աշխարհը շրջելուց հետո տասը տարի առաջ վերադարձա նախնիներիս հայրենիք՝ Ղարաբաղ, ավելի հին անունով՝ Արցախ, ցանկացա նորովի ըմբռնել՝ ով ենք մենք և ինչու այսպիսին ենք»:

Այս հարցերին պատասխանելու համար նա որոշեց ավելի խորն ուսումնասիրել իր ժողովրդի պատմությունը առավելագույնս թվով աղբյուրների և հետազոտությունների հիման վրա: «Աշխատելով գրքի վրա՝ օգտագործել եմ ինձ հասանելի ողջ տեղեկատվությունը, - ասում է հեղինակը, - ամկախ նրանից՝ դո՛ւր է գալիս այն ինձ, թե՛ ոչ»:

Գրքում ընդգրկվել են պատմական անցքեր և փաստեր, որոնք արձանագրված են տարեգրություններում և հեղինակավոր հանրագիտարաններում. դրանք ուղեկցվում են անտիկ, հայկական, պարսկական, արաբական հեղինակների հին աղբյուրներից, ինչպես նաև տարբեր երկրների ժամանակակից գիտնականների և պատմաբանների մեջբերումներով:

Պատմաբանները և երկրաբաններն անցյալի իրադարձությունները վերլուծելիս հնարավորություն են չունենում իրենց հայացքները հիմնավորել փորձով: Նման իրավիճակներում ապացույց կարող են ծառայել անցյալում միևնույն իրադարձության կամ երևույթի վերաբերյալ տարբեր հեղինակների տեսակետները ներկայացնելը:

Աշխատությունն ունի յուրահատուկ կառուցվածք. փաստերը ներկայացվում են ժամանակագրական ձևով՝ նախնադարյան հասարակարգ, հին աշխարհ, միջնադար և արդի ժամանակաշրջան:

Յեղիմակը մի քանի անգամ կրկնում է, որ ինքը բացի երկու էջ առաջաբանից և երկու էջ վերջաբանից, որտեղ արտահայտել է սեփական մտքերը, մնացածում ժամանակագրական կարգով ներկայացրել է Ղարաբաղին վերաբերող պատմական իրադարձություններն ու փաստերը՝ 143 էջում՝ 248 փաստ և դեպքեր: Եվ երբ գիրքը ներկայացրել է տպագրության, հաշվի առնելով Ղարաբաղի ներկայիս

աշխարհաքաղաքական իրողությունները՝ Ղարաբաղի հետ կապված, հրատարակիչն ասել է, որ գիրքը պետք է հանձնի խմբագրին, որպեսզի նա ստուգի յուրաքանչյուր փաստ, որովհետև դա մեծ պատասխանատվություն է: Այդ պատճառով էլ գիրքը երեք ամիս գտնվել է հրատարակչությունում, և ստուգվել են փաստերը: Ամեն ինչ համաձայնեցվել է հեղինակի հետ: «Ես թույլ չէի տա խմբագրին անել՝ ինչ ուզում է, ես շատ հաճախ չէի համաձայնվում նրա հետ», - պատմում է հեղինակը:

Գ. Գաբրիելյանը փաստերը շարադրելիս առաջնորդվել է մեր պատմահոր արժանահավատվությունը ներշնչող՝ ոչինչ չավելացնելու և ոչինչ չպակասեցնելու սկզբունքով: Երկրորդ մեթոդը արդիականությունն է. պատմության և երկրագիտության հետազոտությունները համադրելով՝ արժևորել անցյալը այսօրվա համատեքստում: Գրքի հիմնա-

ընթերցողին ուղղված լինելու հանգամանքը, որը կարող է ստույգ տեղեկություններ հաղորդել Արցախի մասին:

Բանաստեղծ Սոկրատ Խանյանի կարծիքով՝ մեր ժամանակներում նման աշխատությանը հանդես գալը սխալանք է. «Գիրքը ծնված է ժամանակին, որովհետև մենք չպետք է երբեք հանգիստ ասենք՝ ինչքան ուզում են՝ թուրքերը խոսեն: Մենք եղել ենք, կանք, լինելու ենք: Այսօր եկել է այն դարաշրջանը, երբ պետք է խոսել փաստերով»:

Յեղիմակի խոստովանությամբ՝ գիրքն ավարտելուց հետո տխրության զգացում է ապրել. «Այն զգացողությունն էմ ունեցել, որ դա երեխա է, որը մեծացրել են, և հեռացել է»: Կշարունակի՞, արդյոք, պատմագրությանը զբաղվել: Դավանաբար՝ այո: Ասում է, որ իրեն դուր է գալիս այդ աշխատանքը, բայց նախ և առաջ հետաքրքրում է արդյունքը՝ տնտեսական նպատակը: Եվ այդ պատճառով որոշել է իր հետագա գործունեությունը շարունակել Արցախի ընդերքի ուսումնասիրության ուղղությամբ: Նրա համոզմամբ՝ այսօր ավելի կարևոր է մեր ժողովրդի բարեկեցության հարցի լուծումը, մեր վիրավոր տնտեսության բուժումը, սոցիալապես ապահով լինելը. «Այդ խնդիրները կարող ենք լուծել ոչ թե ձեռքերս պարզած՝ այս կամ այն պետությունից օգնություն ստանալով, այլ ինքներս պետք է ձգտենք, որ մեր գործունեությունից ստանանք առավելագույն արդյունք»:

Վերջում Գրիգորի Գաբրիելյանը գրում է. «Նման արյունալի իրադարձությունները վերապրած ժողովուրդը չի մահանում: Պատմությունը մեզ համար ինքնանպատակ չէ, չպետք է մոռանալ նրա դասերը: Մեր դաժան անցյալի քարերը պետք է Ղարաբաղ-Արցախի ապագան տանող աստիճանները լինեն»:

ԱրՊՀ ղեկավար Արմեն Սարգսյանը ԱՀ նախագահից հանձնարարական է ստացել գիրքը սեղմ ժամանակում թարգմանել հայերեն և տպագրել: Գ. Գաբրիելյանը գրքի 300 օրինակ բաժանել է դպրոցներին, գրադարաններին, անհատներին: Այն պետք է սեղանի գիրք դառնա յուրաքանչյուր արցախցու համար, դասագիրք՝ բարձր դասարանցիների, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների համար:

Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ



կան ասելիքն է. մենք՝ Արցախի ժողովուրդս, նույն էթնոսով, նույն լեզվով, մշակույթով, կրոնով հայ ժողովուրդ ենք՝ ծնված և հազարամյակներով ապրած այս տարածքում՝ Արցախում: «Գիրքը գրելիս ես մտածում էի ապագայի մասին, - ասում է Գ. Գաբրիելյանը:

Գիրքն արժևորեցին շնորհանդեսին ներկա մասնագետները: Պատմաբան Վահրամ Բալայանն ասաց, որ այսօր այն ավելի քան հրատապ է, քանի որ թուրքական աշխարհի կողմից անընդհատ փորձ է կատարվում ոչ միայն մեր տարածքները յուրացնել, այլև պամությունը:

Պատմաբան Լեռնիկ Յովհաննիսյանը կարևորում է հատկապես գրքի՝ օտարալեզու

ՄԱՆ ԱՄՓՈՓԵԼ Ե ՏԱՐԻՆ

Ստեփանակերտի «Մեքոպ Մաշտոց» համալսարանը (ՄՄՀ) տարեվերջին լրագրողների մասնակցությամբ ամփոփեց տարին:

Ռեկտոր Դոնարա Գաբրիելյանը, ողջունելով ներկաներին, շնորհավորելով Ամանորի առթիվ, մաղթելով, որ նոր տարին լինի խաղաղության, ստեղծագործ աշխատանքի, Արցախի և ընդհանրապես Հայոց աշխարհի, հայ ժողովրդի համար բարեբեր տարի:

2020-2021 ուսումնական եղել է ամենից ծանր շրջանը ինչպես ողջ Արցախի, այնպես էլ ՄՄՀ-ի համար: 44-օրյա պատերազմից շատ կարճ ժամանակ անց համալսարանը կարողացավ արագ կերպով ինքնակազմակերպվել և սկսել ուսումնական գործընթացը, նշեց Դ. Գաբրիելյանը:

Անշուշտ, դժվար էր ուսանողների և դասախոսների համար Արցախի աշխարհի մեծ մասի և մարդկային անդառնալի կորուստների ցավը սրտում փորձել մտնել բնականոն հունի մեջ: ՄՄՀ-ն էլ վերջին երկու պատերազմներում ունեցել է 22 զոհ: Նրանց հիշատակին բուհում

և ուշատախտակ է ստեղծվել, և տարբեր առիթներով հարգանքի տուրք է մատուցվում՝ անցկացվելով հիշարժան միջոցառումներ:

ՄՄՀ ուսանողներն ակտիվ մասնակցություն են ունեցել Արցախի տարբեր գերատեսչությունների կողմից նախաձեռնված միջոցառումներին, պատրաստել տարբերվող տեսանյութ՝ «Կանգնիր Արցախի կողքին» խորագրով հեռուստամարաթոնի ծրագրերի շրջանակում: Բուհը հայտարարել է «Իմ հերոսը» թեմայով էսսեների մրցույթ՝ նվիրված 44-օրյա պատերազմում հերոսացած քաջերին. մրցույթի հայտերի ընդունման գործընթացը կշարունակվի մինչև 2022 թվականի մարտի 31-ը, -տեղեկացրեց Դ. Գաբրիելյանը:

Բուհում անցկացվել են արդիական թեմաներով գիտաժողովներ, համոզիվումներ, դասընթացներ, ասուլիսներ և այլն: Այդ առնչությամբ ռեկտորի խոսքը շարունակեցին պրոռեկտոր Ալիսա Բաղդասարյանը և Կովկասագիտության կենտրոնի ղեկավար Յովիկ Ավանեսյանը:

ՄՄՀ-ի գիտխորհրդի երաշխավորությամբ հրատարակվել է համալսարանի հունամիտար ֆակուլտետի ղեկան, օտար լեզուների ամբիոնի դոցենտ Արինա Գրիգորյանի կազմած «Методическая разработка по азербайджанскому языку» դասագիրքը՝ ռուսերենով: Օտար լեզուների ամբիոնը բրիտանական «Any time English» անգլերենի ուսուցման հարթակի հետ համագործակցության շրջանակներում մեկնարկել է «Անգլերենի դասավանդման ժամանակակից մոտեցումները» խորագրով վերապատրաստման դասընթացների շարքը:

Մեկնարկել է «Սոցիալական աշխատանք» մագիստրոսական նոր ծրագիր. բաժնում սովորում է 20 ուսանող:

Առջանց դասախոսություններով բուհում հանդես են գալիս ՀՀ և արտերկրի գիտնականներ: Բուհում կայացել է Ազգային արագացման հանրային նախաձեռնության հետ մեկտեղ համագործակցության արդյունքում ստեղծված «Կորպուս

հետազոտություններ և թվայնացում» նախագծի շնորհանդեսը: Բուհի լայնածավալ աշխատանքի արդյունքում Արցախը դարձել է հայերենի թվայնացման ու տվյալագիտության կենտրոն:

Տարվա ընթացքում բուհում կազմակերպվել է միջազգային գիտաժողով՝ «Նորակազմ (չճանաչված) պետությունները պատերազմից հետո. խնդիրներն ու դրանց լուծման ուղիները» խորագրով: Գիտաժողովում քննարկվել են տարածաշրջանի հունամիտար, տնտեսագիտական, սոցիալ-քաղաքական զարգացման արդիական հարցերը:

Ընթերցողի սեղանին է դրվել «Աղբյուրները քաղաքակրթության թշնամի» մատենաշարի առաջին հատորը: Այն «Մեքոպ Մաշտոց համալսարան»-ի Կովկասագիտության կենտրոնի, «Մշակութային ժառանգության պահպանության» հանրային խորհրդի, ինչպես նաև «Գոլոս Արմենիի» թերթի համատեղ աշխատանքի արդյունքն է: Կովկասագիտության կենտրոնի նախաձեռնությամբ բուհում կազմակերպվել է նաև «Հայկական մշակութային ժառանգության ոչնչացումը՝ որպես Թուրքիայի և Ադրբեջանի նվաճողական քաղաքականության շարունակություն» խորագրով կլոր սեղան-քննարկում:

Գիտաուսումնական գործունեությունից բացի բուհում կազմակերպվել են մի շարք ցուցահանդեսներ: Առանձնանշելի է համալսարանի Կովկասագիտության կենտրոնի, օտար լեզուների ամբիոնի, գրադարանի և Արցախի պատմաերկրագիտական թանգարանի համատեղ կազմակերպած «Շուշի» խորագրով ցուցահանդեսը:

«Մեքոպ Մաշտոց» համալսարանը պատրաստվում է 2022-ին անցնել միջազգային հավատարմագրում:

Վերջում ՄՄՀ ռեկտոր Դ. Գաբրիելյանն իր երախտագիտությունը հայտնեց բուհի գործունեությունը լուսաբանած լրատվամիջոցների ներկայացուցիչներին՝ հանձնելով նրանց շնորհակալագրեր:

Սեփ. լրատվություն

ԻՎԱՆ ԱՐԱՅԱՆ - 90

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ, ՄԵՑ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ



Ավետարանոց. մեծ պատմական անցյալ ունեցող հայոց այս բնակավայրը եղել է Մեծ Հայքի Արցախ աշխարհի համայնքի մեկը և իր անկախության համար մեծ ջանքեր է ներդրել: Վարանդայի կենտրոն-մելիքանիստը՝ Մելիք-Շահնագարյանների ուսումը: Ավետարանոցը հայտնի է նաև իր ճանաչված զավակներով: Գյուղի Կուսանաց անապատում պահպանվել էին Վարանդայի հզոր տիրակալ Մելիք-Շահնագար Առաջինի (կառավարել է մինչև 1736թ.), նրա դստեր՝ Գայանեի տապանաբարերը: 18-րդ դարի առաջին կեսում այս հայրենասեր մելիք-ազնվական գործիչը նույնիսկ հարկ չէր վճարում Նադիր շահին: Գուստրը՝ Գայանեի, աչքի է ընկել իր հերոսությամբ: Ռուսական բանակի նշանավոր զորավար Վալերիան Մադարովը (Ռուստոմ Գրիգորի Մադարյան, մայիսի 18 (29), 1782, Ավետարանոց-սեպտեմբերի 4 (16), 1829, Շուսեն, Բուլղարիա) նույնպես Ավետարանոցից է: Կրթության ու գիտության բնագավառում Ավետարանոցից հայտնի են Կուստանդին Ալեքսանդրի Մելիք-Շահնագարյանը՝ հայտնի Տմբալազի խաչան անուկով, Բոգդան Բագրատի Շահնագարյանը, Նիկոլայ Սամսոնի Շահնագարյանը, Ռաֆայել Բալայանը և այլք:

ԽՍՀՄ ժողովրդական ուսուցչի կոչումով միակ մանկավարժն Արցախում Իվան Հայրապետի Արցախն է: Ծնվել է 1931թ. դեկտեմբերի 27-ին Արցախի (նախկինում Ստեփանակերտի շրջանի) Ջրաղացներ գյուղում, որը գտնվում է Ավետարանոցի հարևանությամբ՝ Վարանդա գետի ափին: Շուրջ միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է 1951թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ուսումնարանը: 1951-1954թթ. ծառայել է խորհրդային բանակում: Ծառայությունն ավարտելուց հետո նա որոշ ժամանակ աշխատել է իր ծննդավայրի հարևան Ակնաղբյուրի ութամյա դպրոցում՝ որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ, իսկ 1954թ. աշխատանքի է անցել Ավետարանոցի միջնակարգ դպրոցում նախ՝ որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ, այնուհետև՝ ուսմասվար, 1965 թվականից մինչև վախճանվելը՝ 1998թ. հուլիսի 3-ը՝ տնօրեն: Աշխատանքին զուգընթաց՝ 1957թ. ավարտել է Աղբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում ու ստացել ֆիզիկայի ու մաթեմատիկայի ուսուցչի որակավորում: Մահից հետո՝ 1998 թվականից, Ավետարանոցի դպրոցը, կոչվում է Ի. Արայանի անունով: 1984-ից ԽՍՀՄ ժողովրդական ուսուցիչ,

անկարող մարդիկ, որոնք, ինչպես ճիշտ նկատել է Ա. Սախարովը, աղբեջանամետ են: Զգացիմք, որ սուտ ու շողոմ խոսքերով ուզում են կերակրել մեզ: Աղբեջանի աշխարհագրական դիրքը, նավթը, մարդկային զեռակալ ռեսուրսները գուցե ազդեցին Մոսկվայի կողմնորոշման վրա: Առաջ քաշելով սահմանների անձեռնմխելիության դրույթը՝ նրանք լեզու դրեցին աղբեջանցիների բերանում՝ անտեսելով ազգերի ինքնորոշման մարդասիրական գաղափարը: 1992թ. մարտ-ապրիլ ամիսներին Բերդաձորի ջոկատներից մեկի կազմում Ավետարանոցում էի. նախապատրաստվում էր Շուշիի ազատագրումը: Մեր զորանոցը տեղակայված էր Ավետարանոցի մետաքսի գործարանի շենքում, որը նախկինում ծառայել էր դպրոցին, ավելի վաղ եղել էր մելիքական գրասենյակ: Շենքի մի հատվածում էլ ժամանակավոր տեղավորվել էին Արցախի վտանգված բնակավայրերից տեղափոխված կանայք ու երեխաներ: Ընթացքում ծանոթացա՞յր ու մարտական ջոկատի տղաների հետ: Ազատամարտիկ և դպրոցի ուսուցիչ Հրայր Մնացականյանի հետ այցելեցի դպրոց: Չնայած ընթացող պատերազմին՝ դպրոցը գործում էր: Մոտ 30 ուսուցիչ նվիրվածով աշխատում էին կրթությանը՝ Ի. Արայանի ղեկավարությամբ: Սիրով է ինձ ընդունում Ի. Արայանը: Մտահոգ էր, բայց հավատով լեցուն՝ ազատագրելու ենք Շուշին, ազատագրվելու է Արցախը և միավորվելու ենք մայր հայրենիքին: 1992թ. սկզբներին շատ լարված էր իրավիճակն Արցախում: Հունվարի 26-ին տեղի էր ունեցել Քարին տակի հայտնի հերոսամարտը, որին մասնակցել էին նաև Ավետարանոցի ջոկատի տղաները և իրենց ներդրումն ունեցել ճակատամարտի հաղթանակում: Արցախի պատմական կրթությանը հանդիմանող Ավետարանոցի դպրոցը. հիմնվել է 1872թ.՝ 20 աշակերտով: Սկզբնական շրջանում գործել է մի քանի շենքերում: 1925-1976թթ. կրթությանը տեղավորված էր նախկինում մելիքական գրասենյակի շենքում, որն այդ օրերին, արդեն մշտեմ, գործանոց էր: Դպրոցը 1976 թվականից գործում էր արդեն տիպային երկհարկանի շենքում, որտեղ Ի. Արայանը հիմնել է ֆիզիկայի ուսումնամեթոդական կաբինետ ու լաբորատորիա, ստեղծել մյուսատեխնիկական հարուստ բազա՝ ուսուցման համար անհրաժեշտ սարքերով, որոնք մասնագրված և պարտասովոր էին նաև աշակերտներին ջանքերով: Ի. Արայանի ստեղծագործ մոտեցման շնորհիվ գործում էր ֆիզիկայի ու աստղագիտության արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների յուրատիպ համակարգ, որտեղ ընդգրկված աշակերտների համար դպրոցում և բնության գրկում կազմակերպվում էին գործնական հետաքրքիր պարապմունքներ, էքսկուրսիաներ, հանդիպումներ: Դպրոցն ուներ նաև իր հողատարածքը, որտեղ հողագործությամբ էին զբաղվում մեզ տեղեկացրին: Պատմում է Ի. Արայանը իր ղեկավարած կրթության մասին և ինձ միջոցով իր հեղինակած «Լույսի տաճարը» գրքույկը՝ նվիրված հայրենի երկրին և հատկապես՝ կրթությանը: Տեղեկացնում է, որ տարվա

սկզբին նախատեսել էր իրականացնել դպրոցի հիմնադրման 120-ամյակին նվիրված միջոցառումներ, սակայն պատերազմի պատճառով այն տեղի չէր ունեցել: Իր գրասենյակի դարակում դեռ պահվում էին հրավիրատուները: Նույն տարվա սկզբին դպրոցի շենքում էին տեղակայվել խորհրդային բանակի զինվորները: Տանկը քանդել էր նաև դպրոցի բակ մտնող մուտքի մի հեմալունը: Պատերազմի ողջ ընթացքում Ավետարանոցի դպրոցը գործեց: Երկրորդ անգամ Ի. Արայանին հանդիպեցի 1994թ. դեկտեմբերին: Դարձյալ այցելեցի դպրոց: Նշում էին Հովհ. Թումանյանի ծննդյան 125-ամյակը: Դպրոցականները բեմականցրին «Անուշ» պոեմը: Հաղթել էինք, ազատագրել Արցախը, բայց՝ մեծ զոհողությունների գնով: Ավետարանոցի հանգստարանում պատերազմի պատճառով մոտ 20 չիրմաթումբ էր ավելացել: Ռազմի տարբեր ծամփաներում մարտիրոսվել էին հերոս գյուղի հերոս տղերքը, որոնց մասին հետագայում «Արծիվներն ամպերի մեջ» գիրքը գրեցի: Հիմնականում Ի. Արայանի ղեկավարած կրթության սաներն էին նահատակ-տղաները, և դպրոցում հատուկ անկյուն էր նվիրված անմահ հերոսներին: Ուրախ էր Ի. Արայանը, կայացել էր Արցախի ազատագրումը, տխուր՝ որ շատ հայրողիների արյան ու տառապանքի, մաքառումների գնով այն եղավ: 1995-ին լույս տեսավ նրա «Ընդմիջ տեղ հետ» գիրքը՝ նվիրված իր նահատակ սաներին ու Վարանդայի ջոկատի մյուս անմահ հերոսներին: Կրթության և մանկավարժության վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ է տպագրել ԼՂ, ՀՀ և միութենական մամուլում: Հետմահու՝ 2001 թվականին, Արցախի նախագահի կողմից պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով: Ավետարանոցի՝ իր անվան միջնակարգ դպրոցում տեղադրված է նրա կիսանդրին: ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարությունը սահմանել է «Իվան Արայան» հուշամեդալ, «Իվան Արայան» կրթաթոշակ, կազմակերպում էր ամենամյա ուսուցչական սեմինարներ՝ «Արայանական ընթերցումներ»:

Վարանդայի գավառի մասին կա գրված «Ով ով է. հայեր» կենսագրական հանրագիտարանում. «Հայկական հանրագիտարան»-ում: Մ. Զիլֆուրդյանի «Ժողովրդի ուսուցիչը», Երևան, 2000թ. և Թ. Հարությունյանի «Իվան Արայան», Երևան, 2001թ. գրքերը նվիրված են ժողովրդական մանկավարժին: Արցախյան վերջին պատերազմում թշնամու տիրապետության տակ անցավ Երևան Ավետարանի շրջանի Ավետարանոց գյուղը՝ հարակից բնակավայրերով, նաև Ի. Արայանի ծննդավայր Ջրաղացներով: «Ոչ մի հայրենասեր հայ ակնթարթ անգամ չի կասկածում, որ Հայրողը, Ավետարանոցն ու Շուշին կրկին ու հավերժ մերն են լինելու, և ի վերջո տեր ենք կանգնելու մեր ազգային մեծ հաղթանակին...»- ասում է Օլեգ Քանայանը հավատով,-նորից ենք այցելելու Ավետարանոց և պատմական Վարանդայի մելիքությունը: Զոհրաբ ԸՆԹՈՑԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՆՎԻՐԱԾ ԻՎԱՆ ԱՐԱՅԱՆԻ ՏՆԵՂԱՆ 90-ԱՄՅԱԿԻՆ

Գյուղը, դպրոցը, գերեզմանոցը, կապն այդ ամենի հետ... Երկու... Չկան: Միակ կապող օղակն այսօր «Պոլ Էլյուարի տուն ֆրանկոֆոնիայի կենտրոն»-ում (տնօրեն՝ Մարիաննա Աբրահամյան) կայացած միջոցառումն էր՝ նվիրված ԽՍՀՄ ժողովրդական ուսուցիչ Իվան Արայանի ծննդյան 90-ամյակին: Ներկա էին Ավետարանոցի՝ Վարանդայի մելիքանիստի բնակարանից հարձած բնակիչները, ուսուցչապետի անունը կրող դպրոցի նախկին աշակերտ-շրջանավարտները, մանկավարժական կոլեկտիվի անդամներ... Ներկա էր նորին մեծուքյուն կարոտը, անանց անոթիչ վերհուշը... Արցախի պետական պատմա-երկրագիտական թանգարանի (տնօրեն՝ Ժաննա Առստանյան) նախածնությունը ներկան ափ պարզեց վերհուշին, իբրև ժամանակի ծայրածայրեր՝ իրար կապելով անցյալն ու ապագան: Ողջ լինելու Իվան Արայան ուսուցիչը, տնօրենը, գիտնականը, անհատը, կասեր՝ ո՞ւմ եք սպասում, ինչի՞ եք սպասում, և անհապաղ ազգային վերագարթոնքի կոչ կաներ, միասնության, համախմբվածության, սքափության կոչ: Կասեր՝ իմ ծննդավայր Ջրաղացներում, իմ կենսագործունեության և բնակության վայր Ավետարանոցում ունեմք մանկության ուսման հետքեր, ունեմք սրբացած աճյուններ, հարազատներ ու մերձավորներ, որոնք սպասում են, որոնք պատրաստ են... օգնել, եթե դիմենք: Այնտեղ մեր ազատամարտիկներն են, մեր գործընկերները, մեր ծնողները,



որ, մեր թանկ մեռելները... Այնտեղ մեր հայրենիքն է, մեր տուն ու տեղը, մեր հուշերը, մեր սխալներն ու մեր իմաստությունը: Մենք այստեղ պետք է հորելյաններ օչենք, այստեղ պետք է իրար տեսնենք, միմյանք վերցնենք, մեղմենք միացող մորմուքը: Իվան Արայանի սան, գործընկեր, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, ԱՀ վաստակավոր մանկավարժ Նվարդ Բաղդասյանը համոզված է և երդման խոսքեր հնչեցրեց. դեռ հանդիպելու ենք մեր չքնաղ գյուղում, ծաղիկ ենք խոնարհելու մեր բոլոր մեռելների շիրմաքարերին, համբուրելու ենք մեր սուրբ հողը... Ծարժման արշալույսին ազգային գործիչների հետ մեկնել էր Մոսկվա: Ձախձախված, խոցված, տորկված ինքնասիրությամբ վերադարձավ, բայց չհանձնվեց, համառոտ, պայքարեց, ազգի հետ նվաճեց Արցախի անկախությունը: Նա վատահ էր ազգի ինքնորոշման իրավունքին կամավորագրված հայրենակիցների ուժերին, լիցքերին, այրումներին... Նա լավ էր ճանաչում իր ազգի գեներ: Այդ գեներ ոչ մի գնով պարտություն հետ չի հաշտվելու. համոզված կասեր և գործի կանցներ... Դեկտեմբերի 27-ին՝ Ուսուցչի ծննդյան 90-ամյակին ամփոփվեցին նրա երկրային կյանքի 67 և երկնային կյանքի 23 տարիները: Նա Արցախյան շարժման գործիչ էր, ԼՂԻՄ Ազգային խորհրդի և «Կուսակ» կոմիտեի անդամ: Այնքան շատ ասվեց նրա մասին, որ երբեմն-երբեմն զարմանալ կարելի էր. մի՞թե հնարավոր էր այսքան շատ ու բազմաբովանդակ գործել: Իսկ ո՞ր մասը չասվեց. շա՞տը, թե՞ քիչը: Նրա համար ամեն ինչն էր կարևոր. դասերը, աստղերը, գիտությունը, արտադրությունը, սերը, հարգանքը, հայաճամաշությունը, հայրենասիրությունը... ամեն-ամեն ինչ: Եվ դու, «խեղճ» աշակերտ, ուզե՞նայիր, թե՞ ոչ, հասցնում էիր սիրել ու սովորել ամեն ինչ: Բարի ու պահանջկոտ, բնական ու մարդկային, հարազատ ու խիստ, ստեղծող ու բաշխող. այսպիսին էր մարդը, որը տասնյակ տարիներ կրթել ու դաստիարակել է, սովորեցրել ու իմաստնացրել... Իր ծննդյան 90-ամյակին կարծես ներկա էր և ինքը՝ հորելյանը, լուսն էր յուրաքանչյուրի խոսքը, բայց լռությունն էր ամենամեծ իմաստությունը, որով առաջնորդվում էր: Չնայած այնքան էլ լուռ չէր: Լրագրող Համլետ Մարտիրոսյանի նկարահանմանը մոր շունչ էր հաղորդել Արվին Մովսեսյանը «Հայից՝ հայ» ֆիլմում, որտեղ ազգեցիկ, տպավորիչ հնչում են ուսուցչապետի խոսքը, հորդորը, պատգամը: Նա լուռ է իր հեղինակած մի քանի գրքում ու բազմաթիվ հոդվածներում: Նրա խոսքն ակնածանք է իր մասին գրված գրքերում անգամ, և նա օրինակավորեց օրվա գլխավոր գործող անձն էր՝ ավելի շատ ապագան մոտիվացնող լիցքերով, բան անցյալը հերոսացնող դրվագներով: «Մշակութային Արցախ»

ՏԱՐԿԱ ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՆ ԿԳՄՍԸ ՄՇԱԿՈՒՅՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2021Թ. ԿԱՏԱՐԱԾ ԱՆԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում վարչությունն իր քաղաքականության մեջ առաջնահերթ նշանակություն է տվել ազգային մշակույթի պահպանմանը, հանրապետությունում մշակութային կյանքի աշխուժացմանը, մատուցելու սերունդի շրջանում ազգային գաղափարախոսության ուժեղացմանը, գեղարվեստական կրթության ավանդույթների պահպանմանն ու զարգացմանը, հասարակության սոցիալական և տարիքային բոլոր խմբերի գեղազիտական պահանջները բավարարելու, մշակույթի բնագավառի մասնավորապես կադրերի վերապատրաստմանն ու վերադասակարգմանը, տաղանդավոր երեխաների կրթության, ստեղծագործական ունակությունների զարգացմանն ու ինքնադրսևորման համար պայմանների ապահովմանը:



ՈՐ խաղաղապահների հետ համատեղ ինտենսիվ աշխատանքներ են իրականացվել նախարարության ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ներում հետպատերազմական իրավիճակով պայմանավորված հոգեբանական խնդիրների հաղթահարման, հովանավորների աջակցությամբ նյութատեխնիկական բազայի վերականգնման ուղղությամբ:

Ճանաչողական արվեստի և մշակութային կրթության բաժնի կողմից 2021թ. իրականացվել են հետևյալ միջոցառումները.

«Մշակութային կրթության և մասնակապատանեկան նախագծերի միջոցառումներ» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է ազգային նվագարանների և ժողովրդական երգի հանրապետական մրցույթը, որին մասնակցել են ԱՀ երաժշտական ու արվեստի դպրոցների, Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի «Ազգային նվագարաններ» և «Ժողովրդական երգեցողություն» բաժինների շնորհիվ աշակերտներ, ուսանողներ (անհատ կատարողներ), ինչպես նաև խմբեր, նվագախմբեր: Մրցույթի արդյունքներով մրցանակային տեղեր զբաղեցրած 12 անհատ կատարողներ իրավունք են նվաճել մասնակցելու Երևանում կայացած ազգային նվագարանների և ժողովրդական երգի անհատ կատարողների հանրապետական 6-րդ մրցույթին:

Վերոնշյալ ծրագրով Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական, Ստեփանակերտի պարարվեստի քոլեջներում, ԱՀ երաժշտական ու արվեստի մի շարք դպրոցներում, ՀՀ «Մշակութային կրթության աջակցության հիմնադրամ»-ի լավագույն մեթոդիստանակավարժների մասնակցությամբ «Դաշնամուր», «Ջութակ», «Մեներգեցողություն», «Երգախմբավարություն», «Քանոն», «Պարարվեստ» և «Գեղարվեստ» մասնագիտությունների գծով կազմակերպվել են վարպետաց դասեր՝ դպրոցների դասատուների ու սովորողների համար:

Կազմակերպվել է մշակութաժամանցային ծրագրի մաս հանդիսացող Ճանաչողական ֆիլմերի ցուցադրություն Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի հարակից տարածքում՝ մանուկների, պատանիների և երիտասարդների համար:

ՀՀ-ից իրավիճակ է բեմադրող ռեժիսոր՝ Արցախի պետական երգչախմբի՝ «Համաշխարհային օպերային արվեստի գլուխգործոցները» խորագրով համերգի կազմակերպման համար բեմադրական աշխատանքների իրականացման նպատակով:

Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի ուսանողների համար անցկացվել են դասական երգեցողության վարպետաց դասեր՝ ՌԴ-ից իրավիճակով մասնագետ Արկադի Մարտիրոսյանի դասախոսությամբ:

«Կենտրոնացված հյուրախաղերի կազմակերպում» ծրագրի շրջանակներում ապահովվել է Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի «Արցախի բալիկներ» երգի-պարի ինքնագործ համույթի մասնակցությունը ՀՀ Ծաղկածոր քաղաքում կայացած՝ «Կյանքս կյանքիդ համար» խորագրով միջոցառմանը, ինչպես նաև Էջմիածին քաղաքում կայացած՝ համանուն խորագիրը կրող միջոցառման փակման արարողությանը, Ա. Բաբայանի ան-

վան Արցախի պարի պետական համույթի մասնակցությունը Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում կայացած «Ջարթոնք» խորագրով համերգին, ինչպես նաև օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում ՀՀ պարի պետական անսամբլի հետ համատեղ կազմակերպված համերգին, «Մռակած» պետական կամերային երգչախմբի մասնակցությունը Երևանի Մխիթար Հերացու անվան պետական թժկական համալսարանի շրջանա-

վարտ Նարեկ Մետրոսյանի հիշատակին նվիրված հուշ-ցերեկույթին: Կազմակերպվել են ՀՀ վաստակավոր արտիստ Շուշան Պետրոսյանի և «Արցախիկներ» խմբի հյուրախաղերը Արցախում, «Պարաբաղ» պետական էստրադային համույթի համերգը Մարտակերտի շրջանի Ծմակահող գյուղում կազմակերպված «Կայծեր» ռազմամարզական վրանային ճամբարի մասնակիցների համար, «Մենք ենք, մեր սարերը» երգ-պարի պետական համույթի ելույթները Կարմիր շուկայի պատանեկան ճամբարի փակման արարողությանը, ինչպես նաև Ծմակահող գյուղում կազմակերպված «Կայծեր» ռազմամարզական վրանային ճամբարի բացման արարողությանը, Շուշիի Մ. Խանդամիրյանի անվան պետական թատրոնի տիկնիկային ներկայացումները Ստեփանակերտի հանրակրթական դպրոցներում:

Վերոնշյալ ծրագրով Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական, Ստեփանակերտի պարարվեստի քոլեջներում, ԱՀ երաժշտական ու արվեստի մի շարք դպրոցներում, ՀՀ «Մշակութային կրթության աջակցության հիմնադրամ»-ի լավագույն մեթոդիստանակավարժների մասնակցությամբ, «Դաշնամուր», «Ջութակ», «Մեներգեցողություն», «Երգախմբավարություն», «Քանոն», «Պարարվեստ» և «Գեղարվեստ» մասնագիտությունների գծով կազմակերպվել են վարպետաց դասեր՝ դպրոցների դասատուների ու սովորողների համար:

«ՀՀ և արտերկրի հետ համագործակցություն» ծրագրի շրջանակներում ապահովվել է ԱՀ արվեստի դպրոցների պարի դասարանների պարուսույցների մասնակցությունը Երևանի պարարվեստի պետական քոլեջում կայացած վերապատրաստման դասընթացներին:

«Թատերահամերգային կազմակերպությունների և անհատ կատարողների հյուրախաղերի կազմակերպում ՀՀ-ում և արտերկրում» ծրագրի շրջանակներում որոշակի ծախսեր են կատարվել Ստեփանակերտի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի սաների մասնակցությունը ՌԴ Սանկտ-Պետերբուրգ քաղաքում՝ «Սանկտ-Պետերբուրգի ապարանները» փառատոնի շրջանակներում կայացած մշակութալուսավորչական և կրթական միջոցառումներն ապահովելու նպատակով: Ապահովվել են Ա. Բաբայանի անվան Արցախի պարի պետական համույթի մասնակցությունը Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում կայացած ՀՀ պարի պետական, «Բարեկամություն» և «Թաթուլ Ալթոնյանի անվան երգի-պարի համույթների հետ համատեղ համերգին, «Բերդ» պարային անսամբլի հետ համա-

տեղ համերգին, «Մենք ենք, մեր սարերը» երգ-պարի պետական համույթի երգիչ Դավիթ Բաղդյանի մասնակցությունը Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում կազմակերպված դասընթացներին, Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի դասատու Նինա Հակոբյանի մասնակցությունը Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում կայացած «Արժևորելով անցյալը՝ ստեղծում ենք ապագան» խորագրով գիտական կոնֆերանսին՝ նվիրված կոնսերվատորիայի 100-ամյակին:

Ապահովվել է նաև ԱՀ արվեստի դպրոցների 12 սաների մասնակցությունը Երևան քաղաքում կայացած ազգային նվագարանների և ժողովրդական երգի անհատ կատարողների հանրապետական 6-րդ մրցույթին, որոնցից 6-ը զբաղեցրել են մրցանակային տեղեր:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են Արցախի ջազ-նվագախմբի համերգը «Արամ Խաչատրյան» համերգասրահում, Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի հյուրախաղերը ՀՀ-ում, Շուշիի Մ. Խանդամիրյանի անվան պետական թատրոնի ներկայացումները Ստեփանակերտի հանրակրթական դպրոցներում, Շուշիի հունամիտար քոլեջի ավարտական կուրսերի ուսանողների այցը «Տերյան» մշակութային կենտրոն, «Նարեկացի» արվեստի



միություն և Երևան քաղաքի թանգարաններ:

«Նոր համերգային ծրագրերի և թատերական բեմադրությունների պատվիրում» ծրագրով կազմակերպվել են ցուցաբերվել Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական թատրոնին՝ «Ավան ծաղիկ» ներկայացման բեմադրման նպատակով:

«Աջակցություն ԱՀ շրջաններում ստեղծագործական նախագծերի միջոցառումների և փառատոների կազմակերպմանը» ծրագրով աջակցություն է ցուցաբերվել Հայրույթի արվեստի դպրոցին՝ նպատակային նյութերի ձեռքբերման, ինչպես նաև մանկական շուկաներկայացմանը դպրոցի աշակերտների մասնակցությունն ապահովելու նպատակով:

Աջակցություն է ցուցաբերվել նաև Մարտունու, ճարտարի, Ասկերանի, Աստղաշենի և Մարտակերտի արվեստի դպրոցներին՝ ազգային նվագարանների և ժողովրդական երգի հանրապետական մրցույթին վերոնշյալ դպրոցների սաների մասնակցությունն ապահովելու նպատակով:

Ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնին՝ «Տնջրե» ազգագրական երգի-պարի համույթի պարուսույցների կողմից ԱՀ շրջաններում բացված պատանեկան և երիտասարդական ճամբարներում դասընթացներ կազմակերպելու նպատակով:

«Տնական և հիշատակի միջոցառումների կազմակերպում» ծրագրով որոշակի ծախսեր են կատարվել Թատրոնի միջազգային օրվան և Արցախի պետական երգչախմբի ստեղծման 30-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման նպատակով:

Ապահովվել են Արցախի շնորհալի երեխաների մասնակցությունը ՀՀ-ում «Մշակութային կրթության աջակցության հիմնադրամ»-ի օժանդակությամբ կազմակերպված «Անոն

Բաբայանյան-100» խորագրով փառատոն-ստուգատեսին, Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի ժողովրդական նվագարանների համույթի մասնակցությունը Երևանում կայացած ժողովրդական նվագարանների անսամբլների 3-րդ համրապետական մրցույթ-փառատոնին, որտեղ համույթն արժանացել է հատուկ մրցանակի:

Միջոցառումների կազմակերպման և կապերի բաժնի կողմից տարվա ընթացքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես, փետրվարի 20-ին կազմակերպվել է երթ Վերածննդի հրապարակից դեպի հուշահամալիր, երեկո՝ նվիրված Արցախի վերածննդի 33-րդ տարեդարձին, ապրիլ-մայիս ամիսներին աշխատանքներ են կատարվել «Dudukman» միջազգային մրցույթ-փառատոնին արցախցի երաժիշտների մասնակցության ապահովման ուղղությամբ:

Կազմակերպվել են «Երգով և սիրով» խորագիրը կրող երգչախմբային փառատոն, Վանքի արվեստի դպրոցի երեխաների գեղանկարչական աշխատանքների ցուցահանդես, Ազատամարտիկների պուրակում «Անահիտ» անհմացիոն ֆիլմի ցուցադրություն՝ նվիրված Երեխաների պաշտպանության միջազգային օրվան, հունիսի 12-ին ՌԴ-ի օրվան նվիրված միջոցառումներ և այլն:

Տարվա ընթացքում ՌԴ խաղաղապահների հետ համատեղ կազմակերպվել են 4 տասնյակից ավելի միջոցառումներ:

Մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների բաժնի կողմից.

«Թանգարանային գործի զարգացման» ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Մայիսի 18-ին՝ Թանգարանների միջազգային օրվան ու «Թանգարանների գիշերվան» նվիրված՝ նախարարության ենթակայությամբ գործող բոլոր թանգարաններում և պատկերասրահներում կազմակերպվել են բազմաբնույթ միջոցառումներ:

Շուշիի պատմության թանգարանի հետ համատեղ Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում կազմակերպվել է «Մշակութային Շուշի» թեմայով ցուցահանդես:

Սեպտեմբերի 25-26-ը՝ Եվրոպական ժառանգության օրերը՝ ծրագրի շրջանակներում «Համընդգրկուն ժառանգություն» համաեվրոպական խորագրի ներքո Արցախի մշակութային օջախներում կազմակերպվել են միջոցառումներ, ինչպես նաև պատրաստվել է տեսա-հոլովակ Արցախի վերահսկողությունից դուրս մնացած տարածքներում թշնամու կողմից մշակութային արժեքների ոչնչացման վերաբերյալ:

Հունիսի 5-ին Արցախի պետական պատմա-երկրագիտական թանգարանի հետ համատեղ անց է կացվել դաս-դասախոսություն և քննարկում՝ «Արցախի բռնակցումը Ադրբեջանին» խորագրով:

Աշխատանքներ են տարվում Բերդաշենի պատմության թանգարանի հիմնովին վերանորոգման և նոր ցուցադրության կազմակերպման ուղղությամբ:

Տարվա ընթացքում աջակցություն է ցուցաբերվել նախարարության ենթակայությամբ գործող բոլոր թանգարաններին:

2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով ԱՀ վերահսկողությունից դուրս են մնացել 10 պետական և 2 ոչ պետական թանգարաններ՝ 20 885 քառակուսյան արժեքներ և 617 000 գրքային ֆոնդ:

«Մշակութային ժառանգության պահպանում և մշակութային ինքնության վերարտադրություն» ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ ծրագրերը.

Սեպտեմբերի 28-ին ԱՀ մշակույթի և երիտասարդության պալատում տեղի է ունեցել «Արցախյան գորգարվեստ» հանրապետական հիմնադրող մրցույթը, որի նպատակն արցախյան գորգարտության ու ստեղծակարի մշակութային ավանդույթների վերականգնումն է, ժամանակակից գեղարվեստական ճաշակին և

ՏԱՐԿԱ ԱՄՓՈՓՈՒՄ

պատկերացումներին բնորոշ տարրերով լրացված, ժողովրդական արհեստների համառոտաչափումը, զարգացումը և փոխանցումը սերունդներին: Մրցույթն անց է կացվել 3 անվանակարգերով՝ «Գորգ», «Կարպետ» և «Ասեղ-նագործություն»: Մրցույթին Ստեփանակերտից և շրջաններից ներկայացվել է 36 աշխատանք:

«Ցուցանմուշների ձեռքբերման ծախսեր» ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել հետևյալ աշխատանքները.

Արցախի միջնադարյան մշակույթը ներկայացնող երկու «Արցախյան ավանդական ընտանիք» ու «Գինեգործություն և օղու թորում» մանրակերտներ՝ Գրիգորի Ավանեսյանի հեղինակությամբ:

Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի գորգերի հավաքածուն համալրելու նպատակով ձեռք է բերվել մեկ ուղեգորգ, մեկ «Ասեղ» կարպետ՝ գործված Հադրուքի շրջանի Թաղատե գյուղում:

Չնագիտության և ազգագրության բաժնի համալրման նպատակով ձեռք է բերվել հինգ ցուցանմուշ:

«Գրադարանային գործի զարգացման» ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

ԱՀ գրադարանների գրքային ֆոնդը համալրելու նպատակով գնման ճանապարհով ձեռք է բերվել Մ. Մանուկյանի «Երկրի վրա քայլող քաջ առյուծները և երկնքում սավառող հերոս արծիվները» գիրքը՝ 20 հատ: Ձեռք բերված գրականությունը բաժանվել է ԱՀ գրադարաններին:

Չուլիսի 2-ին Հ. Թումանյանի անվան հանրապետական մանկական գրադարանում կազմակերպվել է «Խտրադությունը» մանկության գույներով» նկարչական միջոցառում:

Չուլտեմբերի 7-ին՝ Գրադարանավարի մասնագիտական օրվան նվիրված նախարարության աջակցությամբ գրադարաններում կազմակերպվել են բազմաբնույթ միջոցառումներ:

Փետրվարի 19-ին Գիրք նվիրելու օրվա կապակցությամբ նախարարության աջակցությամբ Արցախում գործող տարբեր գրադարանների գրքային ֆոնդերը համալրվել են նվիրատվությամբ ձեռք բերված գրականությամբ: Մասնավորապես՝ Մ. Մաշտոցի անվան հանրապետական գրադարանին են հանձնվել Վազգեն Օվանյանի անձնական գրադարանից գրքեր, իսկ Մարտունու շրջանի Գիշի գյուղի դպրոցական գրադարանը համալրվել է հազար կտոր գրականությամբ՝ դասախոս Լենա Գրիգորյանի անձնական գրադարանից:

Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում էլեկտրոնային գրադարան ստեղծելու նպատակով:

Աջակցություն է ցուցաբերվել Արցախում գործող բոլոր գրադարաններին:

«Հրատարակչական ծախսեր» ծրագրի շրջանակներում իրատարակության են հանձնվել.

Վահրան Բալայանի հեղինակած «Արցախի պատմությունը հնագույնից մինչև մեր օրերը» գրքի ռուսերեն տարբերակը:

Մելանյա Բալայանի հեղինակած «Աղվանից եկեղեցու պատմությունը» գրքի հայերենից ռուսերեն թարգմանությունը:

Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում Սլավա Մարգարյանի "История Арцаха во времена царской России" աշխատության իրատարակման համար:

Չովանավորչական ծրագրերով Ստեփանակերտ քաղաքում բացվել է «Արծաթագործական արհեստանոց»:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ուսումնասիրման, պահպանման և վերականգնման բաժնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Կազմվել է տրամադրվել են տարբեր հասարակական կազմակերպությունների և պետական մարմինների՝ Ադրբեջանի կողմից օկուպացված տարածքներում մնացած հուշարձանների ցուցակները, Ադրբեջանի կողմից իրականացվող վանդալիզմը փաստող տեսանյութեր ու լուսանկարներ (որոնք հավաքագրվել և արխիվացվել են համացանցից):

Տարբեր գիտաժողովներում քննարկվել են Ադրբեջանի կողմից օկուպացված տարածքներում մնացած հուշարձանների ներկա իրավիճակն ու ապագա ճակատագրերը:

Համապատասխան գրություններով դիմել ենք ՀՀ արտաքին գործերի նախարարությանը, ՀՀ մարդու իրավունքների Եվրոպական դատարանի ներկայացուցչությանը, ՅՈՒՆԵՍԿՕ-ին, ՄԱԿ-ին և Ֆրանսիայի սենատի սենատորներին:

Չուլարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվան նվիրված՝ ապրիլ ամսում կազմակերպվել է բողոքի ակցիա, որտեղ բարձրաձայնվել է Ադրբեջանի կողմից իրականացվող վանդալիզմի մասին:

Կազմակերպվել է լուսանկարչական ցուցահանդես՝ «Բռնագրավված տարածքների հուշարձանները» խորագրով: Ցուցահանդեսին ներկայացված էին Ադրբեջանի կողմից օկուպացված տարածքներում մնացած պատմամշակութային հուշարձանների լուսանկարներ: Ցուցահանդեսը ներկայացվել է նաև Հայաստանի Հանրապետությունում:

Շարունակվել են աջակցման աշխատանքները, որոնք ուղղված էին Ամարասի վանական համալիրի վերականգնման աշխատանքների վերականգնումը, որոնք այժմ արդեն իսկ շարունակվում են: Պլանավորվում է համալիրն ամբողջական ավարտել 2023 թվականի վերջին: Աշխատանքները ֆինանսավորվում են «Լույս» հիմնադրամի կողմից:

Կրոնի և ազգային փոքրամասնությունների բաժնի կողմից տարվա ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.



Կազմակերպվել են ուխտագնացություններ Կարմիր գյուղ, Դաշուշեն, Գանձասար, Գորիս, Խաչնաչ, Պողոսազոներ, Բովուրխան, Աստղաշեն, Քոլատակ, Ծանակառո, Երից Մանկանց վանք, Բերդաձոր:

Համոհիպոստներ են կայացվել ԱՀ նախագահ Ա. Հարությունյանի և պետնախարար Ա. Բեգլարյանի հետ: Քննարկումների թեման՝ «Ավետարանի հավատքի քրիստոնյաների կազմակերպության» հետագա գործունեության հարցը Արցախում, ԱՀ արդարադատության նախարար Ժիրար Միրզոյանի և փոխնախարար Կամո Քոչարյանի հետ: Քննարկման թեման. «Մտքի, խղճի, դավանանքի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի և ՀՀ համապատասխան նոր օրենքի մտախազի հետ համադրման վերաբերյալ առաջարկությունը:

Երիտասարդության հարցերի ոլորտում հաշվետու ժամանակահատվածում իրականացված ծրագրերն ուղղված են եղել հետպատերազմական իրավիճակում երիտասարդության շրջանում առկա խնդիրների վերհանմանը, ոչ ֆորմալ դասընթացների միջոցով տեղեկատվական անվտանգության վերաբերյալ գիտելիքների փոխանցմանը, հոգեբանական աջակցության տրամադրմանը, ազգային արժեքների արժևորմանը, պահպանմանն ու տարածմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, առողջ ապրելակերպի խթանմանն ու կամավորական շարժման զարգացմանը:

Աստիճանով է եղել 4 գերակա ուղղություն՝

- Համահայկական և միջազգային երիտասարդական համագործակցության զարգացում,

- Երիտասարդության իրազեկվածության մակարդակի բարձրացում,

Ոչ ֆորմալ կրթություն, Երիտասարդության հասարակական և քաղաքացիական ակտիվության խթանում:

Ապահովվել է "Арцахский Акцент" թիմի մասնակցությունը ՌԴ Դոնի Ռոստով քաղաքում կայացած միջոցառմանը: Կազմակերպվել է ԱՀ 18 երիտասարդների ուխտագնացու-



թյունը դեպի Սպիտակավոր եկեղեցի (Գարեգին Տեղեհի գերեզման), նաև Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումներ՝ ԱՀ սահմանամերձ համայնքներում:

«Ոչ ֆորմալ կրթություն» ծրագրի շրջանակներում ԱՀ Ասկերանի շրջանի Խնձրիստան համայնքում նախատեսվում է իրականացնել ազգային-ավանդական ամանորյա ծրագիր, որն ազգայինը հանրահռչակելու և երիտասարդ սերնդին ի պահ տալու նպատակ ունի:

«Երիտասարդության շրջանում ազգային արժեքային կողմնորոշման ամրապնդման, ռազմահայրենասիրական, առողջ ապրելակերպի դաստիարակության, հայկական ավանդական ընտանեկան արժեքների պահպանման, ազատ ժամանցի արդյունավետ կազմակերպման, սոն և հիշատակ օրերի նշանավորման, հայրենաճանաչողության, բանակ-հասարակություն կապի ամրապնդմանն ուղղված ծրագրի» շրջանակներում սեպտեմբերի 26-ին կազմակերպվել է «ԱՐՑԱՍԻՆ ԱՊՐՈՒՄ Է» խորագիրը կրող ջահերը՝ ի հիշատակ 44-օրյա պատերազմում նահատակված հերոսների: Վերոնշյալ ծրագրի շրջանակներում ԱՀ Մարտունի քաղաքում կամավորական շարժման զարգացման նպատակով կազմակերպվել են կամավորների հավաք և ինտելեկտուալ խաղ-մրցույթներ: Մայիսյան եռատոնին նվիրված միջոցառումների շրջանակներում «Ննջեք խաղաղությամբ. Չեր գործը շարունակում ենք» խորագրով հիշատակի տուրքի կազմակերպման շրջանակներում Արցախի 10 երիտասարդ Արցախում և ՀՀ-ում այցելել է 16 քաղաքների եղբայրական գերեզմանատներ:

Չովանավորների աջակցությամբ Արցախի 7 երիտասարդներից կազմված թիմը մասնակցել է ՌԴ Ստավրոպոլի երկրամասի Կարաչանո-Չերքեզիայի մարզի Արխըզ ավանի տուրիստական բազայում կայացած «Դրբորգ-րադ» կամավորական հավաքին:

ԱՀ սահմանամերձ 3 համայնքներում՝ Խրամորթ, Գիշի և Մաղավուզ, կազմակերպվել են երիտասարդական համալիր միջոցառումներ, որոնց մասնակցել են նաև վերոնշյալ համայնքներին հարակից այլ համայնքների 200 երիտասարդներ: Միջոցառման շրջանակներում կազմակերպվել է նաև «Մաղաչ» կրթամշակութային ծրագիրը, որոնց մասնակցել են 60-ից ավելի երեխաներ:

Տարվա ընթացքում կազմակերպվել են Վերածննդի օրվան նվիրված միջոցառումներ, աջակցություն է ցուցաբերվել ՀՀՂ Արցախի գրասենյակին Ցեղասպանության օրվան նվիրված միջոցառումների կազմակերպմանը, ՌԴ խաղաղապահների հետ համատեղ կազմակերպվել է ֆիլմերի դիտում և քննարկում, խաղաղապահների համար կազմակերպվել են այցեր Գանձասարի վանական համալիր: Կազմակերպվել է կամավորների հավաք:

Տարվա ընթացքում մշակվել է «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ԱՀ օրենքի հայեցակարգի նախագիծը, աշխատանքներ են տարվել ԱՀ երիտասարդական պետական քաղաքականության կայեցակարգի մշակման ուղղությամբ:

ՄՊՈՐՏ

• Հաշվետու տարում սպորտի վարչության և ֆեդերացիաների կողմից կազմակերպվել ու անց է կացվել 17 տեղական մարզական միջոցառում՝ 810 մասնակիցներով (մարզիկներ և մարզիչներ):

• ԱՀ-ից 1595 մարզիկ և մարզիչ 100 անգամ ՀՀ-ում մասնակցել են մարզական միջոցառումների (ՀՀ առաջնություններ, գավաթի խաղարկություններ, հուշամրցաշարեր և մրցաշարեր):

1-ին տեղ՝ 208 հոգի
2-րդ տեղ՝ 135 հոգի
3-րդ տեղ՝ 194 հոգի

• ԱՀ-ից 258 մարզիկ և մարզիչ 28 անգամ մասնակցել են միջազգային մրցաշարերի:

1-ին տեղ՝ 38 հոգի
2-րդ տեղ՝ 29 հոգի
3-րդ տեղ՝ 31 հոգի

• ԱՀ-ից 45 մարզիկ և մարզիչ 16 անգամ մասնակցել են Եվրոպայի առաջնությունների:

1-ին տեղ՝ 5 հոգի
2-րդ տեղ՝ 4 հոգի
3-րդ տեղ՝ 10 հոգի

• ԱՀ-ից 30 մարզիկ և մարզիչ 8 անգամ մասնակցել են աշխարհի առաջնությունների:

1-ին տեղ՝ 1 հոգի
2-րդ տեղ՝ 1 հոգի
3-րդ տեղ՝ 5 հոգի

Տարվա լավագույն արդյունքները



1. Արթուր Առուշանյանը Լեհաստանի Կրակով և Սվինույսցե քաղաքում մասնակցելով կրկուշին կարատեի աշխարհի 3-րդ և Եվրոպայի 34-րդ առաջնություններին, գրավել է համապատասխանաբար 1-ին և 3-րդ մրցանա-

կային տեղերը՝ դառնալով աշխարհի քառակի չեմպիոն:

2. Մանվել Պետրոսյանը, մասնակցելով երիտասարդների բռնցքամարտի Եվրոպայի առաջնությանը, գրանցել է մեծ հաղթանակ՝ Արցախի սպորտային պատմության մեջ առաջին անգամ օլիմպիական մարզաձևից գրավելով 2-րդ մրցանակային տեղը:

3. Երիկ Առստամյանը, Վրաստանի Թբիլիսի քաղաքում մասնակցելով ավագ տարիքի պատանիների բռնցքամարտի Եվրոպայի առաջնությանը, գրավել է 3-րդ մրցանակային տեղը:

4. Դավիթ Հովսեփյանը, մայիս ամսում Կիպրոսի Լիմասոլ քաղաքում մասնակցելով սամբոյի Եվրոպայի, իսկ հոկտեմբեր ամսում՝ Հունաստանի Սալոնիկ քաղաքում պատանիների և երիտասարդների աշխարհի առաջնություններին, գրավել է համապատասխանաբար 1-ին և 3-րդ մրցանակային տեղերը:

5. Միխայիլ Միխայրյանը հոկտեմբեր ամսում Սերբիայի Բելգրադ քաղաքում մասնակցել է ավանդական կարատեի (ETKF) 35-րդ Եվրոպայի առաջնությանը և գրավել 1-ին մրցանակային տեղը:

6. Յուրի Կարոզյանյանը նոյեմբեր ամսում Ռուսաստանի Դաշնության Եկատերինբուրգ քաղաքում մասնակցելով սեղմում հենարանից վարժության Եվրոպայի առաջնությանը, գրավել է 1-ին մրցանակային տեղը, իսկ դեկտեմբերին Ռուսիայի եռամարտի ՀՀ առաջնության ժամանակ 285,5կգ արդյունքով կքանիտ վարժությունում գրանցել է ՀՀ ռեկորդ:

7. Արթուր Մովսիսյանը, նոյեմբեր ամսում Մոնտենեգրոյի Բուդվա քաղաքում մասնակցելով Պատանիների քիթբոքսինգի Եվրոպայի առաջնությանը, գրավել է 3-րդ մրցանակային տեղը:

8. Ալեքսանդր Մովսիսյանը, Ռուսիայի Բուխարեստ քաղաքում մասնակցելով Բազկամարտի աշխարհի 42-րդ առաջնությանը լսողական խնդիրներ ունեցող հաշմանդամների միջև, գրավել է 3-րդ մրցանակային տեղը:

9. Հաջորդություններ ենք ունեցել նաև ՀՀ առաջնություններում խաղային մարզաձևերից. Մ-16 տարեկան աղջիկների բասկետբոլի հավաքական թիմը, մասնակցելով ՀՀ կանոնավոր առաջնությանը, գրավել է 1-ին մրցանակային տեղը:

ԴԱՍԱԿԱՆ ԷՋ

ՐԱՖՅՈՒ ՆՈԹԵՐԸ ԸՅՈՒՄՆԱԿՆԻ ԱՐՑԱՆԻ ԱՄԱՍԻՆ

Սկիզբը՝ «Լուսարար»-ի նախորդ համարներում

Մաս 4
ԳԵՏԱՇԵՆ

Ազատ գյուղում երկու օր մնալով, իմ հյուրընկալ քահանայի հետ ծի վարձեցիմք, և երրորդ ավուր առավոտյան պահուն սկսեցիմք դիմել դեպի Գետաշեն գյուղը: Գանապարհը ձգվում էր լեռների բարձրավանդակների վրայով, երբեմն իջնում էր խորին ձորերի մեջ: Կեսօր էր, երբ հասանք Գետաշեն հայաբնակ գյուղը:

Գետաշենը գտնվում էր մի փոքրիկ ձորի մեջ, որտեղից անցնում է Քյուրակ-չայի ճյուղերից մեկը: Ամբողջ ձորը, գետի աջ և ձախ կողմերում, լցված է գյուղացիների այգիներով, որ



Հայկական Գետաշենը

նրան անտառի ձև են տալիս: Վայրենի ընկուզենիները դարևոր հասակ ունին:

Այդ գյուղում են իջևանեցի Մելիք Մնացականովների տա-



Մելիք Մնացականյանի տունը Գետաշենում



նը. մի հոյակապ, քարից շինված տուն, որ որոշվում էր մյուսներից իր մեծությամբ:

Դա Գանձակի գավառի չորս մելիքներից մեկի տունն էր:

Ես գտա այդ տոհմի ներկայացուցիչներից մեկին՝ Մնացական բեկին անկողնի մեջ: Մոտ հարյուրամյա ծերունին տկար էր, բայց հիշողությունը տակավին արթուն և դատողությունը առողջ: Խիստ հետաքրքրական էր խոսել այդ կենդանի հնության հետ հին անցքերի մասին: Նա պատմում էր բոլորը ինչպես մի խորեմացի: Երբ նա նկատեց, որ ասածները մշանակում են հիշատակարանիս մեջ, շատ ուրախացավ: «Գրեցեք, որդի, ասաց նա, թող հայոց նախնյաց գործերը չկորչեն. նրանք շատ երևելի մարդիկ են էլել»: Հետո նա հարցրեց. «Հիմա ինչպե՞ս է հայոց ազգի գործը»: Ես պատմեցի նրան մի քանի բաներ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածից, Ներսես պատրիարքի աշխատություններից և այլն: «Բա մեր կաթողիկոսը ի՞նչ է շինում», - հարցրեց նա: - Ոչինչ, - պատասխանեցի ես: Ծերունին խորին կերպով հոգվոց հանեց և լռեց:

Գետաշեն գյուղը ունի մի քարաշեն եկեղեցի և մի մատուռ, որ ուխտատեղի է. նա կոչվում է ս. Նշան: Եկեղեցին ես չգնա-



Գետաշենի Ս.Սարհան եկեղեցին

ցի, ինձ հետաքրքրում էր ուխտատեղին, որտեղ ես կամենում էի տեսնել մի հին գրչագիր ավետարան:

Երկար որոնելուց հետո գտան քահանային, որ եկավ մատուռի դուռը բաց արավ: Գանապարհին իմ ուղեկից տեր Գ. Բ.-ն պատմեց մի նոր պատահած անցք, որից ես հասկացա, թե ինչպես պետք էր վարվել այդ մատուռի մեջ: Ամենայն երկյուղածությամբ մոտեցա, երեսու խաչակնքելով համբուրեցի ս. Ավետարանը և այլ սրբությունները, որ կարգով շարած էին սեղանի վրա: Հետո խնդրեցի քահանային, եթե կարելի էր, ինձ ցույց տալ գրչագիր Ավետարանը: Որովհետև մատուռի մեջ



Մուրը Նշան մատուռը Գետաշենում

սաստիկ մութն էր, նա այնքան բարի եղավ, որ թույլ տվեց ավետարանը մատուռից դուրս հանել և բակումը նայել:

Ես տեսել եմ հայոց բազմաթիվ գրչագրեր, բայց առաջին անգամ պատահում էր ինձ տեսնել մի այսպիսի գեղեցիկ աշխատություն: Մագաղաթի նրբությունը, գրչի գեղեցկությունն ու կանոնավորությունը սքանչելի էր: Համարյա ամեն երեսների վրա կային հիանալի պատկերներ, որ ներկայացնում էին Ավետարանի յուրաքանչյուր գլխի բովանդակությունը: Պատկերների նկարները, գույները, ոսկեզօծությունը, ցույց էին տալիս ժամանակի գեղարվեստի կատարելությունը: Կազմը ամբողջապես արժաթից էր. կազմի վրա դուրս էին փորված առաքյալների և այլ սրբերի պատկերները:

Բայց ես բախտավոր գտնվեցա, որ նույն ավետարանի վերջին թերթերի վրա գտա մի հիշատակարան, որ ինձ համար

շատ քանակազին էր: Իմ ճանապարհորդության գլխավոր նպատակներից մեկը լինելով հայոց հին մելիքների մասին պատմական տեղեկություններ հավաքել, այդ Ավետարանի մեջ գտա Ջրաբերդի մելիքների ամբողջ տոհմագրությունը (Ջրաբերդի մելիքությունը Ղարաբաղի հինգ մելիքություններից՝ Խամսայի, մեկն էր):

Ահա ինչ դիպվածով, հիշատակարանից երևում է, որ 1753 թ. Ջրաբերդի մահալի իշխան Մելիք Հաթանը ետ է գնել այդ Ավետարանը պարսիկներից, որ նրանք ձեռքում գերի էր ընկած: Նրա առաջին արժաթ կազմը պարսիկները պոկած են եղել, մելիքը նորից արժաթով կազմել է տալիս և ընծայում Գետաշենի եկեղեցուն: Որպեսզի ապագա սերունդը այդ բարեգործության համար հիշե նրան իր աղոթքների մեջ, մելիքը ժամանակի սովորության համեմատ, իհարկե կրոնական մտքով, արձանագրում է հիշատակարանի մեջ իր նախնյաց, իր որդիների և թոռների անունները: Ահա այդքանը մի հաստատ փաստ է պատմագրի համար, գիտենալ, թե որ ժամանակում էին ապրում այդ մարդիկը, ովքե՞ր էին նրանց նախնիքը, ովքե՞ր էին նրանց որդիքը, թոռները և այլն: Բացի դրանից, հիշատակարանի մեջ արձանագրվում է, թե ով էր ժամանակի կաթողիկոսը, առաջնորդը, երկրի տիրապետողը և այլն:

Մեր հին ձեռագրերի մեջ գտնված հիշատակարանները, համարյա բոլորը այդ ձևով են գրվում, և կարող են մատակարարել հնասերներին առատ պատմական նյութեր, եթե հավաքեն իրանց ձեռքի տակ գտնված ահագին գրադարանի գրչագիր գրքերի հիշատակարանները և տպել տային իրանց տպարանում:

Ես ավելորդ եմ համարում յուրաքանչյուր գյուղի տնտեսության եղանակը, կեցության ձևերը, գյուղացիների վիճակը առանձին-առանձին նկարագրել, դա կձանձորացներ իմ ընթերցողներին, և ես անդադար կրկնությունների պիտի համդիպեի: Այդ կողմերի գյուղացիների դրությունը և նրանց կենցաղավարության եղանակը այնքան նման է միմյանց, որ բոլորի մասին կարելի է գրել մի ընդհանուր տեսություն և այդ կգրեմ ես հետո:

Գետաշենցիների մասին այսքանը ավելորդ չեմ համարում հիշել, որ նրանք հայտնի են շրջակա գյուղացիների մեջ իրանց կրթական և խռովարար բնավորությամբ: Երբ գյուղական աշխատությունները դադարում են, հանգստի ժամանակ նրանք մի առանձին բավականություն են գզում, հավաքվել խրճիթների կտուրների վրա, ծխել և միմյանց ուշուներ տալ: Երևանի մահանգի աշտարակցիները հայոյանքը, ուշուները իր կատարելությանն են հասցրել, բայց գետաշենցու ուշուները, թեև սյունեցու նման կոշտ է, կոպիտ է, բայց ազդու է:

ԿԱՐԱԲՈՒԼԱՂ (ՄԱՐՏՈՒՆՇԵՆ)

Գետաշենից անցանք Կարաբուլաղ գյուղը, որ ընդամենը 2 ժամվա ճանապարհ է: Ամեն մի գյուղ հասնելիս կամ պետք է որոնել տանուտերի տունը, կամ քահանայի տունը: Ես ընտրեցի վերջինը, մտածելով, թե հունձքի, կալի ժամանակ է, տանուտերը զբաղված կլինի, բայց քահանան անգործ կլինի: Բայց իմ կարծիքը խաբեց ինձ: Քահանային մենք գտանք մեր քարաշեն քարվանսարայի մեջ: Այդ քարվանսարան մնացել է ամենահին ժամանակներից: Նրա շրջապարիսպը, դարվազան, ախտատները քանդված են, և գյուղացիները քարերը տանելով գործ են անել իրանց շինությունների համար: Այժմ ողջ մնացել են մի կարգ քարաշեն և կամարակապ սենյակներ, որ առաջ ծառայում էին որպես իջևան ճանապարհորդներ:



Մարտունաշեն գյուղը

ՈՍԱՆ

ՎԱՂՈՒՀԱՍ՝ ԱՐՅԱՆԻ ՎԵՂԱՆԻՍ ԱՆԿՅՈՒՆ

Դարերի պատմություն ունեցող Արցախ աշխարհն աննվաճ ու հարատև է իր ամրակուռ ու մշտաբուն գյուղերով: Նրա սրտի մի փոքրիկ անկյունում է ծվարել Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղը՝ կերտված ու նվաճված քաջերի արյամբ: Գյուղը շրջապատված է լեռներով, որոնք հարյուրամյակներ շարունակ պատսպարել ու անառիկ են պահել Վաղուհասը: «Վաղուհաս» անվան ծագման տարբեր վարկածներ կան: Պատմաբան Սլավա Սարգսյանի բացատրությամբ՝ «հաս-խաս»-ը մեծարող, սրբացնող իմաստ ունի: «Վեղը հաս է», նշանակում է՝ հողը սուրբ է: Մեկ այլ վարկածով գյուղի անունը դրվել է թաթար-մոնղոլական արշավանքներից հետո: Իբր զորապետներից մեկը հաջեն գավառից Գանձասարի լեռնաբազկով, Կարմիր վանքի տարածքով առաջինն ու ամենից շուտն է հասել այս ծորակ, վրաններ գարկել և այն կոչել վաղ հասնող, որից և առաջացել է՝ Վաղուհաս:



Խաթրավանք-1204թ.

Վաղուհասցիները աստվածավախ և հավատավոր մարդիկ են: Այդ են վկայում գյուղում տարբեր ժամանակաշրջաններում կառուցված եկեղեցիները, վանական համալիրները: Դրանցից են Կարմիր վանքը, Խաթրավանքը, որոնք կառուցված են դժվարամատչելի վայրերում, սակայն ինչքան էլ դժվարանցանելի են եղել սրբավայրեր տանող ճանապարհները, այնուամենայնիվ, հավատացյալ ժողովուրդը, հաղթահարելով բոլոր դժվարությունները, ուխտի է գնացել և իր աղոթքը հղել առ Աստված՝ բարօրություն և հարատևություն խնդրելով իր ազգի համար: Գյուղամիջում վեր է խոյանում Սուրբ Մայրաքաղաք նշանավոր եկեղեցին, որը կառուցվել է դեռևս 13-րդ դարում: Ճիշտ է, եկեղեցին ավերվել ու բազմիցս խոշտանգումների է ենթարկվել, բայց չի կորցրել իր գրավչությունն ու հետաքրքրությունը: Նախկին վանական մեծ համալիրից կանգուն մնացած մի խորանը դեպի իրեն է ձգում օտարերկրացի զբոսաշրջիկներին ու Արցախի հրաշալիքներն ուսուսմանսիրողներին: Գյուղ մտնելուն պես Աստուծո հովանավոր ձեռքը Աստվածածին եկեղեցու միջոցով օրհնում ու հյուրընկալում է այցելուներին, և քանի դեռ կանգուն է սրբավայրը, կիչվի ու սերունդների կողմից կփառաբանվի վաղուհասցի ռուսաստանաբնակ բարերար, իր հայրենի եգեր-

քի սիրով ու կարոտով լցված հայրենանվեր Գրիգորի Չայրապետյանի անունը, ով իր արարման ուժն ու վաստակը ներդրում է Արցախի ապագայի համար: Դարեր շարունակ վաղուհասցին կարողացել է պահպանել իր հավատքը և, ինչպես հարյուրամյակներ առաջ, այնպես էլ այսօր հավատքն ամուր է նրա մեջ:

Տոկուն էր վաղուհասցին: 90-ականների մահաշունչ օրերին, երբ արյունուշտ գազանը փորձում էր ոչնչացնել մի ողջ ազգ և նվաճել նախնայաց սուրբ հողը, ոտքի կանգնեց անվեհեր վաղուհասցին: Նրա մեջ կյանք առավ հայրենյաց պաշտպանի ոգին, և նա առանց վարանելու նետվեց կռվի դաշտ, իսկ նպատակը մեկն էր՝ թույլ չտալ պիղծ ագերուն ոտք դնել սուրբ հողի վրա:

Արցախի ազատագրական պայքարում գերեզմանավայր Վաղուհասը, բայց անկոտրում մարտիկների արյան գնով ազատագրվեց: Այդ պայքարում գյուղն ունեցավ ծանր կորուստներ: Թուրք բարբարոսի վայրագ ձեռքով ավերվեցին ու այրվեցին Վաղուհասի բոլոր տները: Ծաղկուն ու զարգացող բնակավայրը վերածվել էր հողմածեծ ծառաստանի՝ սրտում ցավ ու կսկիծ: Հանգան հարյուրավոր տների հույսի ու հավատի

ջահերը, որբացան բազմաթիվ մանուկներ: Եթե մի ժամանակ գյուղում լավում էր հարսանիքների, աչքալուսանքի, խնջույքների ծափ ու ծիծաղ, ապա այդ օրերին լսելի էին միայն որբևայրի կանանց ու որդեկորույս մայրերի աղիողորմ ճիչեր:

Մոխիրներից վերընծյուղվեց Վաղուհասը: Երբեմնի այրված ու քանդված ավերակները նորից շունչ առան, վեր հանեցին՝ ապացուցելու, որ ոչ մի ուժ չի կարող ջլատել Վաղուհասի ու վաղուհասցու միասնությունը: Աշխարհասփյուռ հայերի օժանդակությամբ վերակառուցվեցին ավերակների վերածված բնակարանները, հին դպրոցի տեղում կառուցվեց նոր դպրոց, վերանորոգվեցին հանդիսությունների սրահն ու գյուղական ակումբի շենքը:

Այսօր գյուղամիջում վեր է հանուն հպարտ հուշակոթող, որի վրա դաջված են հերոս նահատակների ու անհայտ կորածների անունները: Նրանց սխրանքը օրինակ է ծառայում այսօրվա սերնդի համար:

Կարծես թե մեզ վիճակված է վերապրել պատմությունը: 2020 թվականի սեպտեմբերի 27-ին կրկին ինքնուրույնականների սևը փորձեց խլել հայ մանուկի անհոգ կյանքը, արցախցի շինականի արդար վաստակը, արցունքով լցնել որդու տունդարձի ճանա-



Կարմիր վանք-1224թ.

պարհին սպասող մոր աչքը: Լսելով պատերազմի վերակսման բոթը՝ վաղուհասցի երիտասարդ քաջերը մեկ մարդու պես ոտքի ելան ու մեկնեցին ռազմադաշտ: Նրանք

երեկվա նահատակների արժանի հետնորդներն են, սուրբ հողի պաշտպանները: Ցավոք, այս ազատամարտում ևս մարեցին չորս տան ճրագներ. գյուղն ունեցավ 3 զոհ, մեկ անհայտ կորած կին զինվորական:

Այսօր Վաղուհասը Արցախի ամենազարգացող բնակավայրերից մեկն է: Գյուղն ունի նորակառույց դպրոց, որտեղ սովորում են մոտ 200 աշակերտներ և դասավանդում 30 ուսուցիչներ: Համայնքի ղեկավար Հ. Պետրոսյանի ջանքերով և միջոցներով գյուղն ունի ասֆալտապատ ճանապարհ, իսկ երեխաների, նրանց հնուտ ու բանիմաց ուսուցիչների և սրտացավ ու կարեկից մարդկանց շնորհիվ ընթացքի մեջ են գյուղական գրադարանի և խաղահրապարակի կառուցման աշխատանքները: Այստեղ փորձում են շարունակել պապերից եկած ավանդույթը՝ յոթ որդով սեղան ստել: Եվ դեռ քիչ է ասված՝ յոթ որդով կան օջախներ, որտեղ անգամ տասը զավակներով են սեղան ստում:

Ջորավոր է վաղուհասցու բազուկը: Այս երեսուն տարիների ընթացքում նա զօր ու գիշեր աշխատել է իր օջախը շենացնելու համար: Չկա մի տուն, որտեղից չի բարձրանում ծխնելույզի խաղաղ ծուխը: Բոլոր ընտանիքներում էլ լսվում են մանկան անհոգ ճիչեր: Նրանց ուժ ու զորություն են հաղորդում Շողակաթի անապակ ու սառնորակ ջուրը և Սուրբ Մայրաքաղաքից ճառագող հավատքի ուժը: Պապերի անվեհեր ոգին վերածնվել է վաղուհասցի փոքրիկների աչքերում: Երբ հարցնում ես, թե ինչ են դառնալու, երբ մեծանան, նրանք առանց վարանելու պատասխանում են՝ զինվոր: Այլևս ոչ մի կասկած չկա, որ հավերժությամբ է պսակված մեր ազգը, և ոչ մի հողմ չի կարող արմատախիլ անել հազարամյակների ճանապարհով անցած Արցախն ու արցախցուն:

Վաղուհասը եղել է, կա ու կլինի Արցախի վեհանիստ բնակավայրերից մեկը, քանի դեռ ստեղծագործ է վաղուհասցու սերունդը, կենսունակ է ճաքճքած ձեռքը, անպարտ է բռունցքը և ամուր է հավատքը՝ կերտված ու կոփված արյան գնով:

Երջանիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Առաջաձորի Ա. Պողոսյանի անվան միջև. դպրոցի ՄՎՈՏՏ

րի համար (Երևան է, որ հին ժամանակներում Գանձակից Նախիջևան և Երևան տանող ճանապարհը այդ ծորի միջովն է եղել: Այստեղից մինչև Սևանա լիճ և այնտեղից Դարալագյազի (Վայոց ձորի) միջով մինչև Նախիջևան, երևում են այս տեսակ քարվանսարանների հետքեր, որ ծառայում էին որպես իջևաններ քարավանների անցուղարձի համար):

Քարվանսարան այժմ բոլորովին անտեր մնալով, գյուղի տեր Գ. քահանան սենյակներից մեկը ընտրել էր իր համար որպես արհեստանոց, այնտեղ տակառներ էր շինում, որոնք մեծ քանակությամբ գնում են շրջակա գյուղացիները: Քահանան վարպետի մոտ չէ սովորել, այլ իր սեփական վարժություններով փայտից այնպիսի իրեղեններ է շինում, որ ամենահնուտ արհեստավորի գործ կարելի է համարել: Ես տեսա նրա շինած մի փայտյա մատուցարան (պողոս), որը իր նրբությամբ և գեղեցկությամբ շատ հիանալի էր: Քահանան բացի հյուսնությունից գիտեր և այգեգործություն անտառներից վայրենի պտղատու ծառեր բերելով, տնկել էր մի այգի և տունկերը պատվաստելով, այն աստիճան ազնվացել է, որ ամենաընտիր տեսակների հետ կարելի է համեմատել:

Առհասարակ այդ քահանան ինձ վրա շատ լավ տպավորություն գործեց, ես առաջին անգամ տեսնում էի աստուծո

սեղանի պաշտոնանքներից մեկին, որ իր ապրուստի հույսը չէր դրել միայն պսակից, մկրտությունից և թաղումից ստացած փողերի վրա, այլ ապրում էր արդար արհեստով և գյուղացու



Կեպաս լեռը հայկական Մարտունաշենից

տնտեսությամբ: Նրա արհեստանոցի մոտ էր կալը, որտեղ նա կալսել էր տալիս իր մշակության բերքը:

Քահանայի արհեստանոցում ես գտա մի ուրիշ զարմանալի մարդ: Դրան կարելի է իր կյանքում պատահած արկածների համար և տեսած երկրների համար հայոց թափառական իրեա կոչել: Նա եղել է Թուրքիայում, Պարսկաստանում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Չինաստանում, մի խոսքով, ամեն տեղ: Հնդկաստանում նա սովորել էր լեղակ մշակելու արհեստը: Կամենալով այդ արհեստը իր հայրենիքում ևս մտցնել, նա վերադառնալով Գանձակ, սկսեց փորձեր անել, փորձը հաջողվեցավ և իր արդյունաբերած լեղակը նա ցույց տվեց տեղային կառավարությանը, խնդրելով, որ իրան օգնեն, որ կանոնավոր մշակություն սկսեն: Ոչ ոք նրա վրա ուշադրություն չդարձրեց, այժմ ծերությունից և աղքատությունից ստիպված, նա պատսպարան էր գտել Կարաբուլաղի հին քարվանսարայի ավերակների մեջ, և տեղ հոր արհեստանոցում ստանձ, կոշիկներ էր կարում, կոշիկների կաղապարներ էր շինում և օգնում էր տերտերին նրա հյուսնության գործում:

Կարաբուլաղի եկեղեցին մտնելուց հետո և մի քանի զրբերի հիշատակարանները քննելուց հետո, ես պատրաստվեցա շարունակել իմ ճանապարհը: Այստեղ ես պիտի բաժանվեի Գ. Բ.-յանցի հետ, որը Ազատ գյուղից բերել էր ինձ մինչև Կարաբուլաղ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

գետն է, Դյուտականը՝ Թարթարի ավիին գտնվող մի գյուղ, որտեղ բանակել էր Յերակլի զորքը, երբ «սրանց հետևից եկավ-հասավ պարսից զորքը, որին կոչում էին նոր զորք: Այս զորքի զորապետն էր Շահրապատականը: Թագավորին հավատարիմ նախարարներից նրանց մեջ կար վերակացու և հրամանատար մի մարդ, որին Գրանիկ սաղար էին անվանում, սա եկավ, իջավ ընդդեմ Յերակլի. իսկ պարսից մյուս զորավարը եկավ Յոնմից: Յերակլեսին ետ դարձրին և քշեցին (Սյունյաց) երկրով»:

Կաղանկատվացու այս վկայությունը գալիս է հստակ պնդելու, որ Յերակլի զորքը բանակել էր Թարթար գետի ավիին:

Ուստի առավել քան պարզ է, որ Մեթոսի հիշատակած **Տիգրանակերտ** ավանը հենց Արցախի Տիգրանակերտն է՝ Կանքասարի ստորոտին, որի ավերակները գտնվում են Շահբուլաղ աղբյուրի (Արքաների աղբյուր) հարևանությամբ. այն հայտնաբերվել է դեռևս 2005 թվականին, որտեղ մինչև 2020թ. զործում էր Տիգրանակերտի բանգարանը, սակայն, ցավոք, այն դավադրաբար հանձնեցին Ադրբեյջանին:

Մովսես Կաղանկատվացու պատմության մեջ հիշատակվում է նաև **Դավթակ Քերթողը** (մոտ 600-670-ից հետո)՝ որպես Պարտավ քաղաքում ապրող իշխանի պալատական երգիչ:

Դավթակի մասին միակ պատմական հիշատակությունն այն է, ինչ գրում է Կաղանկատվացին իր պատմության Բ գրքի ԼԳ գլխում. «Այդ ժամանակ Դավթակ անունով ճարտասանի մեկը, որ ծանոթ էր տաղաչափական արվեստին, ստեղծագործելու մեջ վարժ ու հաջողակ, քերթողական ընթերցման մեջ առաջադեմ, մեջտեղ եկավ: Սա առատ խոսքերի պաճուճանքներով ճարտար կերպով երգում է և շատ լավ գովաբանում՝ ունենալով այնպիսի լեզու, ինչպիսին ունենում է արագագիր գրողը: Սա շարունակ գալիս և երկար ժամանակ մնում էր պալատում: Իսկ երբ մեծ զորավարի հանկարծահաս սպանության առթիվ օրհասական շշուկը տարածվեց արևելյան երկրի՝ Աղվանքի վրա, այդ ժամանակ նա սկսեց երգել այբբենական կարգով դասավորված այս ողբը բարյացալարտ Չվանշիրի վրա և ասաց այսպես»: Սրան հաջորդող Բ գրքի ԼԵ գլխում էլ Կաղանկատվացին մեջքերում է Ջիվանշիրի մահվան մասին Դավթակ Քերթողի Ողբը:

Ավելի վաղ Կաղանկատվացին գրում է. «Խառնակառ գուսաններով ներթողված սիրառատ Չվանշիրը՝ պարթևահասակ զորավարը, որ գերագանց խոհականությամբ բոլորին ենթարկում էր իր իշխանության և, մահկանացուների մեջ իր ստացած գերագանց հատկությունների շնորհիվ ամբողջովին բարեբախտ լինելով, հպարտանում էր իր իմաստուն քաջությամբ»: Այստեղ հետաքրքիր փաստն այն է, որ Ջիվանշիր իշխանի պալատում, որը գտնվում էր Արցախի Պարտավ քաղաքում, կար Դավթակ անունով մի ճարտասան, որ հանկարծախոսությամբ ողբերգեց նրա մահը:

8-րդ դարի պատմիչ **Ղևոնդի** պատմագր-

քուն ևս կան որոշ հիշատակություններ Արցախի և Աղվանքի մասին՝ որպես հայերիս աշխարհի, որոնցից բերենք մի հատված. «...առաքել ի վերայ աշխարհիս՝ որ ընդ ձեռամբ եզտի: Որոց սփռեալ զասպատակս իւրեանց ըստ հիւսիսոյ գետոյն հզարագունի որ կոչի Կուր՝ առնուին բազում գաւառս՝ գ՜էջար, գ՜Քաղա, գ՜Ոստանի, գ՜Արգապանեան, գ՜Վաբանդ, գ՜Գեղաուու, գ՜Շաքէ, գ՜Բիխ, գ՜Կեմի, գ՜Կամբեխճան, գ՜Տողմաղ: Այս գաւառք աշխարհին Աղուանից»: Յիշատակված Յաբանդը Արցախի Կարկան գետի աջափնյակից մինչև Դիզափայտի լեռները և Քիրսի լեռնաշղթայից մինչև Մուղանի դաշտի արևմտյան սահմանն ընկած հատվածն է, որ համապատասխանում է Յարդուբի և Մարտունու շրջաններին, որն անվանվել է Սյուս Յաբանդ, իսկ ավելի ուշ նաև՝ Ամարաս՝ այդ գավառի համանուն հայտնի վանքի անունով: Յիշատակված Քաղա գավառը ընկած է եղել Ուտիքի և Աղվանքի միջև՝ ընդգրկելով Կուրի ծախակողմյան Սեբոջ կամ Քալածոր վտակի հովիտը, որի կենտրոնն էր Քաղաքերդ ամրոցը: Ի դեպ, Ղևոնդ պատմիչը երկու տեղ էլ հիշատակել է Պարտավ քաղաքի անունը:

Պարտավի մասին երկու հիշատակություն էլ թողել է **Անանուն Ջրուցագիրը կամ Կարծեցյալ Շապուհ Բագրատունին**՝ ներկայացնելով Պարտավը որպես Յայոց արևելյան սահման. «բռնութեամբ գրաւեցիր [առար] բոլոր կողմերը՝ արեւմուտքից [մինչև արեւելք], մինչև Պարտաւ քաղաքաւանը»:

Մովսես Կաղանկատվացու պատմության մեջ հիշատակվել է այն մասին, որ Արցախի իշխան «քաջամարտիկ Ապունուսեն, աներկյուղ համարձակությամբ 850-ական թթ. դեկավարել է Աղվանքի հայրության ազատագրական պայքարն ընդդեմ արաբների: Պատմական այդ դեպքերը հակիրճ ներկայացվել են «Աղվանից աշխարհի պատմության» մեջ. «Այդ օրերում եկան բարակամացիներ և մեծ վնաս հասցրին Սիսվան, Տրի ու Ամարաս գավառներին: Եսայի կոչված Աբու Մուսեն դուրս եկավ նրանց դեմ ու կոտորեց»:

849-855թթ. իշխանաց իշխան Բագրատ Բագրատունին, գահերեց իշխան Աշոտ Արծրունին և սպարապետ Սմբատ Բագրատունին գլխավորեցին արաբների դեմ նոր ապստամբությունը, որին միացան նաև մյուս նախարարները: Այս հերոսական ապստամբությունը հասավ մինչև Արցախ, որի Քթիչ բերդում ամրացած արցախցիները Եսայի Ապունուսեի գլխավորությամբ շուրջ 28 ամիս դիմադրեցին արաբ Բուղայի հարձակումներին:

Արցախի իշխան Եսայի Ապունուսեն՝ Յովսեփ երեցի որդին՝ ծագումով Երանշահիկ (Առանշահիկ) հայ իշխանը, ծնվել է մոտ 9-րդ դարի սկզբին: Ինչպես գրում է **Թովմա Արծրունին**, 9-րդ դարում «Աղվանքի մեծ մասին տիրում էր ոմն Ապունուսեն, որ հայտնի էր որպես կարդացող և ճանաչվում էր երեցի որդի»:

Եսայի իշխանի մասին հիշատակել են նաև արաբ մատենագիրները. «Եսայի իշխանին Տարթարին կոչում է Իսայ իբն Յուսուֆ իբն Ստեփանոս, իսկ հաճախ էլ Եսային կոչվում է Ապու-Մուսեն»:

Յայագիտության մեջ անդրադարձ է եղել նաև Եսայի Ապունուսեի իշխանությանը. «Նատիրում էր հզոր Քթիչ ամրոցին, որը գտնվում է ԼՂԻ-ի Յարդուբի շրջանում, Տող և Տունի գյուղերի մոտ, նույնանուն լեռան վրա: Ամրոցը աղբյուրներում հանդիպում է նաև Գտիչ անվանաձևով, որով կոչվել է և վանքը՝ Գտիչ: Եսայի Աբու Մուսեի նստավայրը Տունի գյուղն էր»:

Եսայի իշխանն ունեցել է Մովսես անունով մի որդի, ում մասին Յ. Ավագյանը գրում է. «Եսայի Աբու Մուսեն ունենում է մեկ որդի՝ Մովսեսը, որի անունը պահպանվել է հոր արաբական անվանաձևում՝ Աբու Մուսե՝ Մովսեսի հայր, իմաստով: Տաբարի արաբ մատենագրի փոխանցմամբ, Եսային Սամարա էր տարվել հոր ու որդու հետ: Որդու անունը չի նշվում, բայց հավանական է, որ նա իշխանի միակ որդի Մովսեսն էր, որն, ինչ խոսք, նույնպես գտնվելու էր Քթիչի պաշտպանների շարքում՝ հոր կողքին և նրա հետ էլ կիսելու էր իրենց բաժին հասած ճակատագիրը: Կարելի է ենթադրել, որ Մովսես իշխանը, ի տարբերություն հոր, 857-859թթ. մյուս քսորված հայ իշխանների հետ ազատվելով գերությունից և վերադառնալով հայրենիք, զբաղեցնում է հոր աթոռը»:

9-րդ դարում արաբների դեմ ազատագրական պայքար են մղել Առանշահիկների 2 ճյուղերը. առաջինը՝ Եսայի Ապունուսեն՝ Դիզակ գավառում, երկրորդը՝ Սահլ Սմբատյանը, Ատրնեստեղ, Յաման Արևելցին՝ Խաչեն գավառում: Եսայի Ապունուսեի իշխանանիստն էր Գորոզ ամրոցը, որտեղ հետագայում՝ 10-րդ դարում, հիմնադրվել է Դիզակի թագավորությունը:

Արաբների Բուղա ոստիկանը մեծ զորքով արշավում է Աղվանք, իսկ Ապունուսե իշխանն իր զորքով է պատասխարկում է լեռներում: Բուղան ապաստանում է Պարտավում և մի թուրք հղում Ապունուսեին, որ նա իջնի Քթիչ ամրոցից ու հանձնվի իրեն: Սակայն Արցախի քաջամարտիկ իշխանը նրան պատասխանում է մի բանաստեղծական թղթով. «Աշխարհակալների սովորությունն է արքունի հոգածությանը գնալ երկիրը, իբրև հնազանդների մոտ, վերցնել, թեթևացնել տառապալների նեղությունները, իբրև խնամարկուներ, և ոչ թե ավազակաբար ավարել, սրածելով ու գերեզմանները ավերակ դարձնել [երկիրը]: Եվ եթե դու արքունիքից եկել էիր խաղաղությունը պահպանելու, շենություն պիտի պարզեիր սրանց և ոչ թե ավերանք ու խառնակություն: Եվ արդ թող հայտնի լինի, որ ինչքան բավականանա իմ զորությունը և քանի դեռ կենդանի եմ, կընդդիմակայեմ տեր Աստծո ուժով ու զորությամբ և քեզ տեսնելու եմ ոչ թե սիրով ու խաղաղությամբ, այլ գեներով, աղեղով ու սրով, քաջ տղամարդկանցով և ընտիր երկվարներով: Եվ եթե դու ցանկանում ես ապրեցնել քեզ ու քո զորքը, արի ել այստեղից և [դուրս] գնա իմ [երկրի] սահմաններից: Ապա թե ջանաս զրկվել այս կյանքից՝ քո գայրության, կատաղության պատճառով և ոսկորներից ցրես անապատներում ու դառնաս երկրի գազանների, երկնքի թռչունների կերակուր, քո կամքը թող լինի, ես անպարտ եմ քո

արյան համար, մանավանդ որ մեծ բարեպաշտություն եմ համարում սպանել Աստծո թշնամիներին, ինչպես Մովսեսն Ամադեկին, Յեսուն Քանանացիներին, Սամուելն Ազագին և Դավիթը Գողիաթին, նաև ինչպես իսրայելացիներն սպանեցին այլազգիներին: Եվ Աստված սիրեց նրանց: Նույն կերպ կանեն քեզ և քո զորքի հետ: Արդ չեմ կամենում երկար խոսել քեզ հետ. քո ձեռքերում է խաղաղությունն ու խառնակությունը: Եթե, ինչպես ասացի, հեռանաս ինձանից, խաղաղություն կլինի, իսկ եթե ոչ՝ պատերազմ, կռիվ ու ճակատամարտ: Դու [կդառնաս] թիրախ, իսկ իմ աղեղը՝ խոցոտող, դու՝ ախոյան, իմ զինվորները՝ հաղթանակող, դու՝ ոսոխ, իսկ իմ զորքը քեզ դատապարտող, քո պատերազմը և մեր հաղթությունը, քո մարմինը և իմ նիզակը, քո պարանոցը և իմ սուրը, քո ստացվածքը՝ մենք նրա ժառանգորդ, քո ավարը՝ մենք ավարառուներ, դու ավազակ, մենք կողոպտիչներ, դու եղեգն, մենք դյուրավառ կրակ, դու հարդ, իսկ մենք դյուրությամբ փչող քամի, դու ծաղիկ, իսկ մենք քարշամեցնող խորշակ, դու պտղալից հանդ, մենք ապականող կարկուտ, դու շինվածք առանց հիման, իսկ ես հիմնվելու տապալող հեղեղ, դու լեշ, իմ զորքը հոշոտող գազան, որ պատառոտում է քո սրտի առագաստը, դու խաղալիք, իսկ մենք մանուկներ, որ բռնելով քո զորությունը, խաղում, կատակում ենք քեզ հետ և քո այդ ողջ հպարտության ու անբարեհաճության հետ. դու վայրի երե, մենք՝ որսորդներ, դու թռչուն, իսկ մենք բարձրությունից ցած ենք իջնում և ձգում որոգայթի մեջ, դու ծովի վիշապ, մենք՝ կարթ, քո քիմքից վեր ենք ձգում, քեզ անդունդների խորքից. դու իբրև եղջերու առանց եղջյուրների, մենք արծիվներ քո վերևում, քո այքերը կուրացնողներ, որ քո լեշը գցում ենք մեր ձագերին և խորշերում բնակվող աղվեսներին: Եվ ասա դարձյալ եմ ասում. անհաստատ է քո ունեցածը: Եվ մինչև որ քեզ վրա չվերցնես այն, ինչ խոսեցի քո պատգամավորների հետ ու ավելի ջանաս վտանգել մեզ՝ դու կընդունես վտանգավորը:

Ինչպես արդեն նկատվել է, «բոցաշունչ այդ նամակը տեղ-տեղ, ներքին ոգևորվածությունից վեր է ածվում ազատ բանաստեղծության՝ հանդիսանալով այն ժամանակներից մեզ հասած գրականության ամենաուշագրավ նմուշներից մեկը»: Ի դեպ, այս նամակը՝ «Պատասխանի առ ոստիկանն Արաբաց Բուղան վերնագրով, որպես բանաստեղծություն տպագրել է Պողոս Խաչատրյանը:

Մի քանի տարի անց՝ 855թ., Բուղան դավադրաբար կալանավորեց քուն մտած հայոց իշխաններին՝ այդ թվում նաև Ապունուսեին, և սպանեց բոլորին:

Յայ հին մատենագրության էջերում՝ Մովսես Կաղանկատվացուն շարունակող Մովսես Դասխուրյանցու, Յովհաննես Դրասխանակերտցու, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի, Վարդան Արևելցու, Մխիթար Այրիվանեցու, Ստեփանոս Օրբելյանի կողմից հիշատակվել է նաև Յաման Արևելցու (մոտ 850-մոտ 920) անունը՝ որպես Արցախի իշխան:

Շարունակությունը՝ հաջորդիվ

- Փավստոս Բուզանդ, Յայոց պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Ավախյանցի, Ե. 1987, էջ 246:
- Մատենագիրը հայոց, հտ. ժե, Ե., 2011, էջ 82:
- Փավստոս Բուզանդ, Յայոց պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Ավախյանցի, Ե. 1987, էջ 320:
- Անդ, էջ 320-322:
- Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., 1980, էջ 118:
- Տե՛ս Մատենագիրը հայոց, հտ. ժե, Ե., 2011, էջ 136-138:
- Տե՛ս անդ, էջ 162:
- Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Ե., 1989, էջ 190:
- Անդ, էջ 252:
- Անդ, էջ 256:
- Մովսես Խորենացի, Յայոց պատմություն, Բ, ը:
- Մովսես Խորենացի, Յայոց պատմություն, Գ, գ:
- Տե՛ս Մատենագիրը հայոց, հտ. ժե, Ե., 2011, էջ 72:
- Մատենագիրը հայոց, հտ. Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2153:
- Անդ, էջ 2172:
- Տե՛ս Մատենագիրը հայոց, հտ. Գ, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 357:
- Անդ:
- Մատենագիրը հայոց, հտ. ժե, էջ 104-105:
- Անդ, էջ 129-130:
- Մատենագիրը հայոց, հտ. Գ, էջ 127:
- Մատենագիրը հայոց, հտ. ժե, էջ 113:
- Անդ, էջ 269:
- Անդ, էջ 82:
- Անդ, էջ 262:
- Մեթոս, Պատմություն, արևելահայերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրու-

- թյունները՝ Գուրգեն Խաչատրյանի և Վանո Եղիազարյանի, Ե., 2005, էջ 71:
- Անդ, էջ 175:
- Տե՛ս Մատենագիրը հայոց, հտ. ժե, էջ 372:
- Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարազ Առաքելյանի, Ե., 1969, էջ 289:
- Անդ, էջ 105:
- Անդ, էջ 100:
- Անդ, էջ 101:
- Անդ, էջ 101-102:
- Անդ, էջ 176:
- Անդ, էջ 173:
- Մատենագիրը հայոց, հտ. 2, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 825-826:
- Տե՛ս անդ, էջ 813, 849:
- Անանուն Ջրուցագիր՝ Կարծեցյալ Շապուհ Բագրատունի, Պատմութիւն, թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Վարազ Առաքելեանի, Ե., 2011, էջ 125:
- Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 259:
- Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Ե., 1985, էջ 277:
- Ս. Բարխուդարյան, Արցախի, Շաքիի և Փառիսոսի թագավորությունները IX-X դարերում, Պատմա-բանասիրական հանդես, 1971, N 1, էջ 56:
- Գ. Ավագյան, Արցախյան աշխարհը Միհրանյան տոհմի վերացումից հետո, Լրաբեր հասարակական գիտությունների, 2012, N 1, էջ 5:
- Անդ, էջ 11:
- Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, էջ 279-281:
- Աս. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Ե., 1966, էջ 181-182:
- Գանձարան հայ հին բանաստեղծության, աշխատասիրությամբ Պողոս Խաչատրյանի, Ե., 2000, էջ 75:
- Այս մասին տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, էջ 297:

ԵՐԳՈՎ ԵՎ ՍԻՐՈՎ

40-ԱՄՅԱ ԱՐԳԱՍԱՐԵՐ ԶԱՆԱԴԱՐԷՆ

Երեխաների գեղագիտական դաստիարակության գործում մեծ դեր ունեն արվեստի դպրոցները, որոնք գործում են Արցախի Հանրապետության Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, մինչև պատերազմը՝ Հաղուրթի շրջաններում, Քարվաճառում, Շուշիում ու Բերձորում: Բռնազավթված Հաղուրթի և Շուշիի արվեստի դպրոցները վերակազմավորվել և այժմ գործում են Ստեփանակերտում:

Արցախում առաջին արվեստի դպրոցը բացվել է 1981թ. Ստեփանակերտում, որն անվանակոչվել է՝ ի պատիվ շուշեցի մեծ քանդակագործ Հակոբ Գյուրջյանի:

Դեկտեմբերի 26-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում տեղի ունեցավ հորեյանական համերգ՝ նվիրված Հ. Գյուրջյանի անվան արվեստի դպրոցի 40-ամյակին: Ներկա էին ԱՀ նախագահի տիկին Բ. Հարությունյանը, ԿԳՄՍ նախարար Լ. Ղարախանյանը, մշակույթի օջախների, արվեստասեր հասարակայնության ներկայացուցիչներ, դպրոցի շրջանավարտներ, ծնողներ:

Հանրահայտ վալսի հնչյունների ներքո համերգը բացեցին պարարվեստի բաժնի 5-րդ դասարանի աշակերտները, այնուհետև հերթով շարունակեցին դպրոցի տարբեր բաժինների սաները, շրջանավարտներ, որոնցից յուրաքանչյուրի անունը հնչեցնելուց առաջ համերգավարը թվարկում է հեղինակավոր մրցույթների, մրցույթ-փառատոների նրանց մեկ կամ մի քանի անգամ դափնեկիր լինելը. «Վերածնունդ», «Ամառեռու», «Իգարել» միջազգային, Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի, արցախյան կոմպոզիտորների ստեղծագործությունների մրցույթ-փառատոներ, ինչպես նաև՝ «Նովիե զվյորզի տանցա» (Յալթա), «Իգարյու նա դվուխ ինստրումենտախ» (Մոսկվա), «Օտկրիտայա եվրոպա» (Մոսկվա), «Ավա-Տենա» (Մոսկվա), Մոսկվայում առջանց կայացած «Պրեդա օդնա նա վսեխ» մրցույթներ:

Չորս տասնամյա կենսագրություն ունեցող Ստեփանակերտի արվեստի այս կրթօջախը հիմնադրվել է իր առաջին տնօրեն Յուրի Ալեքսանյանի ղեկավարությամբ: Աշխատում էր 8 դասատու, սովորում 45 աշակերտ: Տարիների հետ ավելացել են դասատուների ու աշակերտների թիվը, ինչպես նաև բաժինները: Անցած ժամանակահատվածում դպրոցի տնօրեններ են եղել Ալբերտ Սաֆարյանը, Էլմիրա Կարապետյանը, Ինա Հովսեփյանը, Էլվիրա Դավթյանը: 2012 թվականից մինչ այսօր Հ. Գյուրջյանի անվան դպրոցի տնօրենն է մշակույթի վաստակավոր գործիչ Էվելինա Լալայանը: Դպրոցն ունի բազմաթիվ բաժիններ՝ դասական, լարային, ժողովրդական, փողային, հարվածային, թատերարվեստ, կերպարվեստ, պարարվեստ, դեկորատիվ կիրառական արվեստ, քանդակագործություն, երգեցողություն: 40 տարվա ընթացքում դպրոցը կատարելագործվել է, նոր ստեղծագործություններով ներկայացել հանդիսատեսին: Տարվա ընթացքում դպրոցը կազմակերպում է 10-15 միջոցառում՝ նվիրված մշակույթի և արվեստի հայ և համաշխարհային նշանավոր գործիչների ծննդյան օրվան, տոն օրերին, որոնց ժամանակ ավելի տեսանելի է դառնում արվեստի դպրոցի աշակերտների և դասատուների ստեղծագործական աշխատանքը: Դպրոցի սաները շարունակում են բարձր պահել մշակույթային այս օջախի անունն ու պատիվը՝ մասնակցելով ինչպես դպրոցական միջոցառումների, այնպես էլ հանրապետական և միջազգային մրցույթների և մրցույթ-փառատոներ:

րի՝ զբաղեցնելով պատվավոր տեղեր՝ գրանպրի, առաջին, երկրորդ, երրորդ մրցանակներ:

44-օրյա պատերազմից հետո արվեստի դպրոցն արագորեն վերագտավ իրեն: Դեկտեմբերի 1-ից վերսկսել է գործունեությունը: Ճիշտ է, դժվար էր հունի մեջ ընկնել. մեր շեն բնակավայրերի և մարդկային անդառնալի կորուստների ցավը ընկճել էր բոլորին, բայց, քաջ գիտակցելով, որ ծնկած տեղից բարձրանալ պետք է սեփական ուժերով, և դրանում



արվեստի ուժը մեծ է (չէ՞ որ մշակույթն օգնում է մեզ ապրել և արարել, ինչպես խորհրդային հայտնի երգում է ասվում), դպրոցի ուսուցչական կազմը տնօրինության գլխավորությամբ լծվեց իր նվիրական գործին: Այսօր Հ. Գյուրջյանի անվան արվեստի դպրոցում դասավանդում է 50 դասատու, սովորում 425 աշակերտ:

Դպրոցի հորեյանը ևս մեկ առիթ է ի մի բերելու կատարածը և գնալու առաջ: Դրա լավագույնս արտահայտությունը հորելյանական համերգն է: Ինչքան շնորհալի երեխաներ կան այստեղ և շատերին էլ թողակել է: Տասնյակ, հարյուրավոր տաղանդավոր երեխաներ են աճել, որոնք շարունակել են իրենց կյանքը հաջողությամբ՝ դառնալով հայ մշակույթի լավագույն գիտակներ և նվիրյալ քարոզիչներ կամ էլ պատասխանատու և նպատակասլաց մարդիկ, պարզապես արվեստը հասկացող և գնահատող բարեկիրթ քաղաքացիներ:

Իր 40-ամյա գործունեության ընթացքում արվեստի դպրոցը թողարկել է հայտնի երաժիշտներ՝ Ռազմիկ Ամյան, Տիգրան Կարապետյան, Արսեն Գրիգորյան, Տիգրան Լալայան, Գարիկ Բալասանյան, Ռաուլ և Միեր Բաբայաններ և այլոք:

Դպրոցի հաջողությունները, ինչ խոսք, պայմանավորված են դասավանդող արհեստավար՝ անձնակազմով: Հորեյանական երեկոն առատ էր շնորհավորանքներով, շնորհակալագրերով, պատվոգրերով, ծաղկեփնջերով: ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը բարձր գնահատեց մշակույթի այս օջախի դերը. «Ամժխտելի է, որ մշակույթը միշտ էլ ազդեցություն է ունեցել մեր համընդգրկուն երջանկության, ներդաշնակության զգացողության վրա: Ամժխտելի է, որ մշակույթի նկատմամբ սեր առաջացնելու գործում աշխատում են կոլեկտիվներ, անհատներ, և այսօր իսկապես մեր մշակութային կյանքում մեծ իրադարձու-

թյուն է Հակոբ Գյուրջյանի անվան արվեստի դպրոցի 40-ամյակը: 40 տարեկան է դարձել չորս տասնամյակ մշակութային արժեքներ տարածած, 40 տարի երեխաների հոգու մեջ սեր, հեքիաթ ներդրած կրթամշակութային մի հաստատություն, որը պատերազմից հետո էլ շարունակել է պատվով կատարել իր գործը: Կոլեկտիվները կարողանում են հաջողությունների հասնել, եթե այնտեղ կան փոխըմբռնման մշակույթ և սկզբունքներ, որոնք ձևավորում են

դպրոցի ղեկավարությունը և ճիշտ ընտրված համակազմը, որ սերնդի մեջ գեղագիտական դաստիարակություն ներարկելու շնորհիվ մեր վարքակցները դառնում է մշակույթ սիրելի ու ստեղծելի»: Նախարարության անունից Լ. Ղարախանյանը խորհրդանշական նվեր հանձնեց դպրոցի տնօրեն Էվելինա Լալայանին՝ ստեղծագործական նվիրումի և բեղմնավոր, արդյունավետ աշխատանքի համար, շնորհակալագրեր՝ դպրոցի տնօրինությանը և մի խումբ նվիրյալ ուսուցիչներին, «Հայ երաժշտության հանրագիտարան» դպրոցին, որն ամփոփում է նաև այս դպրոցի երեկներին, և հանդաված է, որ այսօրվա գործիչներն էլ որպես երեկի մտնելու են այդ գրքի շարունակության մեջ:



Ստեփանակերտի քաղաքապետարանի մշակույթի, զբոսաշրջության, երիտասարդության հարցերի բաժնի պետ Կարինե Հարությունյանը նույնպես շնորհավորեց արվեստի դպրոցի հորեյանը՝ նշելով, որ 40 տարվա ըն-

թացքում անցել է արժանապատիվ ճանապարհ՝ լի վառ իրադարձություններով և ծեռքերումներով: Արվեստի դպրոցը, հիրավի, մշակույթի մի կենտրոն է, որն օգնում է երեխաներին բազմակողմանի զարգանալ, ձգտել բարության և գեղեցկության իղեկներին: Քաղաքապետ Դավիթ Սարգսյանի անունից նա պատվոգրեր հանձնեց մի խումբ դասատուների, որոնք իրենց հոգու հարստությունը, տաղանդի բոլոր երանգները, գեղեցիկի հետ շփվելու գեղեցկությունը տալիս են երեխաներին:

Դպրոցի տնօրեն Էվելինա Լալայանը հպարտության զգացումով նշեց, որ 40 տարիների ընթացքում դպրոցը հոջողությամբ է հաղթահարել բազում դժվարություններ, հաղթահարելով դրանք՝ զարգացել ու դարձել է մշակութային արժանավոր կենտրոն, որը պատվով ներկայանալով հայրենիքում՝ Արցախը ներկայացնում է նաև օտար երկրներում՝ մասնակցելով տարբեր մրցույթների և արժանանալով մրցանակների: Տնօրենը շնորհակալություն հայտնեց ուսուցիչներին, աշակերտներին և այն մարդկանց, ովքեր ներդրում են ունեցել արվեստի դպրոցի զարգացման գործում: Խորին երախտագիտություն՝ ԿԳՄՍ նախարարությանը և քաղաքապետարանին, որոնք միշտ դպրոցի կողքին են և աջակցում են: Դա պարտավորեցնում է աշխատել ավելի մեծ եռանդով և ունենալ նորանոր հաջողություններ, նշեց նա:

Հորեյանական համերգն ավարտվեց խորհրդանշական համարով: Դպրոցի աշակերտների և դասատուների երգախմբով կատարեց թաղավարիցի նշանավոր բանաստեղ Աշոտ Գրաշու բառերով և մեծ երգահան Առնո Բաբաջանյանի երաժշտությամբ ստեղծված «Ազգ փառապանծ» երգը, որին ծայրանակցեց դահլիճը: Մեր ժողովրդի համար բախտորոշ այս ժամանակաշրջանում մեզ հույժ պետք են այսպիսի հանճարեղ ստեղծագործություններով ոգեշնչվելը և կյանքում շարժվելը:

«Լուսարար»-ը տարվա իր վերջին համարը սկսում և ավարտում է այդ երգի տողերով՝ որպես ամառային բարենաղթանք և ապագայի հույս:

Բարձրացնենք սիրով մեր սուրբ գավաթը հանուն հայության, թող ամառ պահի մա իր հավատը հուր եւ հավիտյան:

Ուր լինենք հավետ քո հուր կարտը տունն է հայրենի:

Մաշտոցի հզոր լեզուն վառ հույսն է ամեն մի հայի:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ՇՆՈՒՆՈՐ:

Ս. ԽԱԶՍՏՐԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ
Ս. ԽԱԶՍՏՐԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

Մտեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ զրազրություն վարելու պարտավորությունն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 30.12.2021թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: